



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84-3

U-66

2256

1203

~~96 - 3/xij 77~~

111

112

2011

400

ԱՂԱԻՆԻ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻԻՆ

2003

1845

1845

1845

84-3

Impressum

U-66

ԱՂԱԽՆԻ

Այ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Պ. ԲՐՈՍԲԷՐ ՄԷՐԻՄԷ

ԳԱՂՂԻՍՑԻՈՅ

1009
5277

9

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1863

685

STATIONER

22

STATIONER

STATIONER

STATIONER

STATIONER

STATIONER

1868

Ա Չ Դ

Յուսալով որ ընտիր վիսպասանութեանց ընթերցումն օրէ օր աւելի ախորժելի կ'ըլլայ ազգերնուս, յետ Բագմալիայի էջերուն մէջ 'ի լոյս ընծայելու՝ նաև առանձին կը հրատարակենք Ադառնի վիսպասանութիւնս :

Հեղինակն է Պ . Բրտսբէր Մէրիմէ կենդանի մատենագիրը, որ 1844էն 'ի վեր Գաղղիոյ շեմարանն ընդունուած է : Ըստ այլոց բազում անուանի հեղինակաց՝ փաստարանութեամբ սկսաւ իր ընթացքը . յետոյ քաղաքագէտ կենաց և առաւել ևս գրականութեան պարապեցաւ :

Թողունք յիշելու իր խուռն յօդուածներն այլ և այլ օրագրաց մէջ, գաղղիացի ընտիր հեղինակաց տպագրութիւնքը և զանազան վայելուչ գրուածքներ, գլխաւորապէս երկու կը բաժնուին իր բազմաթիւ երկասիրութիւնքը . հնագիտականք, ինչպէս Ռշէկոյրուարիւնք 'ի հարաւային Գաղղիա,

յարեւմտեան Գաղղիա, յՕվեաներ և ՚ի Միսոն
զեւ. Ոչդևորոշիւն ՚ի Գորսիգա. Պատմական
յիշատակարանք, և այլն. վիպասանականք,
իւնչպէս Գամակոյ, Հոգիք քաւարանի, Տե-
սի կարոյոսի ԺՍի, Գոլեոյի ժակոսիտը,
Սևօրև կարոշրական, Սրսեկ կիչոյ, և այլն.
ամէնն ալ գեղեցիկ, և գեղեցկագոյն ՚ի
նոսա՝ Ադաւնիկ (Գորսմպա), որ Գորսիգայի
բնակչաց բարուց անանկ յատուկ ու ճշ-
գրիտ նկարագրութիւնն է, որ ըստ ասե-
լոյ ժամանակակից երեւելի քննարանի մը՝
Ադաւնիկ կարգացողը կղզին դացած կ'ըլ-
լայ: Շատ կարգացուած է և ցարդ կը կար-
գացուի այս վիպասանութիւնը. աշխոյժ
կենդանութիւն մը, պարզութիւն խառ-
նեալ գորովաշարժ տեսարանաց հետ,
միակերպ ընթացք դէպ ՚ի նպատակը հան-
դերձ բաղում՝ դանադանութեամբ, և բնա-
կան ու սահուն գրութիւն մը՝ իր նշանաւոր
ձիրքն են: Արէժիմնդրութեան կիրքն իր
ամէն սաստիկութեամբը նկարագրելու ա-
տեն՝ ընթերցողաց կը թողու հեղինակը
դան դատապարտելը: Հարկ կը համարիմք
ծանուցանել որ երբեմն ըստ պիտոյից
ճիշդ հաւատարմութիւն չենք պահած թարգ-
մանութեանս մէջ:

Պ. Մէրիմէ այսօրուան օրս վաթսնա-
մեայ է:

Ա Ղ Ս Ի Ն Ի

Ա.

Հոկտեմբերի առջի օրերուն 181 . .
աարւոյն՝ իռլանտացի սրբ թովմաս Նէ-
վիլ հազարապետն , որ անդդիացի բա-
նակին նշանաւոր պաշտօնակալաց մէկն
էր , խապիոյ ճամբորդութենէն դառ-
նալով իր միածին աղջկանն հետ՝ հա-
սաւ Մարտէլլ ու Պօլոյ պանդոկն իջաւ :
Հետզհետէ խապիա դացոյ անթիւ ճա-
նապարհորդաց զարմանքը՝ կամաց կա-
մաց այսօրուան օրս անտարբերութեան
փոխուած է , անանկ որ շատ ճանա-
պարհորդք նշանաւոր անձինք երևնա-
լու համար՝ բնաւ զարմանք չեն ցուցը-
ներ : Ասոնցմէ էր հազարապետին դուս-
տրը՝ Լիւդիա օրիորդը : Ռափայէլի Ա.)

լակերպութիւնը¹ միջակ բան մը երե-
ցեր էր իր աչքին, և բռնկած վետուքը՝
հազիւ հազ Պիրմինկէմի գործարանաց
կրակարաններէն վեր: Իր խապիոյ չը-
հաւնելուն պատճառ կու տար՝ տեղա-
կան յատկութիւն և որոշիչ հանգա-
մանք չունենալը: Ով որ կրնայ թող
հասկընայ այս երկու բառերը, քանի մը
տարի առաջ ես ալ կը հասկընայի, բայց
այսօրուան օրս չեմ ըմբռներ: Ճանա-
պարհորդութենէն առաջ Լիւդիա օրիոր-
դը կը կարծէր անանկ բաներ տեսնալ
Ալպեան լեռներէն անդին, որ ոչ ոք տե-
սած ըլլար իրմէն առաջ, սակայն ամէն
տեղ իր հայրենակցաց հետքը կը տես-
նէր, և նոր բան մը չգտնելուն վրայ
յուսահատած՝ վերի ճանապարհորդաց
կարգն անցաւ: Իրօք մարդուն սիրտը
շատ կը կտարի՝ երբոր խապիոյ հրաշա-
լեաց վրայ խօսելու ատենը, դիմացինն
հարցընէ իրեն թէ «Սա քաղքին առ
պալատին մէջ Ռափայէլի առ պատկե-
րը տեսած ես, խապիոյ մէջ աղուոր

1. Ռափայէլի ուրպինացոյ Ալպիերպո-Ռեան
պատկերը՝ նկարչութեան առաջին հրաշալիքը սե-
պուած է և կը պահուի Ատտիկանի մէջ:

բան մը կայ 'նէ' ան է » . և ինքն անհողու-
թեամբ զանիկայ տեսած չըլլայ : Ուս-
տի որովհետև դիւրին բան չէ ամէն բան
տեսնալ , այդպիսիք անխտրաբար վար
կը զարնեն *ն* և է բան :

Լիւդիա օրիորդն անգամ մը շատ
պզտիկ ինկաւ Պօլոյ պանդոկին մէջ .
Սէնեի քաղաքին ¹ կիւկլոպեան կամ
պելապեան դրան աղնիւ ծրագիր մը
շինած էր , և մտքէն չէր անցնէր թէ իր-
մէն առաջ մարդ ծրագրած ըլլար զա-
նիկայ . բայց Ֆրէնսէզ Ֆէնուիք տիկնոջ
հանդիպելով Մարտէյլի մէջ , անոր յի-
շատակի տեսրին (Album) մէջ նուա-
զի մը և թուումս ծաղկի մը մէջ տե-
սաւ նկարուած զանիկայ Սիենայի դե-
ղին հողուն ներկովը : Լիւդիա մէկէն սե-
նեկապան աղախնոյն տուաւ իր ծրա-
գիրն և պելապեան շէնքերուն վրայ
համարմունքը կորսնցուց :

Նոյն կարծիքներն հաղորդեր էր իր
հօրը՝ Նէվիլ հազարապետին , որ իր կը-
նոջ մահուրնէն ետև՝ աղջկանն աչքովը
կը տեսնար ամէն բան , և սաստիկ կ'ար-

1 . Սէնեի համայ տերութեան մէջ կ'եյնայ :

համարհէր զիտալիա Լիւզիան ձանձրա-
ցընելուն համար, անոր համար ալ ան-
կէց աւելի ձանձրալի երկիր չէր գտնար
աշխարհիս մէջ: Իրաւ նկարներու և ար-
ձաններու դէմ չէր խօսէր հազարապե-
տը, բայց որսը շատ քիչ է կ'ըսէր և
Հռոմայ դաշտին մէջ տասը փարասխ-
տեղ առաջ երթալու է բաց օդուն մէջ
որ կարենաս քանի մը խեղճ կարմիր
կաքաւներ որսալ:

Մարտէյլ հասնելուն երկրորդ օրը՝
Նէվիլ սեղանի հրաւիրեց Էլլիս հարիւ-
րապետն որ ատենօք իր աջակից պաշ-
տօնակալն (Adjutant) եղած էր: Էլ-
լիս վեց շաբաթ Գորախդա կղզին կեցեր
էր ու անկից կը դառնար. աշխայծ նը-
կարագրութեամբ պատմեց օրիորդին
աւազակաց պատմութիւն մը, որ բնաւ
չէր նմանէր Հռոմէն Նեապոլսոյ ճամ-
բուն վրայ եղած գողաց պատմութիւն-
ներուն: Աղանդերի (Չէրէզ) միջոց
երկու զինուորականները մինակ մնա-
լով Պորաոյի զինուոյ շիշերը առջևնին
դրած՝ որսի վրայ խօսք բացին, և հա-
զարապետն խմացաւ որ Գորախդայի մէջ
ամէն տեղէ աւելի առատ, բնափր ու

տեսակ տեսակ որս կայ: — Շատ կինձ
կայ հոն, զբուցեց հարիւրապետը. բայց
սորվելու է զանազանել զանոնք ընտա-
նի խողերէն, որ շատ կը նամանին ա-
նոնց. ապա թէ ոչ եթէ խող մը սպան-
նելու ըլլաւ, չես կրնար խալըսիլ խող-
արածներուն ձեռքէն: Վերէն վար զի-
նեալ դուրս կ'ելլեն անտառին մէջէն որ
խրենք մաքի կը կոչեն, կենդանւոյն զի-
նը կ'առնեն քեզմէ ու կը խնտան վրայ:
Կայ նաև վայրի ոչխար, այլանդակ կեն-
դանի մը, որ աղէկ որս է, բայց որսալը
դժուար: Եղջերու, այծեամն, փասիան,
կարաւիկներ, և ուրիշ այնչափ երէ վայ-
րի՝ որ համրանքը չկայ: Թէ որ հրացան
կ'ուզես պարպել նէ, հազարապետ,
Գորսիգա դնա. հոն ամէն տեսակ որսի
վրայ կրնաս նշան առնել, սարիկէն սկը-
սեալ ինչուան մարդու վրայ:

Թէյի միջոցը՝ հարիւրապետը նորէն
զուարճացուց զօրիորդը խոստորնակ
վրէժխնդրութեան՝ մը պատմութեամբ

1. Խոստորնակ վրէժխնդրութիւն (Vendetta tran-
sversale) կը կոչեն Գորսիգացիք երբոր վրէժը թըշ-
նամանողին մերձաւոր կամ հեռաւոր ազգականէն
կ'առնեն:

բը, որ առջի պատմութենէն աւելի նոր
օրինակ էր. և անոր զարմանքը բարնկ
ցուց Գորսիգայի վրայ, երկրին վայրենի
տեսքը նկարագրելով՝ աննման ուրիշ
աշխարհաց, բնակչաց նախաախալ բար
քը, հիւրասիրութիւննին ու նահապե
տական կենցաղնին: Ետքը ընծայ ըրաւ
աղջկան պզտի դաշոյն մը, գեղեցիկ ձե
ւով և աղուոր պղնձի կոթով՝ բայց ա
ւելի նշանաւոր անով, որ հռչակաւոր
աւագակ մը սուեր էր զայն իլլիսի, ա
պահովցընելով որ չորս մարդու մար
մինը խոթուած էր: Լիւղիա գօտին
անցուց զանիկայ, գիշերը անկողնին
քովի ստուին վրայ դրաւ, և պառ
կելէն առաջ երկու անգամ պատե
նէն գուրս քաշեց: Հազարապեան ալ
մտքին մէջ երևակայեց որ վայրի ոչ
խար մը սպաններ էր և տէրը կենդան
ւոյն գինը կը պահանջէր իրմէ. սիրով
կը վճարէր զայն Նէվիլ, որովհետև հե
տաքրքրական կենդանի մըն էր՝ կինճին
նման, եղջերուի եղջիւրներով և վա
սիանի պոչով:

Երկրորդ օրը նախաճաշկի վրայ հա
զարապեան իր աղջկան՝

— Էլլիս կ'ըսէ թէ, զրուցեց, շատ
զուարճալի է որսորդութիւնը Գորսի-
զայի մէջ. թէ որ հեռու չըլլար նէ, կ'ու-
զէի տասնըհինգ օր մը հոն անցընել:

— Ինչո՞ւ չէ, պատասխանեց Վիւզիս,
ինչ արգելք կայ Գորսիզա երթալու:
Դու կ'որոտաս, ես կը ծրագրեմ. ինչպէս
կը փափաքիմ յիշատակի տետրիս մէջ
նկարել ան քարայրն ուր Էլլիս ըսաւ թէ
Պոնաբարդէ տղայութեան ատենը կ'եր-
թայ եղեր ուսման ետեւէ ըլլալու:

Թերևս այս առաջին անգամն էր որ
հօրը փափազին զլուխ կը ծռէր աղջի-
կը: Զարմացաւ հազարապետն ասանկ
անկարծելի դէպքի մը վրայ. և խոհե-
մաբար՝ սկսաւ դժուարութիւններ հա-
նել՝ Վիւզիոյ ինքնահաճ կամքը դրդուե-
լու համար. երկրին վայրենութիւնը
մէջ բերաւ, և թէ դժուարին էր կա-
նանց ճանապարհորդել հոն. սակայն
Վիւզիս պատասխանեց որ բանէ մը չէր
փախնար, ձիով ճամբայ ընելէն աւելի
ախորժելի բան չկար իրեն համար, բայց
օդու մէջ պառկիլն ալ զուարճութիւն
էր. ապա թէ ոչ կ'ըսէր՝ փոքր Ասիա
կ'երթամ: Զերկնցընենք, ամէն ընդդի-

մութեան պատասխան գտաւ . անգղիա-
ցի կանայք բնաւ ոտք կոխած չըլլալով
Գորախոյա , պէտք էր որ ինքն երթար :
Ի՞նչ երջանակութիւն պիտի զգար երբ
Լոնտրայի Ս . Յակոբ հրապարակը դար-
ձած՝ կարենար իր յիշատակի տեսրը
ցուցնել : — Ինչո՞ւ համար , աղնիւ օ-
րիորդ , տեսրիդ երեսը կը դարձնես որ
չկարենամ տեսնել մէջի գեղեցիկ ծրա-
դիրը : — Բան մը չարժեր . գորախոյայի
հռչակաւոր աւազակի մը կերպարանքն
է ծրագրածս , որ մեզի առաջնորդու-
թիւն ըրաւ : — Ի՞նչ կ'ըսես . Գորախոյ
գացիր : . . .

Ան միջոցին Գաղղիոյ և Գորախոյայի
մէջ շոգենաւ չէր բանէր . ուստի նաւ
մը բնատուեցին դէպ 'ի այն կղզին ճամ-
բորդ : Նոյն օրը մէկէն հաղարապետը
Բարիդ գրեց ետ առաւ սենեակ բռնելու
տուած հրամանը , և դաշնագրեցաւ գոր-
ախոյայի կօշեղի մը հետ , որ դէպ 'ի Ս . յաչ-
չիոյ ճամբայ ելլելու վրայ էր , և երկու
սանկ նանկ սենեակներ ունէր : Ճամբու-
պաշարներն առին . նաւապետն երդ-
մունք ըրաւ որ ծերունի նաւաստի մը
ունէր վարպետ խոհարար . խօսք տուաւ

օրիորդը գոհ ընելու, և յաջող քամի ու
հանդարտ ծով գուշակեց: Հազարա-
պեանն՝ աղջկան վրայ տալովը՝ խօսք դը-
րաւ նաւապետին հետ որ ուրիշ ճամ-
բորդ չառնէ, և նաւը կղզւոյն ամուսն-
ներէն քալցընէ, որպէս զի լերանց տես-
քը կարենան վայել:

Բ

Ճամբորդութեան օրն հասաւ. ամէն
բան ծրարուած ու աւտուրնէ նաւը դը-
րուած էր. և կօշեղն երեկոյեան անոյշ
հովովն աւազասաները պիտի բանար:
Հազարապետը ժամանակն անցընելու
համար՝ աղջկանն հետ Գաւնըպիէն ճե-
մելիքը ժուռ կու գար. մէյ մ'ալ նա-
ւապետը մօտեցաւ ու հրաման խնդրեց
իր մէկ ազգականը նաւ առնելու, որ իր
անդրանիկ որդւոյն կնքահօր հօրեղբօր
թոռն էր, և հարկաւոր գործի համար
ստիպուած ըլլալով հայրենիքը՝ Գորսի-
գա գառնալու, ուրիշ պատրաստ նաւ
չէր գտած: — Ախորժեղի երիտասարդ
մ'է, կը զրուցէր Մաղդէի նաւապետը,

զինուորական, արքունի պահապանաց
հետևակ որսորդներուն պաշտօնակալ,
և այսօրուան օրս հազարապետ ալ ե-
ղած կ'ըլլար՝ թէ որ մէկալը դեռ կայսր
ըլլար:

— Չինուորական է նէ, ըսաւ հազարա-
պետը. և երբոր վրայ պիտի բերէր
թէ կը հաւանիմ, Լիւդիա անգղիերէն
խօսքը կարեց.

— Հետևակ զօրքի պաշտօնակալ,
դրուցեց (հայրը ձիաւոր զօրքէ ըլլալով
Լիւդիա ուրիշ զինուորութիւնները կը
քամահրէր). ո՞ գիտէ թէ անկիրթ մարդ
մը չէ, ո՞ գիտէ թէ ծովը պիտի չբռնէ
զինքն ու ճամբորդութեան վայելքը
քթերնէս բերներնէս պիտի չհանէ:

Նաւապետը բառ մը չէր գիտէր անգ-
ղիերէն, բայց աղջկան շրթանց ծը-
ռուածքէն բանն հասկընալով, սկսաւ
տեղն 'ի տեղօք դովեատ մը ազգակա-
նին վրայ. որուն վերջաբանն այս եղաւ
որ կսկիկ մարդ էր, գաբորայի¹ ցեղէ
էր, և թէ ամենեին նեղութիւն չէր տար
իրենց, որովհետև անանկ անկիւն մը

1. Գաբորալ բառը զինուորական առմունքով կը
'նշանակէ' հնգապէս:

կը տրուէր իրեն նաւուն մէջ, որ և ոչ աչքի զարնէր :

Հազարապետն ու Նէվիլ օրիորդը զարմացան անանկ ազգատոհմեր ըլլալուն Գորսիգայի մէջ, որ որդւոց որդի հնգապետ ըլլան . և որովհետև հետեակ զօրքի հնգապետ էր, մտքերնին դրին թէ անիկայ աղքատ մը ըլլայ՝ որ նաւապետը ողորմութեան համար ձրի կը տանէր : Թէ որ պաշտօնակալ ըլլար, հարկ էր հետը խօսիլ՝ հետն անցընել օրերնին, սակայն հնգապետի մը խօսքը չէր ըլլար, բայց եթէ երբ իր խմբին գլուխ կեցած՝ սուխնները հրացաններուն վրայ չուզած տեղը կը տանի զմարդ :

1002
5977

— Ծովէն կը բռնուի ազգականդ, հարցուց օրիորդը պաղ կերպով մը :

• — Բնաւ երբէք . ապառաժի պէս ամուր սիրտ ունի ծովու ու ցամաքի վրայ :

— Մնանկ է նէ, կրնաս հետդ առնել, ըսաւ Վիւզիա :

— Կրնաս առնել, կրկնեց հազարապետն ու նորէն սկսան ժուռ դալ :

Իրիկուան հինգին Մադդէի նաւապետն եկաւ տանելու զիրենք : Նաւահան, զըստին մէջ նաւապետին մակոյկին քովը

բարձրահասակ երիտասարդ մը տեսան
կապոյտ լօղիկ մը հազուած, զոր վե-
րէն վար կոճկեր էր, դէմքն արևէն ե-
րած, աչքերը սև ու աշխոյժ. խակ կեր-
պը՝ համարձակ ու կրակոտ: Բարև
տուաւ հազարապետին և շնորհակալ
եղաւ ըրած մարդասիրութեանը:

— Ուրախ եմ որ ծառայութիւն մը
կրցայ ընել, ըսաւ հազարապետը բա-
րեկամական ձայնիւ և մտաւ մակոյկը:

— Պահանջող մարդ չերևար այդ
անդդիացին, ըսաւ այն ատեն ցած ձայ-
նիւ երիտասարդը նաւապետին:

Նաւապետը նշանով մը իմացուց որ
անդդիացին խտալերէն կը հասկընար և
արտաքոյ կարգի մարդ մ'էր: Երիտա-
սարդը ժպտեցաւ, ձեռքը ճակտին վրայ
դրաւ, որով կ'ուզէր իմացընել թէ Անդռ
դիացւոց բոլորին ըզեղն ալ ուրիշ կերպ
չինուած է. և նաւապետին քովը նստե-
լով օրիորդին կը նայէր:

— Շատ բարեձև են դադդիացի դի-
նուորք, ըսաւ հազարապետն աղջկան
անդդիերէն. անոր համար դիւրաւ պաշ-
տօնակալ կ'ըլլան:

Ետքը դադդիերէն հարցուց երիտա-
սարդին.

— Խնդրեմ, ո՞ր վաշտին մէջ ծառայ
ու՞թիւն ըրած ես :

Մնիկայ արմուկովը մէջ մը դպաւ նա,
ւապեալին, և ծիծաղը բռնելով՝ պա-
տասխանեց որ պահակապան զօրաց
հետևակ որսորդներէն էր, և հիմա 7 դ
թեթերնի՞թաց վաշտէն էր :

— Վաթէրլուի պատերազմին մէջ
դանուեցա՞ր. բայց դեռ ծաղկահասակ
ես :

— Միայն հոն պատերազմեր եմ :

— Կրկին պատերազմ է անիկայ,
դրուցեց անգղիացին :

Գորսիդացին շրթունքները խածաւ :

— Հայր իմ, ըսաւ օրիորդն անգղիե-
րէն, հարցուր թէ արդեօք Գորսիդացիք
շատ կը սիրեն իրենց Պոնաբարդը :

Երիտասարդն հազարապետին թարդ-
մանու՞թեանը չսպասած, անգղիերէն
պատասխան տուաւ .

— Գիտեա, ազնիւ օրիորդ, որ մար-
դարէն իր երկրին մէջ պատիւ չունի . .
մենք Գորսիդացիքս թերևս Գաղղիա-
ցւոցմէ քիչ կը սիրենք զՆաբոլէոն : Իսկ
ինձի գալով, թէպէտ ատենօք մեր աղ-
գատահմերն իրարու թշնամի եղած են,

եա կը սիրեմ զինքը ու կը զարմանամ
վրան :

— Անգղիերէն կը խօսիս , ըսաւ հա,
զարապետը :

— Այսինքն կը կազամ , ինչպէս որ
կը լսէք :

Անգղիա խնտաց և զարմացաւ հնգա-
պետի մը կայսեր հետ թշնամի ըլլա-
լուն : Գորսիգայի արտաքոյ կարգի յատ-
կութեանց մէկը սեպեց այս բանս , և
միտքը դրաւ իր օրագրութեան մէջ ան-
ցընել :

— Արդեօք գերի դացիր Անգղիա ,
հարցուց հազարապետը :

— Ոչ երբէք . պզտիկուց Գաղղիա
սորվեցայ ձեր լեզուն անգղիացի գե-
րիէ մը :

Ետքը օրիորդին դառնալով ,

— Մաղդէի նաւապետը զրուցեց ին-
ծի , ըսաւ , որ խտալիայէն կու գար . ան-
տարակոյս մաքուր թոսգաններէն կը խօ-
սիս . վախեմ քիչ մը դժուարութիւն
պիտի քաշես մեր գաւառական լեզուն
հասկընալու :

— Աղջիկս խտալիոյ ամէն գաւառա-
կան լեզուները կը հասկընայ , պատաս-

խանեց հազարապետը . լեզուաց մասն
նաւոր յարմարութիւն ունի , ինծի չը
նամանիր : — Իսկ դու վեց ամսուան ար
ձակո՞ւրդ առեր ես արդեօք :

— Չէ . կէս թոշակով առժամանա
կեաց հանդիստ տուին ինծի . անշուշտ
վաղէրլուի մէջ պատերազմելուս և Նա
բոլէոնի հայրենակից ըլլալուս համար :
Անյոյս և անարժատ կը դառնամ հայ
րենիքս :

Ըսաւ և հառաչանօք երկինք նայե
ցաւ :

Հազարապետը դրպանէն ոսկի ստակ
մը հանեց , և մատուրներուն մէջ խաղ
ցընելով , կը մտածէր թէ ինչպիսի քա
ղաքավարական խօսքով մը երխտասար
դին ձեռքը դնէր զայն :

— Ինծի ալ կէս թոշակ կապեցին , ը
սաւ զուարթութեամբ . . . բայց դու քու
կէս թոշակովդ ծխախոտ ալ չես կրնար
դնել . առ սըւիկայ , հնգապետս :

Եւ կը ջանար գորսիգացւոյն դոյ
ձեռքը խոթել , որ նաւակին եղերքը
կռթընցուցած էր :

Երխտասարդը ամօթէն կարմրած
չրթունքները խածաւ , և կուրծքը վեր

անկելով՝ բարկութեամբ պատասխա-
նելու վրայ էր. բայց յանկարծ կերպը
փոխելով՝ բարձրաձայն ծիծաղեցաւ :
Իսկ հազարապետն ոսկին ձեռքը՝ ապ-
շած մնաց :

— Հազարապետ, ըսաւ ան տունն ե-
րիտասարդը ծանրութեամբ, ներէ որ
երկու խրատ տամ քեզի : Առաջինը, որ
ոչ երբէք գորսիգացույ մը ստակ տաս,
որովհետև հայրենակիցներէս շատն ան-
քաղաքավարութեամբ երեւոյ կը նե-
տեն զայն. երկրորդ, ուրիշի աստիճանը
գիտցիր ու անանկ կոչէ զինքը : Գու զիս
հնդապետ կը կոչես, բայց ես տեղա-
կալ ապայ եմ. մեծ տարբերութիւն մը
չկայ, սակայն . . .

— Տեղակալ, ըսաւ անգղիացին, տե-
ղակալ. հապա նաւապետն ըսաւ ինծի
որ հնդապետ ես դու և հայրդ և բոլոր
ազգատոհմդ :

Աս որ լսեց երիտասարդն, ետև ետև
կնալով անանկ կը ճաթէր խնտալէն,
որ նաւապետն և երկու նաւաստիքն ալ
սկսան սաստիկ ծիծաղիլ :

— Շատ զուարճալի է աս շփոթու-
թիւնը. հիմա հասկըցայ իրը : Իրաւքը

նէ իմ հարքս գարարայ էին, բայց ոչ
զինուորական. 1100 թուականին՝ կըզ-
գւոյն քանի մը գեղերը լեռնական իշ-
խաններու բռնաւորութենէն ապստամ-
բելով, գլխաւորներ ընտրեցին իրենց և
գարարայ անուանեցին որ հնգապետ
այ ըսել է: Ստոնց ցեղերէն իջնողները
պատուաւոր են մեր կղզւոյն մէջ:

— Թողութիւն ըրէ, պարոն, ըսաւ
հազարապետը, սխալմանս պատճառն
իմացար:

Եւ ձեռքն երկնցուց անոր:

— Իմ հպարտութեանս պատիժն է,
ըսաւ երիտասարդը ժպտելով և բարե-
կամարար անգղիացւոյն ձեռքը սխմե-
լով. մի վախեր՝ սիրտս չեմ դներ: Օրսոյ
տէլլա Ռէպպիա է իմ անունս, կէս թու-
շակով տեղակալ սպայ. և եթէ ինչպէս
որ երկու աղուոր շուներդ տեսնելով
կը դուշակեմ՝ որսորդութեան համար
Գորսիգա կ'երթաս, շատ սիրով կ'ըն-
կերեմ քեզի մեր անտառաց և լեռնե-
րուն մէջ... բաւական է որ մտցած
չըլլամ զանոնք, վրայ բերաւ հառա-
չելով:

Սս միջոցին նաւուն քովն հասան.

տեղակալը ձեռք տուաւ Լիւդիայի, եւ
քը օգնեց հաղարապետին սանդուխէն
վեր ելլելու: Սըր թովմաս շատ ամբշյած
ըլլալով սխալմանը վրայ, կը մտածէր
ինչ կերպով մուցընելու իր անքաղա-
քավարութիւնն երիտասարդին՝ որ եր-
կոտասաներորդ դարու մարդ էր. ուս-
տի առանց հարցընելու աղջկանը, ընթ-
րիքի հրաւիրեց զտեղակալը՝ նորէն նո-
րէն ներումն խնդրելով և ձեռքը թօթ-
վելով: Լիւդիա քիչ մը ընքուխները ծը-
ռեց, բայց որովհետև հիւրը տհաճելի
կերպ չունէր՝ ձայն չհանեց. մանաւանդ
որ կը սկսէր աղնուականութեան շո-
շորդ մը երևակայել անոր վրան:

— Տեղակալդ տէլլա Ռէպալիա, ըստ
անգղիացին՝ ձեռքը Մատէրայի դին-
ւով լեցուն դաւաթ մը բռնած, հայրե-
նակիցներէդ շատերը տեսայ եւ Սպա-
նիա, որ հռչակաւոր արձակամարտ զօր-
քէն (tirailleurs) էին:

— Այո, անոնցմէ շատերը հոն մը-
նացին, պատասխանեց տեղակալը ծանր
դէմքով:

— Ոչ երբէք պիտի մոռնամ վիզդո-
րիայի պատերազմին մէջ գորսիգացի

Նոկատի մը (bataillon) ցըցուցած կըտ
ըրճութիւնը : կուրծքս կը յիշեցընէ ին-
ծի զայն : Բոլոր օրը պարտէզներու մէջ
ցանկերու ետև պահուրտած, զէնքեր-
նին պարպեր էին և շատ մարդ ու ձի
մեռուցեր մեզմէ : Երբոր նահանջն որո-
շուեցաւ, ասոնք միացան ու արագա-
բար ետ կը քաշուէին : Մենք կը յուսայ-
ինք դաշտի վրայ վրէժնիս առնել .
բայց կտրիճները քառակուսի ձևացած
էին ու ճար շկար բաժնելու զանոնք :
Քառակուսւոյն մէջ տեղը (դեռ աչքիս
առջև կը տեսնամ) պաշտօնակալ մը
պզտի սև ձիու մը վրայ հեծած էր . կայ-
սերական արծուոյն քովը կեցած՝ սի-
կարը կը ծխէր իբրև թէ սրճանոցն ըլ-
լար : Երբեմն երբեմն Նոկատին երաժըշ-
տութիւնը պատերազմական երգեր կը
հնչեցընէր՝ իբրև թէ յաղթանակ գոչե-
լու համար վրանիս : . . . Չիաւորներէս
երկու խումբ վրանին վաղել տուի : . . .
Ի՞նչ օգուտ . վիշապաղօրքս (dragons)
փոխանակ քառակուսին մէջտեղէն ճրղ-
քելու՝ կողմնակի դացին առաջ, ետքը
կէս կըոր մը ընելով՝ խառնակած խան-
գարած ետ դարձան և ձիերէն ոմանք

առանց ձիաւորի էին... և այն անի-
ծած երաժշտութիւնը չէր դադրէր: Եր-
բոր ջոկատին վրայէն փարատեցաւ ծու-
խը, նորէն տեսայ նոյն պաշտօնակալն
արծուեկիր դրօշակին քով ու սիկարը
բերանը: Կրակ կտրեցայ, և առ անգամ
ես գլուխ կեցայ վերջին յարձակման մը:
Թշնամւոյն հրացանները սաստիկ պար-
պելէն աղտոտած՝ չէին բանէր. բայց
զինուորները վեց կարգի վրայ բոլորած՝
հրացանաց սուխնները մեր ձիերուն քը-
թին բռներ էին. կարծես թէ պատ մըն
էին: Երբոր ես կը պոռայի, կը խրա-
խուսէի վիշապազօրքս, կօշիկներովս կը
զարնէի ձիուն փորին որ առաջ երթայ,
թշնամի պաշտօնակալը սիկարը բեր-
նէն հանեց և ձեռքովս իր զինուորներէն
մէկուն ցըցուց զիս. ականջս ան միջոցին
անանկ ձայն մը եկաւ թէ ճերմակ
գլխարկին. իրօք ճերմակ փետուր մ'ու-
նէի: Ուրիշ բան չլսեցի. որովհետեւ զըն-
տակ մը անցաւ կուրծքէս: — Ընտիր
ջոկատ մ'էր 18դ թեթեւընթաց վաշտին
առաջին ջոկատը, Պ. տէլլա Ռէպպիա.
բոլորն ալ գորսիգացի, ինչպէս որ ետ-
քը ըսին ինձի:

— Այո, ըսաւ Օրսոյ՝ որուն աչքերը փայլատակեր էին այս պատմութեան միջոց. քաջութեամբ ետ քաշուեցան և արծիւնին հետերնին տարին. բայց կրտսիճներուն երեքին երկուքը Վիդդորիա դաշտին մէջ քուն կ'ըլլան :

— Գիտե՞ս արդեօք շոկատին հրամանատար պաշտօնակալին անունը :

— Իմ հայրս էր, այն միջոցին 184 վաշտին մեծագոյն սպայ էր (Major), և նոյն օրունն տխուր պատերազմին մէջ սրբուցած արիութեանն համար հաղարապետ անուանեցաւ :

— Հայրդ . կ'երդնում գլխում կտրիճ զօրական էր : Ո՛ւր էր թէ տեսնայի զինքը . տարակոյս չկայ որ կը ճանչնայի : Ո՞րք է հիմա :

— Չէ, պատասխանեց երիտասարդը թեթեւ մը դոյնը նետելով :

— Վաղերու գտնուեցան :

— Այո, բայց պատերազմի դաշտին վրայ մեռնելու բազմը չունեցաւ : . . . Գորսիգայի մէջ մեռաւ երկու տարի առաջ : . . . Ո՛հ, ինչ աղուոր է աս ծովը . տասը տարիէ 'ի վեր Միջերկրականը չեմ տեսած : — Միջերկրականն Ովկիա-

նոսէն աւելի գեղեցիկ շերեար աչքիդ,
ազնիւ օրիորդ:

— Շատ կապոյտ է, ըսաւ Լիւդիա . . .
և ալիքը վեհութիւն չունին:

— Վայրենի գեղեցկութիւն կը սիրես
կարծեմ. անանկ է նէ Գորսիզայի պի-
տի հաւնիա:

— Աղջիկս ամէն սովորականէ դուրս
բան կը սիրէ, զրուցեց հաղարապետը.
անոր համար խտալիա անախորժ երև-
ցաւ իրեն:

— Ես խտալիոյ մէջ Բիզա քաղաքը
միայն կը ճանչնամ, ըսաւ Օրսոյ, ուր
քիչ մը ատեն դպրոց դացի. բայց զար-
մացած եմ գերեզմանատեղոյն (Գամ-
բոյ-Սանդոյ), մայր եկեղեցւոյն, ծուռ
զանգակատանը, բայց մանաւանդ գե-
րեզմանատեղոյն վրայ. անտարակոյս
կը յիշէք Օրկանեա պատկերահանին
Մահուան նկարը. անանկ միտքս մնա-
ցած է ինչուան հիմա, որ կրնամ ծրա-
դրել տեղն 'ի տեղը:

Լիւդիա վախնալով որ երիտասարդն
խտալիոյ վրայ դովեստները կ'երկնցընէ,

— Շատ աղուոր է, ըսաւ յօրանջե-
լով: — Ետքը թողութիւն կ'ընես, հայր,

դուխս քիչ մը կը ցաւի, վար պիտի
իջնամ:

Հօրը ճակատը պագաւ, գլխով բա-
րեւ տուաւ Օրսոյի և վար իջաւ: Ան ա-
տեն հաղարապետն և Օրսոյ որսորդու-
թեան և պատերազմի վրայ խօսեցան:
Իրարու խօսքերէն խմացան որ վաղեր-
լուի մէջ իրարու դիմաց են եղեր, և
թէ անշուշտ շատ մը գնտակներ իրա-
րու պարպած են. ասով սկսան իրարու
հետ կապուիլ: Նաբոլէոնի, Ռէյլինկը-
նի և Պլիւխէրի վրայ պարսաւներ գը-
տան. ետքը մէկտեղ այծեամն, կինճ
ու վայրի ոչխար որսացին: Երբոր գիշե-
րը շատ առաջ գնաց և պոյրոյի վեր-
ջին շիշը պարպուեցաւ, հաղարապետը
նորէն տեղակալին ձեռքը սխմեց և բա-
րի գիշեր մալթեց. ետքը իրարմէ բաժ-
նուեցան և պառկելու գացին:

Գ

Աղուոր գիշեր մ'էր, լուսինն ալեաց
հետ կը խաղար, նանն ալ անոյշ քամիէ
մը մղեալ կը սահէր ծովուն վրայ: Լիւ-
դիա քուն չունէր, բայց գորսիգացի

պաշտօնակալին պատճառաւ չէր վայ-
լած ինչուան այն ատեն այն քաղցրա-
խորժ զգացմունքը, զոր ծովուն տեսքն
ու լուսնի արծաթափայլ ճառագայթ-
ները կ'ազդեն այն ամէն մարդու վրայ,
որուն սրտին մէջ բանաստեղծութեան
պղտի սերմ մը կայ: Վերջապէս յուսալով
որ պաշտօնակալը քուն եղած է, ելաւ
անկողնէն, մուշտակ առաւ վրան, սենե-
կապան աղախինն արթնցուց ու հետը
նաւուն վրան ելաւ: Մարդ չկար վերը
բայ 'ի նաւաստիէ մը, որ զեկը կը կա-
ռավարէր, և Գորսիգայի լեզուով ողբա-
կան երգ մը կ'երգէր. թէպէտ վայրենի
և միակերպ եղանակ մ'էր, բայց դիշե-
լային լուծեան միջոց քաղցր կը հըն-
չէր: Գծբաղդարար Աւգիտա բոլորովին
չէր հասկընար նաւաստիին երգածը.
հասարակ ստղերու մէջ նշանաւոր ի-
մաստ մը յանկարծ դուրս կը ցատքէր
և օրիորդին հետաքրքրութիւնը կը զար-
թուցանէր. բայց դաւառական բառեր
վրայ հասածին պէս՝ իմաստը կը կոր-
սընցընէր: Ի վերայ այսր ամենայնի ի-
մացաւ որ երգը սպանութեան մը վրայ
էր. մէյ մը անէծք կը լսէր սպանողաց

դէմ, մէյ մը վրէժխնդրութեան սպառնալիք, մերթ ալ մեռելոյն գովեստը: Քանի մը տող կրցաւ միտքը պահել, զոր հոս կը թարգմանենք.

«... Աչ թնդանօթք, ոչ հրացանի սուխնները — կրցան սյլագունել իր ճակատը, — որ անանկ զուարթ ու պայծառ էր պատերազմի դաշտին վրայ, — ինչպէս ամառուան գիշեր մը: — Բաղէ էր՝ բարեկամ արծուոյն, — աւաղի մեղր՝ իր բարեկամաց, — իսկ թշնամեաց՝ ծով բարկացայտ: — Բարձր քան ղերկինս, — քաղցրագոյն քան զուսին: — Այն որ բնաւ սպասեցրնել չտուաւ Գաղղիոյ թշնամիքը, — իրեն հայրենակից մարդասպաններ — ետեւն զարկին զինքը, — ինչպէս Ախդոզոյ սպաննեց զՍանբիւրոյ Գորսոյ: — Աչ երբէք կրնային համարձակիլ առջևն ելլել: — ... Անկողնիս առջև պատին վրայ կախեցէք — պատուոյ խաչս, զոր արդիւնքովս ստացած եմ: — Ժապուէնը կարմրցած է. — բայց շապիկս ալ աւելի: — Արդւոյս, որ օտար երկիր է — որդւոյս պահեցէք խաչս ու արիւնոտ շապիկս: — Աքան երկու ծակ կը տեսնէ: — Իւրաքանչիւր ծակին տեղ՝ ծակ բանալու է ուրիշ շապիկ մը վրայ: — Բայց անով վրէժխնդրութիւնը լցուած կ'ըլլայ: — Ես այն ձեռքը կը պահանջեմ՝ որ պարպեց հրացանը, — այն աչքն որ նշան առաւ, — այն սիրան որ մտածեց... »

Յանկարծակի կանկ առաւ նաւաստին: — Ինչո՞ւ համար չես շարունակեր, բարեկամ, հարցուց Նէվիլ օրիորդը:

Նաւաստին գլխով նշան ըրաւ ու ցը-
ցուց զՕրսոյ որ սենեկէն վեր կ'ելլէր
լուսնին դեղեցկութիւնը վայելելու :

— Լմընցուր ողբդ, ըսաւ Լիւդիա.
չատ ախորժեցայ :

Նաւաստին ծռեցաւ ու օրիորդին ա-
կանջէն վար ըսաւ. Ես ռիւսկեզգոռ չեմ
տար մարդու մը :

— Ի՞նչ ըսիր . . ռիւս . . .

Նաւաստին պատասխանի տեղ սկը-
սաւ սուլել :

Մն միջոցին Օրսոյ վրայ հասնելով

— Բռնեցի գրեզ, ըսաւ օրիորդին.
մեր Միջերկրականին զմայլեր կը նայիս :
Խոստովանէ որ ուրիշ տեղ չգտնուիր աս
լուսինը :

— Եւ ոչ իսկ կը նայէի անոր. խելքս
միտքս Գորսիգայի լեզուին վրայ էր. սա
նաւաստին որ կը տեսնես՝ սրտաշարժ
ողբ մը կ'երգէր, բայց ամենէն աղուոր
կտորին դադրեցուց :

Նաւաստին ծռեցաւ իբրև թէ կող-
մնացուցին վրայ աւելի աղէկ նայի և
պինդ մը Նէվիլ օրիորդին մուշտակը
քաշեց : Մնտարակոյս կ'ուզէր իմացը-
նել որ այդ երգը Օրսոյի առջև չէր կըր-
նար երգըցուիլ :

— Ի՞նչ էր երգածդ, Պօղոս Ֆրանսէ, հարցուց Օրսոյ. պաշխարհաւ մըն է չէ՞նէ վոչերոյ¹: Լիւղիա հասկըցեր է երգածդ և կ'ուզէ վերջը լսել:

— Մոռցայ դնաց, Օրս' Անտոն, պատասխանեց նաւաստին: Եւ մէկէն սկըսաւ երգ մը երգել Աստուածածնայ՝ որչափ ձայն ունէր նէ դուրս ձգելով:

Լիւղիա շատ ուշադրութիւն չըրաւ նոր երգին, և ալ նեղը չխոթեց երգեցողը. միայն միտքը դրաւ որ վերջը բանին ի՞նչ ըլլալն իմանայ: Բայց իր աղակիւնը, որ թէպէտ փլորենատացի՝ ինքն ալ աղէկ չէր հասկընար Գորսիգայի լեզուն, չկարենալով յայլթել հետաքրքրութեանը՝ հարցուց Օրսոյի թէ ի՞նչ կ'ուզէ լսել ռիւսկեզո տալ մէկու մը:

— Ռիւսկեզո, ըսաւ Օրսոյ. անկէց

1. Երբոր մէկը կը մեռնի Գորսիգայի մէջ, մանաւանդ երբոր սպաննուած է, մարմինը ստուի մը վրայ կը դնեն, և նոյն տան կնիկներէն, չէ՞նէ բարեկամ կամ նոյն խկ օտար կնիկներէ անոնք որ բանաստեղծական խանդ ունին, յանկարծախօսող բանն ոտանաւորներ կ'արտասանեն իրենց գաւառական լեզուովը ներկայ եղողներուն առջին: Այս ողբերը՝ կղզւոյն արեւելեան ափանց վրայ Վոլիւրոյ կը կոչուին, իսկ արեւմտեան ափանց՝ պաւ-

լադա:

առեցի մեծ նախատինք չկրնար ըլլալ
գործիգացույ մը . երեսը զարնել մըն է
որ վրէժխնդրութիւն չէ առած : Ո՞վ
ձեզի ռիմպեգգօի վրայ խօսք բացաւ :

Մն ատեն անապարեց Լիւզիա ինքը
պատասխան սուաւ թէ

— Նաւապետն երէկ Մարտէյլ գործածեց այս բառը :

Ետքը ղեկավարին դառնալով հարցուց թէ երբ նաւը նաւահանգիստ պիտի հասնէր :

— Վաղը չէ մէկալ օր , թէ որ քամին շարունակէ :

— Երանի թէ Ա. յաչչիոյի դիմացն ըլլայինք . շատ նեղութիւն կու տայ նաւն ինձի :

Եւ սենեկապան աղախնոյն թեր մըտած՝ սկսան քայել նաւուն վրայ . Օրսոյ ղեկին քով անշարժ կեցաւ , մտածելով թէ արդեօք հետերնին քայլէ , չէ նէ դադրեցընէ խօսակցութիւնը , ուսկից Լիւզիա շատ համ չէր առնէր :

Բիչ ետքը Լիւզիա վար իջաւ աղախնոյն հետ . ասոր վրայ՝ Օրսոյ ալ իր բնակարանը քաշուեցաւ : Մն ատեն սենեկապան աղախինը վեր ելաւ , և շատ մը

հարցմունքներ ընելէն վերջը նաւաստիին, գնաց իմացուց Նէվիլ օրիորդին որ պաշտօնական տէլլա Ռէպպիա հաղարապետին վրայ շինուած էր, որ Օրսոյի հայրն էր և երկու տարի առաջ սպանուեր էր: Նաւաստին կը հաստատէր թէ անշուշտ վրէժխնդրութեան համար Օրսոյ Գորսիգա կ'երթար, և թէ քիչ ատենէն Բիէզրանա գեղին մէջ նոր մտրտուած միս պիտի տեսնուէր: Այս խօսակցութեան միտքն այն էր՝ որ Օրսոյ դիտաւորութիւն ունէր երկու իրեք հոգի սպաննելու, որոնց վրայ կասկած կար, և թէպէտ դատատանի կանչուած էին ասոնք, բայց ձեան պէս արդար դուրս ելեր էին, որովհետև իրենց կողմն որացեր էին դատաւորները, փաստաբանները, քաղաքապետն ու պահպանութեան զինուորները: — Արդարութիւն չկայ Գորսիգայի մէջ, բներ էր նաւաստին, և ես աւելի բանի տեղ կը դնեմ աղէկ հրացան մը՝ քան թէ արքունական ատենի խորհրդական մը: Երբոր մարդ թշնամի մը ունի, պէտք է իրեք Տ գրէն¹ մէկն ընարէ:

1. Ազգային բացատրութիւն մըն է, որ կը նշ-

Այս հետաքննական տեղեկութիւնները շատ փոխեցին Լիւդիա օրիորդին կարծիքը տէլլա Ռէպպիա պաշտօնակալին վրայ: Առաջ չէր հաւնած անոր համարձակասիսու ու զուարթ բարուցը, իսկ հիմա կատարելութիւն մը կը սեպէր. որովհետեւ անով կը ծածկէր Օրսոյ կարիճ սրտին մէջ իր խորին զգացմունքները: Անկէ ետքը տեսակ մը Ֆիէսզոյ¹ կ'երևար օրիորդին աչքին, որ իր թեթևալիկ կերպին տակ մեծամեծ մտածութիւններ կը ծածկէր: Եւ սկսաւ դիտել որ կրթութիւն ունեցող անձն էր, վարուելու կերպ դիտէր, և հասակի ու կերպարանքի վայելչութեամբ ալ արհամարհելի չէր:

Երկրորդ օրն երկայն ատեն հետը խօսեցաւ, և ուշը դրաւեց անոր խօսակցութիւնը: Բազմաթիւ հարցմունքներ ըրաւ անոր հայրենեաց վրայ, և Օրսոյ աղէկ կը նկարագրէր զանիկայ: Օրսոյ

չանակէ schioppetto (հրացան), stiletto (դանակ) և strada (փախուստ) բառերը:

1 • Ֆիէսզոյ ձենովացի աղնուական մըն էր Ժ.Զ դարուն, որ դաւածանութիւն մը նիւթեց 1847 տարւոյն քաղաքին տիրող Տորիա ցեղին դէմ:

տղայութենէ 'ի վեր հեռացած ըլլալով
Գորսիգայէ՝ դպրոց ետքը զինուորական
վարժոց երթալու համար, բանաստեղ-
ծական գոյներով նկարուած էր անի-
կայ մտքին մէջ. և հոնտեղի լերանց,
անտառներուն և բնակչաց նորատիպ
սովորութեանց վրայ խօսելու ատեն՝
աշխոյժը կը վառէր: Դիւրին է մակա-
բերելն որ վրեժխնդրոշքիւն բառը քա-
նի մը անգամ իր պատմութեանց մէջ
խառնուեցաւ. որովհետև անկարելի է
Գորսիգայուց վրայ խօսիլ ու իրենց այս
աշխարհածանօթ կրքին վրայ յիշատա-
կութիւն չընել: Նէվիլ օրիորդը զար-
մացաւ տեսնելով որ Օրսոյ ընդհանուր
կերպով մը կը պախարակէր իր հայրե-
նակցաց անհաշտ ատելութիւնները:
Սմէն տեղէ աւելի մեր երկիրը մարդա-
սպանութիւն կ'ըլլայ, կ'ըսէր. բայց միշտ
մեծ պատճառէ մը կը մղուին Գորսի-
գացիք այս անօրէնութեան: Մենք շատ
մարդասպան ունինք. իսկ գող՝ բնաւ և
ոչ մէկ մը:

Երբոր Օրսոյ վրեժխնդրոշքիւն և ըս-
պանոշքիւն բառերը կ'արտաբերէր,
Լիւդիա ուշադրութեամբ մը երեսը կը

նայէր, բայց ամենեին այլայլութեան
նշան մը չէր տեսնար կերպարանքին
վրայ: Սակայն միտքը դրած ըլլալով որ
պաշտօնակալը կարող էր ու իցէ աչքի
ինքզինքը չյայտնել՝ բայց ՚ի իրեններէն,
հաստատուեցաւ կարծիքին մէջ թէ
տէլլա Ռէպպիա հազարապետին ստուե-
րը քիչ ատենէն արեան ծարաւը պիտի
յաղեցընէր:

Քիչ ատենէն սկսաւ Գորսիզան երև-
նալ. նաւապետը ծովափանց գլխաւոր
տեղեաց անունները կ'ըսէր, որոնց թէ-
պէտ ամէնքն անժանօթ էին Լիւզիոյ,
բայց կ'ախորժէր ըսել. իրօք շատ ձանձ-
րանալի է այն տեսարանն որուն անու-
նը չես դիտեր: Երբեմն հազարապետին
դիտակովն փանց վրայ կղզեցիք կը
տեսնուէին՝ սև չուխայ հազած, ձեռքեր-
նին երկայն հրացան, որ պզտի ձիերու
վրայ հեծած՝ զառիվայրերու վրայ կը
վազցընէին: Լիւզիա անոնցմէ ամէն
մէկն աւազակ մը կը համարէր, կամ
հօրը մահուան վրէժխնդիր որդի մը,
բայց Օրսոյ կ'ըսէր որ մօտի գեղին բնա-
կիչներէն էին և իրենց գործոց համար
ճամբայ կ'ընէին, և թէ հարկի համար

չէր զէնք գործածելնին՝ հապա վայելչութեան համար. ինչպէս որ ժամանակիս թեթևաոյիկները զարդարուն գաւազան ձեռուրնին առած դուրս կ'ելլեն:

Երեքօրեայ ճանապարհորդութենէ ետքը՝ Սանկիսէր կղզւոյն առջևն հասաւ նաւը, և Ս. յաչչիոյի ծոցին սքանչելի տեսքը ճանապարհորդաց աչքին առջև բացուեցաւ: Իրաւամբք Նէապոլսոյ խորշին կը նմանցընեն զանիկայայն միջոցին որ կօրէդը նաւահանդիստ կը մտնէր, անտառի մը այրման ծուխը ծաւալելով ճիրադա հրուանդանին վրայ, զվեստով կը յիշեցընէր և նմանութիւնը կ'աւելցընէր: Ս. յա նմանութիւնը բոլորովին կատարեալ ըլլալու համար՝ պէտք էր որ Ստտիլասայ բանակ մը Նէապոլսոյ շրջակայքը գարորովհետև Ս. յաչչիոյի մերձակայքը մեռեալ և անապատ են: Փոխանակ այն վայելուչ բնակարաններուն որ Գասդէլլամարէէն ֆինչև ցՄիզէնոյ հրուանդանն ամէն տեղ սփռուած են, Ս. յաչչիոյի ծոցին չորս կողմը ուրիշ բան չես տեսներ՝ բայց եթէ տխուր անտառներ, և անոնց ետեր՝ լերկ լեռներ. ամալրաս,

տուն մը չկայ, և ոչ իսկ բնակարան մը .
միայն քաղաքը բոլորող բլրոց վրայ առ-
դիս անդին քանի մը շէնքի սպիտակու-
թիւնը կանաչութեան մէջէն դուրս կը
ցատքէ, որ մեռելոց հանգստեան մա-
տուռներ կամ գերեզմանք են : Միով
քանիւ՝ այս տեսարանիս գեղեցկութիւ-
նը ծանր է և տխուր :

Քաղաքին տեսքը, մանաւանդ այն
ժամանակը, կ'աւելցընէր շրջակայից
միայնութեան ազդած տալաւորութիւ-
նը . փողոցներու մէջ կենդանութիւն
չկայ, որովհետեւ քանի մը պարապորդ-
ներ միայն կը քալեն և միշտ նոյներն
են . կանայք չեն երևար, բաց 'ի սակա-
ւաթիւ գեղջուկներէ որ բերքերնին ծա-
խելու կու դան : Բարձր խօսելու, խըն-
տալու, երգելու ձայներ չեն լսուիր, ինչ-
պէս իտալիոյ քաղաքաց մէջ կը լսուին :
Երբեմն ճեմելեաց ծառի մը տակ տա-
սը տասուերկու զինեալ գեղացիներ
թուղթ կը խաղան կամ ուրիշներուն
խաղալը կը տեսնեն : Բնաւ չեն պո-
ռար, վէճ չեն ըներ . երբոր խաղը տար-
նայ, ատրճանակի պարպուելու ձայներ
կը լսուին, որ միշտ նախընթաց են

սպառնալեաց : Գորսիգացիք 'ի բնու-
թենէ ծանր և լուռ են : Երեկոյեան զու-
վութիւնը վայլելու համար քիչ մար-
դիկ կան որ դուրս կ'ելլեն . բայց կրկի-
սին մէջ ժուռ եկողները գրեթէ բոլորն
ալ օտարականք են : Կղզեցիք տուներ-
նուն դրանց առջև կը կենան . կարծես
թէ դարանի նստած են , ինչպէս բա-
զէ մը իր բոյնին վրայ :

Դ

Լիւղիա Նարոյէոնի ծնած տունն այց
ելլելէն և սենեակը պատող ներկեալ
թղթէն քիչ մը ձեռք ձգելէն վերջը ,
Գորսիգա հասնելուն երկրորդ օրը խո-
րին տխրութեամբ պաշարուեցաւ . ինչ-
պէս բնականապէս կը պատահի այն ա-
մէն օտարականաց , որ անընկերասէր
երկիր մը երթալով՝ միայնութեան մէջ
կը մնան : Շատ զղջաց իր յանկարծա-
կան որոշմանը վրայ . բայց մէկէն հե-
ռանալն ալ անկից՝ իր պատուոյն կը
դպչէր . ուստի համբերութիւն աչքն ա-
ռաւ և միտքը դրաւ կրցածին չափ ըս-
պաննել ժամանակը : Ս. յապիտի վեհանձն

դիտաւորութեամբ՝ վրձիններն ու գոյ-
ները պատրաստեց, և ծոցին տեսքերէն
մէկ քանին ծրագրեց. նկարեց նաև ա-
րևէն էրած գեղացւոյ մը դէմքը, որ սե-
խավաճառ էր, սպիտակ մօրուօք և դէմ-
քէն վայրագութիւնն ու անդգամու-
թիւնը շափել որ ուզենայիր՝ նմանը չէր
գտնուէր: Այսչափն ալ չբաւեց զինքը
զուարճացընելու. ուստի միտքը դրաւ
գարշտալաց ցեղէն իջնողին հոգին բե-
րանը բերելու. ասիկայ դժուարին բան
մը չէր, որովհետև Օրսոյի հոգը չէր իր
բնիկ գեղը տեսնելու և Այսչիոյի բնա-
կութիւնը կ'ախորժէր, թէպէտ մարդու
հետ չէր տեսնուէր: Թող որ Լիւդիա
ազնուական վախճան մը ունէր մտքին
մէջ. ցաւելով երիտասարդին վրայ՝
կ'ուզէր կրթել քաղաքականացընել
այդ լեռնային արջը¹, և մտքէն վեր-
ցընել այն մահադուշակ դիտաւորու-
թիւններն՝ որոնցմով լեցուած կղզին ե-
կած էր:

Հետևեալ կերպով կ'անցընէին մեր
ճանապարհորդքն օրերը. առաւօտը՝

1. Օրսոյ անունն իտալերէն առջ կը նշանակէ:

Հաղարապետն ու Օրսոյ որսի կ'երթայ-
ին . Վիւղիա կը ծրագրէր , կամ կը թըղ-
թակցէր իր բարեկամուհեաց հետ՝ որ-
պէս զի Ս.յաչչիոյէն թուղթ գրած ըլ-
լայ : Իրիկուան ժամը վեցին որսորդնե-
րը կու գային լցեալ աւարաւ . կերա-
կրոյ կը նստէին . ետքը Վիւղիա կ'երգէր ,
հաղարապետը քուն կ'ըլլար , և երկու
երիտասարդքն ինչուան ուշ ատեն կը
խօսակցէին :

Մնյադրոյ պատճառաւ Նէվիլ հա-
ղարապետը բռնադատուեցաւ այց ելլե-
լու քաղաքապետին , որ իր պաշտօնէն
ձանձրացած ըլլալով (ինչպէս իր պաշ-
տօնակիցներէն շատերն ալ) ուրախա-
ցաւ հարուստ անգղիացւոյ մը գալլա-
տեանը վրայ , որ ընկերութեանց մէջ
մտած մարդ էր և գեղեցիկ աղջիկ մը
ունէր : Ս.յս պատճառաւ շատ սիրով և
անհամար քաղաքավարական խօսքե-
րով ընդունեցաւ քաղաքապետն զՆէ-
վիլ . և քիչ օր ետքը փոխադարձ այցե-
լութեան գնաց : Հաղարապետը կերա-
կրէն նոր ելած էր , և բազմոցի մը վրայ
երկնցած՝ կը մրափէր . աղջիկը կտարը-
տած դաշնակի մը առջև նստած կ'եր-

գէր, Օրսոյ ալ երաժշտութեան տետրին
թղթերը կը դարձնէր: Երբոր իմաց
տրուեցաւ քաղաքապետին գալուստը,
դաշնակին ձայնը կտրեցաւ, հազարա-
պետն ոտք ելաւ աչքերը շփելով և
ծանօթացուց քաղաքապետն իր աղջը-
կանը. ետքը

— Անտարակոյս հարկ չկայ ծանօ-
թացընելու տէլլա Ռէպպիա հազարա-
պետին որդին, ըսաւ քաղաքապետին.
Ճանչնալու ես զինքը:

— Այդ պարտնը տէլլա Ռէպպիա
հազարապետին որդին է, հարցուց քա-
ղաքապետը՝ քիչ մը շփոթած կերպով:

— Այո, ըսաւ Օրսոյ:

— Հայրդ ճանչնալու պատիւն ունե-
ցած եմ:

Քիչ ատենէն խօսակցութեան սովո-
րական ոճերը հատան. հազարապետն
ստէպ կը յօրանջէր. իսկ Օրսոյ իբրև
ազատասէր՝ չէր ուզէր իշխանութեան
պաշտօնէին հետ խօսիլ. Լիւդիա միայն
էր խօսողը: Քաղաքապետն ալ իրեն
կողմանէ կը ջանար խօսակցութեան
նիւթ բանալու, և ախորժով կը խօսէր
աղջրկան հետ Բարիզու և Եւրոպիոյ

մեծամեծ ընկերութեանց վրայ : Միան-
գամայն մերթ ընդ մերթ մասնաւոր հե-
տաքրքրութեամբ մը կը զննէր զՕրսոյ .
և վերջապէս

— Գաղղիոյ մէջ ծանօթացար տէլլա
Ռէպպլիա պաշտօնակալին հետ, հար-
ցուց անշրկան :

Հիւղիա պատասխանեց որ Գորսի-
դայի ճամբուն վրայ ճանչուորեր էին
նաւուն մէջ :

— Կոկիկ երիտասարդ մ' է, ըսաւ քա-
ղաքապետը ցած ձայնով : Ետքը աւելի
ցածը ընելով ձայնը՝ Գիտես արդեօք,
հարցուց, ի՞նչ դիտաւորութեամբ Գոր-
սիդա եկած է :

Հիւղիա պատասխանեց վսեմ կեր-
պով մը . — Ես չեմ հարցուցած իրեն .
կ'ուզես նէ դու հարցուր :

Քաղաքապետը լուռ կեցաւ . բայց
քիչ ետքը երբոր տեսաւ որ Օրսոյ քա-
նի մը անգղիարէն խօսք ըսաւ հազա-
րապետին, — Կարծեմ, պարոն, ըսաւ,
չատ ճանապարհորդութիւն ըրած ես .
անտարակոյս մտցած կ'ըլլաս Գորսի-
դան . . . ու իր սովորութիւնները :

— Իրօք շատ դեռահասակ էի դուրս
գացած միջոցս :

— Բանակէն ելա՞ծ ես :

— Կէս թոշակով եմ :

— Անշուշտ շատ տարի գաղղիական բանակին մէջ կեցած ըլլալով, բոլորովին գաղղիացի դարձած պիտի ըլլաս : Այս ետքի խօսքերը լեցուն բերնով զրուցեց :

Գորսիգացիք շատ չեն ախորժիր լսել որ Գաղղիոյ մասն են . կ'ուզեն մասնաւոր ժողովուրդ մը սեպուիլ, և իրօք իրենց յատկութեամբքը շատ կը զանազանին Գաղղիացեացմէ : Օրսոյ տհաճելով այս խօսքին վրայ, հարցուց քաղաքապետին .

— Հա՞րկ է արդեօք որ գորսիգացի մը պատուաւոր մարդ ըլլալու համար Գաղղիոյ բանակին մէջ ծառայէ :

— Չէ, բնաւ հարկաւոր չէ . իմ խօսքս երկրիս քանի մը սովորոշքեանց վրայ էր, որոնցմէ ոմանք տէրութեան պաշտօնէի մը աչքին գէշ կը զարնեն : — Սովորոշքեանց բառին վրայ մասնաւոր ոյժ մը տուաւ քաղաքապետը և կերպարանքին վրայ կրցածին չափ ծանրութիւն նկարեց : Յետոյ անմիջապէս խոստամունք առնելով Վիզիայէն որ

դայ իր կնոջ այցելութեանն, ելաւ
վնայ :

Երբոր դուրս ելաւ, — Գորսիգա պէտք
էր եկած ըլլայի, դրուցեց լիւդիա, քա-
ղաքապետաց ինչպիսի անձինք ըլլալն
խմանալու համար : Այս քաղաքապետն
ըստ բաւականին ախորժելի է :

— Ես անանկ չեմ դանար, պատաս-
խանեց Օրսոյ. և իր խորհրդաւոր ու ճո-
ւտմախօս կերպը անախորժ կ'երևայ
ինձի :

Հաղարապետը թմրեր անզգայեր էր.
Լիւդիա դէպ 'ի հօրը կողմը մէյ մը աչք
տալէն վերջը՝ ցած ձայնով ըսաւ. —
Ինձի կ'երևայ որ ըսածիդ չափ խորհր-
դաւոր չեն իր խօսքերը, որովհետև հաս-
կըցայ ըսածները :

— Դու շատ թափանցող ես, պա-
տասխանեց Օրսոյ. բայց այս բանիս մէջ
քու մտածութիւնդ կու տաս քաղաքա-
պետին խօսքին :

— Կ'ուզե՞ս փորձով մը իմացընեմ
քեզի իմ թափանցողութիւնս : Ես քիչ
մը վհկութիւն գիտեմ, և երկու անգամ
տեսած մարդուս մտքէն անցածը կը
հասկընամ :

— Կը վախայրնես դիտ : Թէ որ մարդկանց մտածութիւնները ճանչնայիր, չեմ դիտեր թէ արդեօք ուրախ կ'ըլլայի ես չէ նէ տրտում

— Քանի մը օրուան ճանչուորութիւն է մերը, պարոն, ըսաւ Լիւդիա կարմրելով մը. բայց ծովու վրայ և բարբարոս երկիրներու մէջ (յուսամ կը ներես այս բացատրութեանս) բարեկամութիւնն աւելի շուտով կը հաստատուի քան ուրիշ տեղուանք . . . Անոր համար մի զարմանար թէ որ իբրև բարեկամ մը տերմութեամբ անանկ բաներու վրայ խօսիմ, որ օտարի մը բերնէն պէտք չէ ելլեն :

— Օտար մի ըսեր. բարեկամի ա նունն ախորժելի է ինձի :

— Շատ աղէկ, ուրեմն դիտցիր որ առանց դաղտնիքներդ իմանալ ջանալու՝ դիտեմ անոնց մէկ մասը, և տխուր եմ անոնց վրայ : Գիտեմ ընտանեացդ հանդիպած ձախորդութիւնը. ուրիշ կողմանէ ալ ականջս շատ բան հասաւ հայրենակցացդ վրէժխնդիր բնաւորութեան և վրէժ առնելու կերպին վրայ . . . Քաղաքապետն այս բանիս ակնարկութիւն չէր ընէր :

— Ի՞նչ . կրնան անանկ բան կարծել . .
Եւ Օրսոյի գոյնը նետեց մեռելոյ մը պէս :

— Չէ , ըսաւ Ղիւզիս խօսքը բերնէն
առնելով . գիտեմ որ պատուաւոր ազ-
նուական մըն ես . և դու ինքն ըսիր ին-
ծի՝ որ ալ Գորսիզայի մէջ՝ հասարակ
աստիճանի մարդկանց մէջ միայն մնա-
ցած է վրէժխնդրութիւնը . . .

— Կը կարծես որ մարդասպան կա-
րենամ ըլլալ :

— Խօսելէս իմացիր որ տարակոյս
չունիմ վրադ . և խօսելուս պատճառն է
(ըսաւ աչքերը վար առնելով) իմա-
ցրնել քեզի որ թէպէտ հայրենիքդ
դարձած ես և բարբարոսական նախա-
պաշարմունքներէ պաշարուած , բայց
կայ մէկը որ կարող կը կարծէ զքեզ
դէմ կենալու անոնց : — Եւ ոտքի վրայ
ելլելով , թողունք , ըսաւ , այս փուճ
խօսքերը , որ դուխս կը ցաւցրնեն . ար-
դէն ժամանակն ալ ուշ է : Յուսամ որ
նեղացած չես : Գիշեր բարի , անգղիաց-
ւոյ կերպով : Ըսաւ և ձեռքն երկնցուց
անոր :

Օրսոյ սխմեց զայն արժանավայել
ճանրութեամբ մը :

— Գիտցիր, ըսաւ, ազնիւ օրիորդ, որ երբեմն մեր երկրին բնածին ազգումը կը զարթնու յիս. երբեմն երբոր խեղճ հօրս վրայ կը մտածեմ, ... ահաւոր մը տածու թիւններ կը պաշարեն զիս: Բայց դու ազատեցիր զիս անոնց ամենէն. մեծապէս շնորհակալ եմ:

Կ'ուզէր շարունակել. բայց Լիւզիոյ ձեռքէն թէյի դգալ մը վար լինալով, հազարապետն արթնցաւ:

— Տէլլա Ռէպպիա, վաղը ժամը հինգին որսի կ'երթանք. մի պակսիր ժամանակին:

— Մի տարակուսիր:

Ե

Երկրորդ օրը, Նէվիլ օրիորդն, որ սենեկապան աղախնոյն հետ ծովուն ափունքը շրջագայութեան ելած էր, որսորդաց դարձէն քիչ մը առաջ պանդուկը կը դառնար. մէյ մ' ալ տեսաւ որ դեռահասակ օրիորդ մը, սևեր հագած, ուժով մտրուկի մը վրայ հեծած, քաղաքը կը մտնար. հետը գեղացի մը կար' նոյնպէս ձիաւոր, թխադոյն հագած,

մէջքը ատրճանակ մը, ձեռքն ալ հրա-
ցան՝ որուն բունը թամբին կաշիէն կա-
խուած քսակին մէջ կը հանդէր: Աղ-
ջրկան նշանաւոր տեսքը Լիւդիոյ ուշա-
դրութիւնը գրաւեց. քսանամեայ կ'ե-
րեար, բարձրահասակ, մութ կապուտ-
աչուի, և կերպարանքին վրայ նը-
կարուած էին միանգամայն պարծեն-
կոտութիւն, այլայլութիւն և տխրու-
թիւն: Մետաքսեայ սև քօղ մը առած
էր գլուխն, որ Աեծճարոյ կը կոչուի, և
զոր ճենովացիք մտուցած են Գորսիդա-
խարտեաչ մազերուն երկայն հիւսերն
ալ փակեղ մը կը ձևացրնէին գլխուն
բոլորտիքը: Շատ պարզ էր հագուստը,
բայց մաքուր:

Լիւդիա ժամանակ ունեցաւ աղէկ
դիտելու զանիկա. որովհետև դիմացինը
կանկ առաւ ճամբան, ու աչքերուն վառ
վռուն կերպէն կ'իմացուէր որ հետա-
քննութեամբ հարցմունքներ կ'ընէր մէ-
կու մը. պատասխանն առնելէն վեր-
ջը՝ դաւազանովը մտրակեց ձին, որ վա-
զելով հասաւ և կանկ առաւ այն պան-
դոկն ուր իջած էին սրբ թովմաս Նէվիլ
և Օրսոյ: Պանդոկապետին հետ քանի

մը խօսք զրուցելէն վերջը, ձիէն վար
ցատքեց օրիորդը, և պանդուկին դրանն
առջև քարի մը վրայ նստաւ. ան միջոցին
իր մարդը ձիերն ախոռ տարաւ: Լիւ-
ղիա իր գաղղիական նորեւուկ զգեստ-
ներովն անոր առջևէն անցաւ, բայց
օրիորդն և ոչ աչքերը վեր վերուց: Քա-
ռորդ մը վերջը պատուհանէն նայեցաւ
ու տեսաւ որ մէջհարոյ ունեցողը դեռ
ևս նոյն տեղն ու նոյն դիրքով նստած
էր: Քիչ ատենէն հաղարապետն ու Օր-
սոյ որսորդութենէ դարձան. ան ատեն
պանդուկատը քանի մը խօսք ըսաւ
գորսիգացի աղջրկանն ու մատովը Տէլ-
լա Ռէպպիա պաշտօնակալը ցուցուց:
Աղջիկը կարմրած՝ աշխուժով մը ոտք
եւաւ, քիչ մը առաջ գնաց, բայց ետքը
կանկ առաւ ու շփոթած կեցաւ: Օրսոյ
մօտը կեցած հետաքրքրութեամբ կը
նայէր վրան:

— Ան ատեն հարցուց աղջիկը.

— Դու ես Օրսոյ Անտոն Տէլլա Ռէպ-
պիա: Ես Աղաւնին եմ:

— Աղաւնի, աղաղակեց Օրսոյ. և
գրկախառնելով հետը՝ սիրոյ համբոյրը
տուաւ: Աս բանիս վրայ զարմացան հա-

զարապետն ու Վիւզիա, որովհետև
Մնգղիա ճամբուն մէջ ասանկ բան չըլ-
լուիր:

— Եղբայր իմ, ըսաւ Աղաւնի, ներե-
առանց քու հրամանիդ գալուս համար.
հասնելդ լսելով բարեկամներէ, անանկ
ուրախացաւ սիրտս որ...

Օրսոյ նորէն համբոյր տուաւ. ետքը
հազարապետին դառնալով,

— Քոյրս է, ըսաւ. բայց թէ որ ինքը
դրուցած չըլլար, չէի կրնար ճանչնալ
դինքը: Հազարապետդ, կը ցաւ իմ որ
այսօր հետդ ճաշելու պատիւը պիտի
չունենամ... քոյրս...

— Ո՛ւր կ'ուզես ճաշել, բարեկամ,
ըսաւ հազարապետը. դիտես որ բոլոր
օրը մէկ անգամ ճաշ կը տրուի այս
անշահ պանդոկին մէջ, ան ալ մերն է:
Քրոջդ ընկերութիւնն աղջրկանս հա-
ճելի պիտի անցնի:

Աղաւնի եղբօրը նայեցաւ, որ զիջաւ
հազարապետին աղաչանացը, և իրեքը
միատեղ պանդոկին մեծագոյն սենեա-
կը մտան, որ ընդունելութեան սենեկի
և սեղանատան տեղ կը ծառայէր հա-
զարապետին: Երբոր Նէվիլ օրիորդին

առջև ելաւ Տէլլա Ռէպպիա օրիորդը,
խորունկ մը ծռեցաւ առանց բերան բա-
նալու. յայտնի կը տեսնուէր որ շատ
խրտան էր, և թէ հաւանականապէս
առաջին անգամն էր կենացը մէջ որ
կարդաւորեալ օտարականաց առջև կ'ել-
լէր. սակայն բնաւ գեղացւոյ կոպտու-
թիւն չունէր: Նէվիլ օրիորդը կապուե-
ցաւ հետը. և որովհետև բոլոր պան-
դոկն իրենք բռներ էին, առաջարկեց
գործիդացի աղջրկան որ իր սենեկին
մէջ անկողին գնել տայ իրեն: Աղաւնի
թոթովելով քանի մը շնորհակալու-
թեան խօսք գրուցեց և Նէվիլ օրիորդին
սենեկապան աղախնոյն հետ առանձ-
նացաւ վրան գլուխը մաքրելու համար:

Երբոր ընդունելութեան սենեակը
դարձաւ, հազարապետին հրացանացն
առջև կանկ առաւ՝ զորոնք որսորդներն
անկիւն մը դրեր էին: — Ի՛նչ աղուոր
զէնքեր են, ըսաւ. քոնկդ են արդեօք,
հարցուց եղբօրը:

— Չէ. անգղիացի հրացաններ են և
տէրը հազարապետն է: Շատ աղէկ շի-
նուած են:

— Կ'ուզէի, ըսաւ Աղաւնի, որ ա-

Նոնց նման մէկ հաստ մ՝ ալ դու ունե-
նայիր :

— Մն երեքէն մէկը սլաշտօնակալինն
է, զրուցեց հաղարապետը . և շատ ա-
ղէկ կը դործածէ . այսօր տասնըչորս
անգամ սլարպեց և նոյնչափ որս եկաւ
ձեռքերնիս :

Այս ըսելով ուզեց հրացաններէն
մէկն Օրսոյի ընծայել . Օրսոյ չէր ուզէր
ընդունիլ, բայց վերջապէս յաղթուե-
ցաւ . և ուրախութիւնը քրոջն եղաւ, որ
տղու պէս զուարթացաւ, ան որ առաջ
ծանր կեցած էր : — Ընտրէ որն որ կ'ու-
զես, բարեկամ, կ'ըսէր հաղարապետը :
Օրսոյ յանձն չէր առներ : — Թող ուրեմն
քոյրդ ընտրէ քու տեղդ : Աղաւնի չսպա-
սեց որ երկու անգամ ըսեն . հրացան-
ներուն ամենէն անդարդն ընտրեց, որ
ընտիր և մեծ բերնով էր . — Ասիկայ,
ըսաւ, անտարակոյս աղէկ կը նետէ
գնատակը :

Եղբայրն երբոր շփոթած շնորհակա-
լութիւն կ'ընէր, կերակրոյ ժամանակն
հասաւ : Բայց Օրսոյ սկսաւ վախնալ որ
չըլլայ թէ քոյրը գեղացւոյ դործք մը
կամ խօսք մը ընէ : Սակայն Աղաւնի

միակերպ իրեն կը նայէր և իր շարժ-
մունքները կը համաձայնեցընէր անոր :
Երբեմն աչքերը արտաքոյ կարգի արխ-
րութեամբ մը եղբօրը վրայ կը տնկէր ,
և այն միջոցին թէ որ Օրսոյի աչքերուն
հանդիպէին , Օրսոյ մէկէն ուրիշ տեղ
կը նայէր , որովհետև կ'իմանար թէ ինչ
կը նշանակէր Աղաւնիի նայուածքը : Սե-
ղանի վրայ խօսակցութիւնը գաղղիա-
րէն էր , որովհետև հազարապետը շատ
գէշ խօսակերէն կը խօսէր : Աղաւնի ա-
ղէկ կը հասկընար գաղղիարէն և ըսած
քանի մը խօսքերն ալ վայելչութեամբ
արտաբերեց :

Կերակրէն վերջը , հազարապետն՝ որ
անդրադարձեր էր թէ եղբօր և քը-
րոջ իրարու նայուածքները նշանակու-
թիւն ունէին , իր բնական համարձա-
կութեամբը հարցուց Օրսոյի թէ կ'ու-
զէր արդեօք առանձին տեսնուիլ Աղա-
նիի հետ . և կ'առաջարկէր որ ինքն աղ-
ջըկանն հետ քովի սենեակը քաշուին :
Բայց Օրսոյ շնորհակալ եղաւ և ըսաւ
թէ Բիէղրանէրա գեղը խօսակցելու
ժամանակ կը գտնան , ուր իր բնակու-
թիւնը պիտի հաստատէր : Ուստի հա-

զարապետան ըստ սովորականին տարա-
ծուեցաւ բազմոցին վրայ . և Նէվիլ օ-
րիորդը խօսակցութեան շատ նիւթեր
բանալէն վերջը՝ երբոր յուսահատեցաւ
Աղաւնին խօսեցրնելէն , աղաչեց Օրսոյի
որ Տանդէի քերթուածէն երգ մը կար-
դայ , զոր շատ կ'ախորժէր : Օրսոյ ըն-
արեց Գ. Ժոխքի այն երգն ուր Փրանկիա-
կայի Ռիմինացւոյ դրուադը նկարա-
գրուած է , և կրցածին չափ աղէկ կ'ար-
տասանէր : Որչափ առաջ կը տանէր ըն-
թերցումնը , Աղաւնի ստոյին կը մօտե-
նար , գլուխը վեր կը վերցրնէր՝ որ ին-
չուան այն ատեն վար խոնարհեցուցած
էր , աչքերը կրակ կը ցատքեցրնէին .
մէյ մը կը կարմրէր , մէյ մը գոյնը կը նե-
տէր , մէյ մը աթոռին վրայ կը տասա-
նէր : Տեղն է հոս ըսելու որ խաւացի
մը բանաստեղծութեան մը գեղեցկու-
թիւնն ըմբռնելու համար՝ վարժապետի
պէտք չունի :

Երբոր ընթերցումնը լմնցաւ , —
Այս ինչ աղուոր է , աղաղակեց Աղաւ-
նի . ով գրեր է ասիկայ , եղբայր :

Երբոր Օրսոյ քիչ մը շփոթեցաւ , Լիւ-
դիա ժպտելով պատասխանեց որ վրա-

քենտայի հին բանաստեղծ մ' էր հեղինակը :

— Երբոր Բիէդրանէրա կ'երթանք, կարդացընել կու տամ քեզի Տանդէն, ըսաւ Օրսոյ :

— Ո՛հ, ի՛նչ աղուոր է, կրկնեց Աղաւնի. ետքը միտքը պահած սուները ցած ձայնով արտասանեց, բայց կամայ կամայ բորբոքելով բարձրաձայն սկսաւ կրկնել զանոնք եղբօրմէն աւելի աշխուժով :

Ղիւղիա զարմացած — կ'երևայ որ բանաստեղծութիւնը շատ կը սիրես, ըսաւ : Երջանիկ ես դու որ իբրև նոր գիրք մը պիտի կարդաս զՏանդէ :

— Կը տեսնես, ըսաւ Օրսոյ Նէվիլ օրիորդին, ի՛նչ զօրութիւն ունին Տանդէի տուները վայրենի աղջկան մը վրայ : ... Բայց սխալ է ըսածս . միտքս կու գայ որ Աղաւնի նոյն արուեստէն է . պզտիկութենէն 'ի վեր ոտանաւոր գրելու հետ էր, և հայրս կը գրէր ինձի որ Բիէդրանէրայի և շրջակայից ամենէն անուանի վաչերոյ երգեցողն էր :

Աղաւնի աղաչանքի նայուածքով մը աչքերն եղբօրը վրայ դարձուց : Իսկ

Նէվիլ օրիորդն, որ գորսիգացի բանա-
ստեղծ կանանց յանկարծախօսութիւն-
ները լսելու կը մեռնէր, պաղատեցաւ
Աղաւնիին որ իր տաղանդը ցուցնէ :
Ան ատեն Օրսոյ մէջ մտաւ, որովհետեւ
չատ ցաւեր էր քրոջը բանաստեղծու-
թիւնն յիշած ըլլալուն . սկսաւ ըսել որ
գորսիգացի պաշրադաններն անհամ էին,
և թէ Տանդէի տողերէն վերջն այսպի-
սի քերթութիւններ լսելն՝ իր երկրին
պատիւ չեն ըներ : Այս խօսքերս Նէվիլ
օրիորդին հետաքրքրութիւնն աւելի
բռնկեցուցին . վերջապէս բռնադատե-
ցաւ Օրսոյ ըսելու իր քրոջը . — Ինչ և
իցէ, ըսէ քանի մը տող, բայց նայէ որ
կարճ բռնես :

Աղաւնի մէյ մը հառաչեց, ուշի ու-
շով վայրկեան մը նայեցաւ ստուին կա-
պերտին վրայ, ետքը ձեղունին դե-
րաններուն վրայ . յետոյ ձեռքերն աչ-
քերուն վրայ դրած՝ իբրև թէ անով
կրնար ուրիշներուն աչքէն ծածկուիլ,
երգեց դողդոջուն ձայնիւ, կամ մանա-
ւանդ թէ արտասանեց հետեւեալ դե-
ղօնքը .

ՕՐԻՈՐԴՆ ԵՒ ՏԱՏՐԱԿՈՐ

« Լեւներէն շատ անդին ձորին մէջ — արեն օրը
մէկ ժամ միայն կ'երևայ հոն: — Այն ձորին մէջ
մուծ առն մը կայ, — սրուն սեմոց վրայ խոտ կը
բուսնի: — Կաները, սաաուհանները միշտ գոց
են. — ծխաններէն բնաւ ծուխ չելլի: Բայց
կէսօրն երբոր արևը կու գայ, — սաաուհան մը
կը բացուի — և օրը աղջիկը նստած անուակիսն առ-
ջև կը մանէ. — կը մանէ և աշխատութեանը միջոց
կ'երգէ — տխրութեան երգ մը: — Բայց չկայ
ուրիշ երգ մը որ սաաուսխանէ իրեն: — Օր մը,
գարնան օր մը — սաարակ մը թառեցաւ մտի
ծառին վրայ — և օրիորդին երգը լսեց: — Օ-
րիորդ, ըսաւ, դու միայն չես ողբացող. — ան-
գուծ շահէն (ՏՃ. Տօղան) մը ընկերս յափշտա-
կեց: — Տաարակ, ցըցուր ինձի յափշտակող շա-
հէնը. ամպերուն չափ ալ բարձր ըլլայ նէ, — գե-
տին կը տապալեմ զայն: — Իսկ ինձ օրիորդիս ո՞վ
կու տայ իմ եղբայրս, — եղբայրս որ հիմա օտար
երկիր է: — Օրիորդ, ըսէ ինձի ուր է եղբայրդ,
— և թե երս կը տանին զիս իրեն քով: »

— Այս սաարակը շատ բարձրացեր
է, ըսաւ կատակով Օրսոյ և զեղմամբ
սրտի համբուրեց քոյրը:

— Շատ ազնիւ է զեղծնքդ, ըսաւ
Լիւդիա, կ'ուզեմ որ յիշատակի տե-
տրիս մէջ գրես զայն: Ես անգղիարէն
պիտի թարգմանեմ զայն և երգի վրայ
առնել պիտի տամ:

Հազարապետը թէպէտ բառ մը չէր հասկըցած, ինքն ալ ուրախակցութիւններ ըրաւ. ետքը վրայ բերաւ. — Սրդեօք ըսած տատրակդ անիկայ է որ այսօր ճաշին կերանք: Լիւղիա յիշատակի տեսիրը բերաւ, և զարմացաւ որ յանկարծախօս բանաստեղծը գրելու ատեն՝ թղթին խնայութիւն կ'ընէր. փոխանակ սող առ սող գրելու ոտանաւորը՝ ետևէ ետև կը գրէր. ուղղագրութիւնն ալ նշանաւոր մը չէր: Նէվիլ օրիորդը կը խնտար, իսկ Օրսոյ կը վշտանար քրոջը ծիծաղելի ըլլալուն վրայ:

Երբոր քնոյ ժամանակն եկաւ, երկու օրիորդները սենեակնին քաշուեցան. հոն Լիւղիա վզնոցը, գինդերն ու ապարանջանները հանելու միջոց՝ դիտեց որ ընկերը զգեստին տակէն երկայն բան մը հանեց և խնամքով մը մեծ ճարոյին տակը ծածկեց, զոր ստուի մը վրայ դրած էր. ետքը ծնկան վրայ եկած՝ շերմեռանդութեամբ աղօթքն ըրաւ, և քիչ վերջը անկողին մտաւ: Լիւղիա հետաքրքրութենէն մղեալ՝ ստուին մօտեցաւ, և մեծ ճարուն վեր առաւ, իբրև թէ գնդասեղ մը կը փնտռէր. տե-

սաւ երկնկեկ հին դանակ մը, որուն կոթը սատափէ և արծըթէ էր, և հնասիրաց աչքին առջև շատ յարգ կրնար ունենալ: Ան ատեն հարցուց Աղաւնիին.

— Սովորութիւն կայ արդեօք հոս, որ աղջիկները զգեստնուն տակ դանակ պահեն:

— Այո, հարկ է որ ունենան, պատասխանեց հառաչանօք Աղաւնիին, անզգամ մարդիկ լեցուն են:

— Կրնաս իրաւցընէ սիրտ ընել ասով հարուած մը տալ. — և դանակը ձեռքն առած կը ձևացընէր զարնել, վերէն վար իջեցընելով՝ ինչպէս որ թատրոններու մէջ կ'ընեն:

— Այո, պատասխանեց Աղաւնի, անոյշ ու ներդաշնակ ձայնիւր, երբոր անձիս և բարեկամացս պաշտպանութեանն համար հարկ է: ... Բայց ասանկ չեն բռներ. աս կերպով կրնաս զքեզ վիրաւորել, երբոր թշնամիդ ետ քաշուելու ըլլայ: — Եւ անկողնին մէջ նրատելով դանակը ձեռքը, — Նայէ, ըսաւ, այսպէս կը զարնեն, վարէն վեր. այս կերպով մահացու է վերքը կ'ըսեն: Եր-

Չանիկ են այն մարդիկն որ այսպիսի
զէնքերու պէտք չունին :

Ըսաւ և հառաչեց , և գլուխը բարձին
տուած՝ աչքերը գոցեց :

2

Հիմա որ Սղաւնի , հազարապետն ու
իր աղջիկը քուն կ'ըլլան , յարմար ժա-
մանակն է որ ընթերցողաց քանի մը
տեղեկութիւններ տամ , որ անհրաժեշտ
պէտք է գիտնան՝ այս ճշմարիտ պատ-
մութիւնը լաւագոյն թափանցելու հա-
մար : Ինչուան հիմա ըսածներէս յայտ-
նի եղաւ որ տէլլա Ռէպպիա հազարա-
պետն , Օրսոյի հայրը , սպաննուած մե-
ռեր էր . բայց Գորսիգայի սպանու-
թիւնքը Գաղղիոյ մարդասպանութեանց
չեն նմանիր , որ թիափարութենէ ազա-
տած մարդիկ արծաթեղէններդ գողնա-
լու համար՝ ապահովագոյն ճամբայ կը
սեպեն զքեզ մեռցընելը . հոն թշնամի-
ներէն կը սպաննուի մարդ . բայց շատ
առթի մէջ կարելի չէ ըսելը թէ ինչ
պատճառաւ թշնամի կ'ունենան Գոր-
սիգայիք : Շատ ազգատոհմեր կան որ

հին ատենէ 'ի վեր զիրար կ'ատեն, և
իրենց սկզբնական ատելութեան պատ-
ճառը բոլորովին անյայտ եղած է:

Տէլլա Ռէպպիա հազարապետին ազ-
գաստհմը շատ մը ազգաստհմերու հետ
ատելութիւն ունէր, բայց մասնաւորա-
պէս Պարրիչինի ըսուածին հետ. և կ'ը-
սուէր թէ ժ.Ձ դարուն ամուսնութեան
մը պատճառաւ գծտութիւն ծագելով
մէջերնին, Պարրիչինի ցեղէն մէկը ըս-
պանութիւն ըրեր էր: Ուրիշներն ալ
կ'ըսէին թէ տէլլա Ռէպպիա ցեղէն էր
սպաննողը. այսչափ միայն յայտնի է,
որ աս երկու տանց մէջ արիւն թա-
փուած էր: Սակայն արտաքոյ տեղւոյն
սովորութեան, ուրիշ սպանումներ ա-
ռաջ չէին եկած ասկից. և պատճառն
այն է, որ երկու ցեղերն ալ ճենովայի
տէրութենէն միշտ հալածուած ըլլա-
լով, երիտասարդներն օտար երկիր կը
փախչէին և ազգաստհմերուն երես-
փոխան չէր մնար: Անցեալ դարուն վեր-
ջերը՝ տէլլա Ռէպպիա ցեղէն մէկը,
որ Նէապոլսոյ տէրութեան ծառայու-
թեան մէջ պաշտօնակալ էր, խաղա-
բանի մը մէջ վէճ ունենալով ուրիշ

զինուորականներու հետ, ասոնք շատ
մը նախատական խօսքերէ զատ՝ Գոր-
սիզացի այժարած կանչեցին զինքը :
Պաշտօնակալը ձեռքը սուրին տարաւ .
բայց իրեք հոգւոյ դէմ մինակ ըլլալով
բանը շատ ձախորդ պիտի երթար, թէ
որ ուրիշ խաղացող մը վրայ հասած չը-
լար և չպաշտպանէր զինքը՝ պոռալով .
Ես ալ գորսիզացի եմ : Այս օտարակա-
նը Պարրիչինի ցեղէն էր, և չէր ճանչ-
նար զիմացիներ : Երբոր իրարու հետ ճան-
չուորեցան, երկու կողմանէ ալ մեծա-
մեծ քաղաքավարու թիւններ և մշտնջե-
նաւոր բարեկամութեան երդմունքներ
եղան . որովհետև Գորսիզացիք իրենց
երկրէն դուրս շուտով կը բարեկա-
մանան իրարու հետ, իսկ իրենց կողմոյն
մէջ բոլորովին հակառակն է : Ասոր ըս-
տուգութիւնը նոյն պարագային մէջ
ալ տեսնուեցաւ . տէլլա Ռէպպիան և
Պարրիչինի մտերիմ բարեկամ մնացին
Իտալիոյ մէջ . իսկ Գորսիզա դառնալ-
նէն վերջը, շատ ցանցառ կը տեսնուէին
իրարու հետ, թէպէտ նոյն գեղը կը
բնակէին . և մեռնելնէն վերջը գիտցող-
ները զուրցեցին որ հինգ վեց տարիէ՛ ի

վեր իրարու բարև չէին տուած : Իրենց
զաւակներն ալ իրարմէ հեռու կեցան .
Կիլիֆուչչիոյ , Օրսոյի հայրը , զինուորա-
կան կենաց մէջ մտաւ . իսկ Կուխաիչէ
Պարրիչինի՝ փաստարան եղաւ : Երբոր
երկուքն ալ ընտանեաց գլուխ եղան ,
գրեթէ բնաւ չտեսնուեցան իրարու
հետ , և իրարու վրայօք չէին խօսէր .
արդէն արուեստով ալ բոլորովին կը
զանազանէին իրարմէ :

Սակայն օր մը , 1809 ին , Կուխաիչէ
Պասդիա քաղաքին մէջ լրագրի մը մէջ
կարդալով , որ Կիլիֆուչչիոյ հարիւրապե-
տը պատուոյ նշան տուած էր , ուրիշներու
առջև ըսաւ որ չէր զարմանար այս բա-
նիս վրայ , որովհետև *** զօրավարն՝
տէլլա Ռէպպիա ազգատոհմին պաշտ-
պանն էր : Ս.յս խօսքը Կիլիֆուչչիոյի ա-
կանջն հասուցին վեհնա . անիկայ ալ
գորսիգացոյ մը ըսաւ որ հայրենիքը
դարձած միջոցը՝ շատ հարուստ պիտի
գտնար զԿուխաիչէ , որովհետև կորսըն-
ցուցած դատաստաններէն աւելի ստակ
կը շահէր քան թէ յաղթածներէն : Պար-
րիչինի փաստարանը լսեց այս երգիծա-
բանութիւնը և չկրցաւ մոռնալ , 1812

ին, ետեւէ եղաւ իր գեղին գեղապետ
դրուելու, և շատ յոյս ունէր որ կը յա-
ջողի. բայց *** զօրավարը Կիլիֆուչչիոյի
կնոջ մէկ ազգականն առաջարկեց թող
թով ընդհանրական քաղաքապետին,
և խնդիրքը մէկէն կատարուեցաւ. Պար-
րիչինի հաստատ միտքը դրաւ որ Կիլ-
ֆուչչիոյի հնարքովը բանը փոխուեցաւ :
1814 ին, Նաբոլէոն կայսրութենէ ին-
կաժին պէս՝ զօրավարին ընտրածն իբրև
Պոնաքարդի կուսակից պաշտօնէն վար
ձգուեցաւ, ու տեղը Պարրիչինի անցաւ :
Անիկայ ալ վար ինկաւ Հարլ * ր-աւուրց
միջոցը. բայց այն մրրկալից օրերէն ետ-
քը, փառաւոր հանդիսիւ գեղապետու-
թեան կնիքն ու քաղաքական արձա-
նագրութիւնները նորէն առաւ :

Այս միջոցէն սկսեալ՝ աղէկ աստղ
ունեցաւ Պարրիչինի. և միակերպ սուտ
ամբաստանութիւններով կը ներդէր տէլ-
լա Ռէպալիա հազարապետը, որուն կէս
թոշակ կապուած ըլլալով Բիէզրանէրա
քաշուած կ'ապրէր. երբեմն տոյժ կը
պահանջէր անկէ՝ ըսելով թէ ձին գե-
ղապետին պարտիզին վնաս տուեր էր.
Երբեմն ալ եկեղեցւոյն յատակը նորու-

գելու պատճառանքով այն կատրուած գերեզմանաքարերը վերցընել կու տար, որոնց վրայ տէլլա Ռէպպիա ցեղին ազգանշանները կային: Թէ որ այժերը հազարապետին պարտիզին մատղաշ տունկերն ուտէին, գեղապետը կենդանեաց տէրերուն պաշտպան կ'ըլլար: Հեալհետէ ան համեմատաճառն որուն յանձնուած էր Բիէզրանէրայի Թղթատարութեան արկղիկը, և գիւղային պահապանն՝ որ անդամահատ ծեր զինուոր մըն էր, երկուքն ալ տէլլա Ռէպպիաներուն մարդիկն ըլլալով պաշտօնէ ինկան, և Պարրիչինի կողմին մարդիկ տեղերնին յաջորդեցին:

Հազարապետին կնոջ մահն հասաւ մեռաւ, և մեռնելէն առաջ իմացուց որ կ'ուզէր այն պղտիկ անտառին մէջ Թաղուիլ, ուր կենդանութեանն ատեն կ'ախորժէր պտրտիլ: Գեղապետը մէկէն իմաց տուաւ որ գեղին գերեզմանատունը Թաղուի, որովհետեւ ինքն իշխանութիւն չունէր առանձին Թաղման մը Թոյլ տալու: Հազարապետը կրակ կրտրած իմացուց որ մինչև որ հրամանը գայ, կնիկն ուզած տեղը պիտի Թա

դուէր, և հոն փոսը բանալ տուաւ: Գե,
ղապեան ալ գեղին գերեզմանատե,
ղոյն մէջ փոս բանալ տուաւ, և գիւղա,
կան հսկողութեան ձիաւոր զինուորնե,
ըր կանչեց, որպէս զի՝ կ'ըսէր՝ օրէնքը
յայլ թէ: Թաղման օրը երկու կողման
մարդիկն իրարու առջև ելան, և վախ
կար որ յարձակմունք մը ըլլայ տէլլա
Ռէպպիա տիկնոջ դիակն յափշտակե,
լու համար: Քառասունի չափ աղէկ
մը զինեալ գեղացիներ, զորոնք մեռե,
լոյն ազգականները բերեր էին, ստիպե,
ցին ժողովրդապետն եկեղեցիէն դուրս
ելլելու միջոցը՝ որ անտառին ճամբան
բռնէ, մէկալ կողմէն ալ՝ գեղապետն,
իր երկու սրդիքը, իրենց կողմնակից
ներն և յիշեալ ձիաւոր զինուորքը վրայ
հասան՝ դէմ կենալու համար: Երբոր
գեղապետը բռնադատեց և ուղեց որ
յուզարկաւորքն ետ դառնան, սպառ,
նալեաց և կրքի աղաղակներ բարձրա,
ցան օդուն մէջ. իր հակառակորդներն
աւելի բազմաթիւ էին և միտքերնին
դրած էին կամքերնին առաջ տանիլ:
Քանի մը հոգի հրացաննին լեցուցին,
ինչուան նաև կ'ըսուի թէ հովիւ մը

դէնքը գեղապետին վրայ շակեց . բայց
հազարապետը վեր վերուց անոր հրա-
ցանն ու ըսաւ . Ոչ ոք առանց իմ հրա-
մանիս պարպէ հրացանը : Գեղապետին
աչքը վախնալով , ետ քաշուեցաւ իրեն
հետևորդաց հետ . ան ատեն յուղարկա-
ւորութիւնը ճամբայ ելաւ , և կամաւ
երկայն ճամբան բռնեց՝ որպէս զի գե-
ղապետին տանն առջևէն անցնի : Հոն-
տեղ՝ անմտին մէկն որ յուղարկաւո-
րաց մէջ եկեր մտեր էր , խելքը փչեց
կեցցէ կաշար պռուաց . երկու իրեք հո-
զի պատասխանեցին ասոր , և տէլլա
Ռէպպիաներուն մարդիկն երթալով
բռնկելով՝ ուղեցին գեղապետին մէկ
եզն սպաննել , որ դիպուածով ճամբա-
նին կ'արգիլէր : Բարերազդարար հա-
զարապետն արգիլեց այս բռնութիւնը :
Մէկէն գեղապետը գրեց մեծ քաղա-
քապետին որ աստուածային ու մարդ-
կային օրէնքներն ուրի տակ առնուեր
էին , իր վեհափառութիւնն անարգուեր
էր , և թէ տէլլա Ռէպպիա հազարապե-
տը պոնաբարդեան դաւակցութեան
մը գլուխ կեցած էր՝ թագաւորութեան
Ժառանգութիւնը փոխել տալու և գրա-

զարացիս իրարու հետ ձգելու դիտմամբ :
Այս ամբաստանութիւնը չափազանց
ըլլալով հեռեանք չունեցաւ . հազարա-
պետն ալ իրեն կողմանէ մեծ քաղաքա-
պետին և թագաւորական գործակալին
գրեց խմացուց բանը . և վորաւոր ազ-
գականներու պաշտպանութեամբը՝ գե-
ղապետին դիտաւորութիւնը պարապ
եղաւ , տէլլա Ռէպպիա տիկնոջ դիակն
անտառին մէջ մնաց , և կեցցէ կայսրն
պռուացողը մինակ տասնըհինգ օրուան
բանտի դատապարտուեցաւ :

Պարրիչինի փաստարանը զայրացած՝
ուրիշ ղէնք ձեռք առաւ . հին արձանա-
գիր մը դուրս հանելով՝ ուղեց յափշտա-
կել հազարապետին ձեռքէն ջրոյ վտակ
մը որ ջաղացք մը կը դարձրնէր : Գա-
տաստանը տարի մը տևելէն ետքը եր-
բոր վճիռը պիտի դուրս ելլէր , և հաւա-
նականաբար հազարապետին կողմը ,
Պարրիչինի թագաւորական գործակա-
լին ձեռքը նամակ մը յանձնեց , Ակոս-
դինի անուամբ հռչակաւոր աւազակէ
մը գրուած , որուն մէջ մահ և կրակ կը
սպառնար գեղապետին՝ թէ որ իր պա-
հանջմունքէն ետ չկենար : Գեղապետն

ատով կը յուսար ատեանը հազարապե-
տին դէմ գրգռել, բայց նոյն միջոցին
Սկոտլինի նամակ մը գրեց թագաւո-
րական գործակալին՝ ծանուցանելով որ
սուտ էր իրեն անուշով գրուած նամա-
կը, և « թէ որ դանամ այս խարէու-
թիւնն ընողը, կ'աւելցընէր, վրէժս պի-
տի առնեմ »: Ասով յայտնի եղաւ որ
Սկոտլինին չէր նամակը գրողը. տէլլա
Ռէպպիաները զՊարրիչիները կ'ամ-
բաստանէին, ասոնք ալ դանոնք. եր-
կու կողմէն սպառնալեաց ձայներ կը
բարձրանային, և դատաւորք չէին կըր-
նար յանցաւորն որոշել:

Այս միջոցին Կիլֆուշիոյ հազարա-
պետն սպաննուեցաւ. և դատաստանին
առջև հետևեալ կերպով սպանութեան
պարագաները պատմուեցան: 18.. տար-
ւոյն օգոստոսի 2 ին, իրիկուան մութ
ատեն՝ կին մը որ ցորեն կը բերէր Բիէ-
դրանէրա, ետևէ ետև երկու հրացանի
պարպուելու ձայն լսեց, որ արձրկուած
էին խոր ճամբէ մը, և հարիւր յիսուն
քայլ էր իրմէն հեռաւորութիւնը: Ան-
միջապէս վերջը մարդ մը տեսաւ որ վա-
զելով այգիներու մէջ փախաւ ու դէպ

ի գեղը կ'երթար: Այս մարդը մէկ վայրկեան մը կեցաւ ու ետ դարձաւ նայեցաւ. բայց հեռաւորութենէն չըկրցաւ Յիէզրի կինն որոշել անոր դէմքը, թող որ բերանը որթի տերև մը ունէր որով գրեթէ բոլոր երեսը ծածկուած էր: Յիշեալ անձը ձեռքովը նըշան մը ըրաւ ընկերոջը զոր վկայն տեսած չէր, ետքը այգիներուն մէջ ան երևոյթ եղաւ:

Յիէզրի կնիկը ձգեց բնոր՝ վազեց սպանութեան տեղը, և գտաւ տէլլա Ռէպպիա հազարապետն արեան մէջ թաթխուած՝ ընդունած երկու հարուածներէն, բայց դեռ կենդանի: Խեղճը կերկերածայն կը պատերազմէր մահուան հետ, բայց բառ մը չէր կրնար արտաբերել. այս պարագան ճշմարիտ սեպեցին բժիշկները, քննելով որ վերքերը թոքին հանդիպած էին: Կինը վեր վերուց զինքն ու հարցմունքներ ըրաւ. հոգևարքը կ'ուզէր խօսիլ, բայց չէր կրնար հասկըցընել միտքը. և որովհետև կը ջանար ձեռքը զրպանը խոթել, կինն աճապարեց ու հանեց հոնկէ գրապանակն ու ձեռքը տուաւ. վիրա-

ւորեալն առաւ լաբիան ու ջանաց գրել
և յաջողեցաւ ալ մեծաւ դժուարու-
թեամբ . բայց վկան կարդալ չգիտնա-
լով՝ չհասկըցաւ գրած տառերը : Հազա-
րապետն ոգեապառ՝ Բիէդրի կնոջ ձեռ-
քը թողուց գրապանակը , ուժով մը
սխմելով զայն և արտաքոյ կարգի նայ-
ուածքով մը անոր նայելով , իբրև թէ
ուղէր ըսել թէ սպանչիս անունն է
գրածս :

Բիէդրի կինը գեղ դառնալու միջոցը՝
Պարրիչինի գեղապետին հանդիպեցաւ ,
որ իր վինչէնդէլլոյ որդւոյն հետ էր . և
գիշեր էր : Պատմեց կինը տեսածը .
գեղապետն առաւ ձեռքէն գրապանակն
ու պալատը վազեց՝ պաշտօնական ըզ-
գեստն հագնելու և հետը քարտու-
ղարն ու զինուորներ առնելու : Մագ-
դաղինէ Բիէդրի վինչէնդէլլոյի հետ մի-
նակ մնալով , առաջարկեց անոր որ եր-
թան օգնեն հազարապետին , յուսալով
որ դեռ ողջ էր . բայց վինչէնդէլլոյ պա-
տասխանեց որ եթէ այսպիսի վայրկենի
մը մէջ անանկ մարդու մը քովն եր-
թար՝ որ իր ազգատոհմին մահացու
թշնամին եղած էր , մէկէն իբրև անոր

մարդասպանը կ'ամբաստանուէր : Քիչ
ատենէն գեղապետը վրայ հասաւ, հա-
զարապետը մեռած դտաւ, դիակը վեր-
ցրնել տուաւ, և դէպքին արձանագրու-
թիւնը յօրինեց :

Պարրիչինի թէպէտ և այլայլած, մէ-
կէն հազարապետին գրապանակին վրայ
կնիքը դրաւ, և ձեռքն եղած քննու-
թիւնները դանց չըրաւ. բայց էական
բան մը դուրս չելաւ : Երբոր մասնաւոր
դրկուած դատաւորն եկաւ, բացին գրա-
պանակը, և արիւնացայտ երեսի մը վրայ
քանի մը տառեր գրուած տեսան. Ակոս
դի... որով դատաւորը յայտնի միտքը
դրաւ որ Ակոսդինի էր մարդասպանը :
Սակայն Աղաւնի տէլլա Ռէպպիա, սպա-
նելոյն աղջիկը, ուզեց քննել գրապանա-
կը, և երկար ժամանակ թղթատելէն
վերջը, աղաղակեց՝ մատուցն զգեղապետը
ցուցրնելով. Ահաւաղիկ ատիկայ է ըս-
պաննողը : Եւ սկսաւ պատմել որ քանի
մը օր առաջ հայրը նամակ մը ընդու-
նած ըլլալով իր որդիէն, այրեր էր զայն,
բայց առաջ գրապանակին մէջ գրեր էր
Օրսոյի հասցէն, որ փոխած էր իր զօ-
րատեղին : Իսկ արդ այս հասցէն չէր

գանուէր գրապանակին մէջ, և Աղաւնի
կը հետևեցընէր որ գեղապետը պատուեր
էր զայն, ուր անտարակոյս հայրն իր
սպանչին անունն ալ գրած էր, և թէ
անոր տեղը գեղապետն Ակոսդինիի ա-
նունը գրեր էր: Դատաւորն իրօք տե-
սաւ որ թուղթ մը կը պակսէր ըսած
տեղը. բայց ետքը դիտեց տեսաւ որ
ուրիշ տեղեր ալ թղթեր կը պակ-
սէին, և վկաներ ըսին որ հազարապե-
տը սովորութիւն ունէր գրապանակին
թղթերն ասանկ պատուելու՝ երբոր սի-
կարը կ'ուզէր վառել. որով հաւանա-
կան կրնար ըլլալ որ անուշադրութեամբ
գրուած հասցէն ալ պատուած ըլլար:
Ասկէ զատ, ըսուեցաւ որ գեղապետը
գրապանակն առած միջոցը՝ մթուն
պատճառաւ չէր կրնար կարդացած ըլ-
լալ, և թէ բնաւ տեղ մը կանկ առած
չէր պալատը մտնալէն առաջ, և զինուո-
րաց զլխաւորն հետը մէկտեղ տուն մը-
տեր էր, և տեսեր էր անոր ճրագ վա-
ռելն, զգրապանակը պահարանի մը
մէջ դնելն ու կնքելը:

Երբոր զինուորաց զլխաւորը վկայու-
թիւնը լմրնցուց, Աղաւնի ինքիրմէն

դուրս ելած ուրն ինկաւ և երդմամբ կը պաղատէր որ խոստովանի թէ արդեօք կտոր մը անոն մինակ թողուցեր էր զգեղապետը : Ձինուորականը քիչ մը տարակուսելէ վերջը՝ աղջկան այլայլութենէն դորոված, վկայեց որ մօտի սենեակը գացեր էր թերթ մը թուղթ բերելու, բայց վայրկեան մըն ալ չէր ուշացած, և նոյն միջոցին որ ինքը շօշափելով մթուն մէջ կը փնտռէր թուղթը՝ գեղապետը միշտ հետը կը խօսէր : Բաց ասկէ՝ կը վկայէր որ 'ի դարձին նոյն տեղը գտեր էր զարիւնստուգ գրասանակն, ուր նետեր էր զանիկայ գեղապետը :

Պարրիչինի մեծաւ հանդարտութեամբ պատասխան տուաւ. ըսաւ որ չէր մեղադրէր տէլլա Ռէպպիա օրիորդին զայրոյթը, և ընդ հակառակն յանձն կ'առնէր ինքզինքն արդարացընելու : Յըցուց որ այն իրիկունն ինքը գեղն էր. և վինչէնդէլլոյ որդին իրեն հետ տանը դրան առջևն էր սպանութեան միջոցը. իսկ Յուլանտուչիոյ՝ միւս որդին՝ ջերմէ բռնուած, անկողնէն բնաւ չէր ելած : Տանը բոլոր հրացանները դուրս հանեց,

որոնց և ոչ մէկը նոր պարպուած էր .
իսկ գրապանակին գալով , ըսաւ որ փու-
թացեր էր կնքել ու իր փոխանորդին
ձեռքն յանձնել զանիկայ , գուշակելով
որ հազարապետին հետ ունեցած թշնա-
մութեանը պատճառաւ կրնար կասկած
իյնալ իր վրայ : Հուսկ ուրեմն յիշեց որ
Ակոսդինի մահ սպառնացեր էր որուն
որ իր անունովը թուղթ գրած էր , և
թէ անշուշտ հազարապետին վրայ կաս-
կածի գացած ըլլալով սպաններ էր :

Տէլլա Ռէպպիա հազարապետին մա-
հուրնէն հինգ օր վերջը՝ Ակոսդինի զի-
նուորաց պղտի խմբէ մը պաշարուելով ,
զէնքը ձեռքը շունչը տուաւ : Վրան Ա-
ղաւնիի թուղթ մը գտան , որուն մէջ
կ'երդուրնցընէր զաւաղակն որ յայտնէր
թէ ինքն էր արդեօք թէ չէ մարդասպա-
նը : Ակոսդինի պատասխանած չըլլալով
այս թղթին , շատերն հետևեցուցին որ
սիրտ չէր ըրած աղջրկանն ըսելու որ
ինքն էր հօրը կեանքն առնողը : Սակայն
այն մարդիկն որ Ակոսդինիի բնաւորու-
թիւնն աղէկ կը ճանչնային , ցած ձայ-
նով կ'ըսէին՝ որ եթէ ինքն ըրած ըլլար
այդ սպանութիւնը , փոխանակ լռելու

կը պարծենար : Ուրիշ աւագակ մ'ալ ,
որ Պրանտուլաչիոյ կը կոչուէր , գրով
ծանոյց Աղաւնիի որ իր պատուոյն վրայ
երդուրննալով կը յայտնէր իր ընկերոջ
անմեղութիւնը . բայց իր միակ պատ-
ճառն այն էր՝ որ Ակոսդինի բնաւ ը-
սած չէր իրեն որ հազարապետին վրայ
կասկածած ըլլայ :

Հետեանք : Պարրիչինիներն անպարտ
ելան . դատաւորը դովեսաներ տուաւ
գեղապետին , և գեղապետն ալ այս առ-
թիւ ետ կեցաւ ջրոյ վտակին վրայ ըրած
պահանջմունքէն :

Աղաւնի պաշրադա մը յանկարծա-
խօսեց հօրը դիակին վրայ՝ բարեկամաց
ներկայութեանն առջև . անոր մէջ Պար-
րիչինիներուն դէմ ունեցած բոլոր ա-
տելութիւնը դուրս հանեց և յայտնա-
պէս սպանիչ կոչեց զանոնք , միանգա-
մայն եղբօրը վրէժխնդրութիւնը կը
սպառնար անոնց : Այս այն պաշրադան
էր , զոր նաւաստին Լիւդիայի առջև
կ'երգէր . աշխարհք ամէն գիտէր զայն
Գորսիգայի մէջ : Երբոր հօրը մահը լսեց
Օրսոյ , որ այն միջոցին հիւսիսային Գաղ-
ղիա կը գտնուէր , առժամանակեայ

հրաժեշտ մը խնդրեց, բայց չկրցաւ
ձեռք ձգել: Սկզբան քրոջմէն թուղթ
մը առնելով՝ Պարրիչինի աղգատոհմն
յանցաւ որ սեպեց. ետքը դատաստա-
նական քննութեան ամէն թղթերուն
օրինակն ընդունելով և դատաւորէն ալ
մասնաւոր նամակ մը, գրեթէ բոլորու-
մին համոզուեցաւ որ Ակոսդինի էր մե-
ղապարտը: Ամէն իրեք ամիսը մէջ մը
Աղաւնի թուղթ կը գրէր իրեն և կը
կրկնէր իր կասկածներն՝ զորոնք ինքը
հաւատարիք կ'անուանէր: Օրսոյ թէպէտ
չէր հաւտար, բայց գորսիգացի արիւնն
երակներուն մէջ կը բորբոքէր, և եր-
բեմն քիչ կը մնար որ իր քրոջ կարծիքէն
բլլար: Հանդերձ այսու՝ ամէն անգամ
որ կը պատասխանէր Աղաւնիի՝ կ'ըսէր
թէ իրեն բերած պատճառներն հաս-
տատուն հիմ մը չունէին և հետեւաբար
հաւատք ընծայել չէր բլլար անոնց. և
կ'արգիլէր որ այն նիւթին վրայօք մէջ
մ'ալ չգրէ իրեն. բայց 'ի զուր: Այս
կերպով երկու տարի անցնելէն վերջը,
Օրսոյ կէս թոշակով հրաժեշտ ընդու-
նեցաւ և դարձաւ իր հայրենիքը, ոչ թէ
վրէժ առնելու դիտմամբ անոնցմէ՝ որ

ինքը միտքը անմեղ դրած էր, հապա-
իր քոյրն ամուսնացրնելու համար և իր
պղտիկ ստացուածքները ծախելու, թէ
որ կարենար անոնցով այնչափ ստակ
ձեռք ձգել՝ որ կարենար ցամաք երկիր
ապրիլ:

է

Երկրորդ օրն Օրսոյ խմացուց որ Ա.Յ.
աչչիոյէն Բիէդրանէրա պիտի երթար.
չեմ գիտեր արդեօք Ս.ղաւնիին վայրենի
կերպերէն ամբշնալով կ'ընէր աս բանս,
թէ իրեն քրոջ տեսութեամբն հայրե-
նական տան յիշատակը բորբոքեր էր
սրտին մէջ: Սակայն հազարապետէն
խոստամունք առաւ որ Պասդիա դացած
ատենը իր տունն հանդիպի, և ինքն ալ
անոր խոստամունք տուաւ որ այժեամբս,
փասիաններ, կինճեր, և այլն, որսալ կու
տայ:

Ճամբայ ելլելու նախընթաց իրիկու-
նը, փոխանակ որսի երթալու՝ ուղեց որ
ծովածոցին վրայ ժուռ դան: Ս.ղաւնի
հետերնին չգնաց. հազարապետն ալ
միակերպ կը հեռանար երկու երիտաւ-

աարդաց քովէն՝ բանի չեկող թռչուններ,
բու վրայ հրացան պարպելու համար :
Գէպ 'ի Յունաց մատուռը կ'երթային,
ուսկից ծովածոցին գեղեցկագոյն դիրքը
կը տեսնուի, բայց առանց ուշ դնելու
գեղեցկութեանը : Պահ մը լռութենէ
ետքը՝ հարցուց Օրսոյ ցլիւղիս :

— Ի՞նչպէս կ'երևայ քեզի քոյրս :

— Շատ հաւնեցայ, պատասխանեց
աղջիկը . և վրայ բերաւ խնտալով՝ թէ
Քեզմէ աւելի իրեն հաւնեցայ, որով
հետև իրօք գորսիգացի է ինքը, իսկ դու
չատ կրթեալ վայրենի ես :

— Շատ կրթեալ . . . ընդ հակառակն
գիտնաս որ քանի որ ոտքս աս կղզոյն
վրայ դրի, սկսայ վայրենանալ : Հաղար-
ուամէկ ահաւոր մտածութեամբք պա-
շարուած կը տանջուիմ, անոր համար
անապատս քաշուելէն առաջ պէտք ու-
նէի որ հետդ մէյ մը խօսիմ :

— Կը տեսնաս քրոջդ համակամու-
թիւնը . քեզի օրինակ ան :

— Մի խաբուիր, քոյրս համակամու-
թիւն չունի . իրաւ դեռ խօսք մը խօսած
չէ հետս, բայց աչքին ամէն մէկ նայ-
ուածքէն հասկըցայ ինչ ուզելն ինձմէ :

— Ի՞նչ է նայինք ուզածը :

— Պզտի բան մը միայն . կ'ուզէ փոր-
ձեմ որ արդեօք հօրդ հրացանը կարաւ-
ներու պէս մարդ ալ կրնայ սպաննել :

— Ո՛հ, ի՞նչ ահաւոր մտածութիւն է
քուկդ . քոյրդ քեզի բան մը չէ ըսած :

— Թէ որ ինքը վրէժխնդրութեան
փափաքանօք լեցուած չըլլար, զիս տե-
սածին պէս հօրերնուս վրայ խօսած
կ'ըլլար, և անոնց անունը կու տար՝ զո-
րոնք ինքը — անիրաւ տեղը՝ դիտեմ —
հազարապետին մարդասպանքը կը սե-
պէ . բայց ինքը բերանը չբացաւ : Պէտք
է գիտնաս որ մեք Գորսիզացիքս վար-
պետորդի ենք . Աղաւնին գիտնալով որ
դեռ բոլորովին իր ձեռքը չեմ, չուզեր
աչքս վախցընել, որպէս զի չըլլայ որ
փախչիմ . բայց երբոր մէյ մը գահավի-
ժին ծայրը տանի հասցընէ զիս, և զլուխս
սկըսի պտըտիլ, ան ատեն կը հրէ զիս
անդունդին մէջ :

Այս ըսելէն ետքը՝ Օրսոյ հօրը մա-
հուանը քանի մը պարագաները պատ-
մեց Լիւդիա օրիորդին, որոնցմով ինքը
հաստատ միտքը դրած էր թէ Ակոսդի-
նի էր մարդասպանը : — Բայց կարելի

չեղաւ համոզել զԱղաւնի, վրայ բերաւ
Օրսոյ, ինչպէս վերջի նամակէն տեսայ :
Պարրիչինիներուն մահն երդուրնցած
է, և . . . տես վրադ ունեցած վատահու-
թիւնս . . . և թերևս անոնք հիմա այս
աշխարհիս մէջ չէին ըլլար, թէ որ նա-
խապաշարմամբ միտքը դրած չըլլար որ
վրէժխնդրութեան գործադրութիւնն
ինձի կ'իյնայ՝ իբրև գլուխ ընտանեաց և
իբրև պարտաւորեալ 'ի պատուոյս :

— Իրաւցընէ զքոյրդ կը զըպարտես :

— Դու իսկ չըսիր թէ գորսիգացի է .
ուստի ուրիշ գորսիգացւոց բնաւորու-
թիւնն ունի ինքն ալ : . . . Գիտես ինչու
համար երէկ տխուր էի :

— Ձէ . բայց քիչ մը ատենէ վեր մերթ-
ընդ մերթ մաղձոտութիւններ կ'ունե-
նաս . մեր ճանչուորելուն առաջին օրերն
աւելի դուարթ էիր :

— Երէկ, ընդ հակառակն, սովորա-
կանէն աւելի ուրախ և գոհ էի . որով
հետև տեսայ քու ընտանութիւնդ քրոջս
հետ . . . ետքը հազարապետն ու ես նա-
ւակով կու գայինք . գիտես ինչ զուրցեց
անզգամ նաւավարներէն մէկը . « Շատ
վայրի կենդանիներ սպաննեցիր դու՝

Օրս՝ Անտոն, բայց պիտի տեսնես որ Օւլանտուչչիոյ Պարրիչինին քեզմէ աւելի կտրիճ որսորդ է :

— Ի՞նչ կայ որ այս խօսքերուն մէջ միթէ միտքդ դրեր ես որ արտաքոյ կարգի որսորդ մըն ես :

— Բայց չե՞ս հասկընար որ անզգամը կ'ուզէր ըսել թէ Օւլանտուչչիոն սպաննելու չափ կտրիճ չես :

— Վախ կը ձգես վրաս . կ'երևայ որ ձեր կողմոյն օդն ոչ միայն տենդ կը բերէ, այլ և կը խենթեցընէ զմարդ . Բարեբաղդարար քիչ ատենէն մենք ճամբայ պիտի ելլենք հոստեղէն :

— Բայց առաջ Բիէդրանէրա պիտի հանդիպիք, ինչպէս որ քրոջս խոստացար :

— Իսկ թէ որ յանկարծ այս խոստմունքնիս չպահենք, անտարակոյս ահագին վրէժխնդրութիւն մը պիտի փրբթի գլուխնիս :

— Կը յիշես հօրդ մէկալ օր պատմածն հնդիկներու վրայ, որ հնդկային ընկերութեան քաղաքապետներուն կը սպառնան ինքզինքնին անօթութեամբ սպաննելու՝ թէ որ իրենց աղերսանքներուն մտիկ չընեն :

— Կ'ուզես ըսել որ դու ալ ինքզինքդ
անօթութեամբ կը սպաննես . բայց չեմ
հաւտար . շատ շատ օր մը անօթի կը
կենաս , ետքը Աղաւնի անանկ համով
պրոշչիոյ¹ մը կու տայ քեզի , որ չես
դիմանար ու կ'ուտես :

— Ծաղր կ'ընես զիս . բայց պէտք չէր
ասանկ վարուելիւ հետս : Գու միայն
պէտք էր արգելելիւ որ չխենթենամ ,
դու իմ առաջնորդս էիւ . իսկ հիմա . . .

— Զքեզ ամուր բռնելու համար՝ քու
անճնական և զինուորական պատիւդ
կարծեմ բաւական պէտք է ըլլայ . . . և
թէ որ կ'ուզես նէ՝ քու առաջնորդիդ յիշատակը :

— Ի՞նչ . արդեօք իմ վրաս ալ կը մըտածես :

— Մտիկ ըրէ , ըսաւ այն ատեն օրիորդը .
տղայ ես , տղու պէս վարուիմ հետդ :
Պզտիկութեանս միջոցը՝ մայրս աղուոր
մանեակ մը տուաւ ինծի , որուն կը ցանկայի
մեծապէս , բայց ըսաւ . — Ամէն անգամ
որ վիզդ կ'անցընես այս մանեակն ,

¹ Տեսակ մը եփած պանիր է սերով , որ Գործիկայի յատուկ է :

յիշէ որ դեռ գաղղիարէն չես գիտեր :
Մանեակին յարգը քիչ մը կորսուեցաւ
առջև , որովհետև խղճմտանքի առիթ
մը կ'ըլլար ինծի . բայց գործածեցի զայն
ու սորվեցայ գաղղիարէնը : Կը տեսնես
սա մատնին . եգիպտացի ակունք մ'է ,
բուրգի մը մէջ գտնուած՝ ինչպէս կ'ը-
սեն : Վրայի սրբագրերը գեղեցիկ նշա-
նակութիւն մը ունին . շիշը՝ մարդկային
կեանքը կը նշանակէ . իսկ վահանն ու
նիզակ բռնող ձեռքը կուիւ , պատերազմ .
որով կ'ուզէ ըսել թէ կեանքը պատե-
րազմ մըն է : Մհաւասիկ այս մատնին
քեզի կու տամ . երբոր միտքդ գորսի-
գացի գէշ մտածութիւն մը գայ , նայէ
անոր վրայ և միտքդ բեր որ կրից տը-
ւած պատերազմին յաղթելու է : — Կար-
ծեմ քարոզելու բաւական կերպ ունիմ :

— Կը խոստանամ որ . . .

— Նայէ որ զքեզ կախել չտաս , ը-
սաւ Լիւդիա խնտալով . ու դէպ 'ի հօրը
վազելով՝ Հայր իմ , զուրցեց , ձգէ խեղճ
թռչուններն , ու եկուր մեզի հետ բա-
նաստեղծէ Նաբոլէոնի քարայրին մէջ :

Ը

Ու իցէ բաժանումն հանդիսաւոր և վսեմ տեսարան մըն է, թէպէտ քիչ ժամանակի համար ըլլայ հեռաւորութիւնը: Օրսոյ որովհետև առաւօտանց շատ կանուխ ճամբայ պիտի ելլար քրոջն հետ, առջի իրիկուրնէ հրաժեշտի բարևը տուաւ Լիւդիոյ, չյուսալով որ անիկայ իր սովորական ժամանակէն առաջ անկողնէն ելլէ: Բայց շատ զարմացաւ երբոր երկրորդ առաւօտն հազարապետին հետ սուրճ խմելու ատենը Լիւդիա Աղաւնիի հետ ներս մտաւ: Այնչափ մեծ բան էր անգղիացի կնոջ մը՝ մա՛նուանդ Նէվիլ օրիորդին համար առաւօտեան ժամը հինգին ելլելն, որ Օրսոյ

— Շատ կը ցաւիմ, ըսաւ աղջրկան, որ ասանկ նեղութիւն յանձն առեր ես. անտարակոյս քոյրս արթնցուցած է ըզքեզ՝ թէպէտ ես ապրսպրած էի իրեն որ հանգիստ թողու. ո՞ գիտէ ինչեր ըսիր մտքէդ մեր վրայօք. թերևս հիմա կ'ուզես որ կախուած ըլլամ:

— Չէ, պատասխանեց օրիորդը ցած

ձայնիւ և խոսակերէն, որպէս զի հայրը
չհասկընայ: Տեսնելով որ երէկ իրիկուան
ըրած անմեղ կատակներուս համար
վշտացար, չուզեցի որ գէշ համարմամբ
բաժնուիս: Ի՛նչ ահաւոր մարդիկ էք
դուք Գորսիգացիքդ: Բարի ճանապարհ
ուրեմն. յուսանք քիչ ատենէն տես-
նուելու:

Օրսոյ պատասխանն չտուաւ. և իրա-
րու ձեռքը սխմեցին: Ան միջոցին Աղաւ-
նի մօտեցաւ իրեն, պատուհանի մը առ-
ջև տարաւ զինքն և մեծճարոյին տակը
պահած մէկ բան մը ցուցընելով՝ վայր-
կեան մը ցած ձայնիւ հետը խօսեցաւ:

— Բոյրս, ըսաւ Օրսոյ՝ Նէվիլ օրիոր-
դին, նոր տեսակ ընծայ մը կ'ուզէ ընել
քեզի. սակայն գիտնաս որ Գորսիգա-
ցիքս ուրիշ մեծ ընծայ չունինք տալու՝
բայց եթէ մեր սէրն որ բնաւ չպակսիր:
Բոյրս կ'ըսէ ինձի որ այս դանակին ըզ-
մայլեր ես. և անանկ յարդ կու տայ ինքն
ասոր՝ որ հրաման կը խնդրէ ինձմէ քե-
զի ընծայելու. ես ալ կը տարակուսիմ
թէ տամ արդեօք, որովհետև կը վա-
խեմ որ յանկարծ կը խնտաս վրանիս:

— Ընտիր դանակ մըն է, ըսաւ Լիւ-

դիա . բայց ձեր ազգատոհմին զէնքն ըլ-
լալով՝ չեմ կրնար ընդունիլ :

— Հօրս դանակը չէ , աղաղակեց Ա-
ղաւնի . թէ ողորոս թագաւորին տուածն
է մօրս մէկ ազգականին : թէ որ կ'ըն-
դունիս , մեզի շատ ախորժելի բան կ'ը-
նես :

— Տես , մի արհամարհեր թագաւորի
մը դանակն , ըսաւ Օրսոյ :

Լիւզիոյ փորձութիւնն եկաւ . որով-
հետեւ դիտէր թէ ինչ մեծ հետաքրք-
քութեան նիւթ պիտի ըլլար իր Լոն-
տրայի Ս . Յակոբի հրապարակին բնա-
կարանին մէջ թէ ողորոսի դանակը :
Ուստի առաւ ձեռքը դանակը , բայց
միանգամայն տարակուսանքով մը զուր-
ցեց Աղաւնիի . — Ազնիւ Աղաւնի , սիրտս
առաջ չերթար թող տալու որ անզէն
երթաս :

— Եղբայրս հետս է , պատասխանեց
աղջիկը պարծենկոտութեամբ , և հօրս
տուած պատուական հրացանն ունինք :

— Օրսոյ , լեցուցիր զանիկայ :

Նէվիլ օրիորդն ընդունեցաւ դանա-
կը , և Աղաւնի ժողովրդական նախա-
պաշարմամբ՝ փող մը պահանջեց իրմէ

իրբն վճարք, որպէս զի հատու զէնքը
մնաս մը չբերէ իր բարեկամութեան :

Վերջապէս բաժնուելու վայրկեանն ե-
կաւ . Օրսոյ նորէն օրիորդին ձեռքը սըխ-
մեց, իսկ Աղաւնի համբոյր տուաւ : Սրա-
հին պատուհանէն տեսաւ Լիւդիա եր-
կուքին ձի հեծնալը . և առաջին անգամ
Աղաւնիի աչքերուն մէջ չարագուշակ
ուրախութիւն մը նշմարեց : Տեսնելով
դորսիդացի կտրիճ ու անձնեայ օրիոր-
դը՝ բարբարոսական պատուոյ մը դա-
ղափարով մոլեալ, հպարտութիւնը ճակ-
տին վրայ նստած, շրթունքը հեզնա-
կան ժպիտով մը ծռած, և զինեալ եղ-
բայրն հեան առած՝ իբրև թէ ձախորդ
արշաւանքի մը տանելու համար, Լիւ-
դիոյ միտքն եկաւ Օրսոյի վախը . և ե-
րևակայեց մտքին առջև որ երիտասար-
դը կորստեան կը դիմէր : Այս վայրկե-
նին Օրսոյ գլուխը վեր վերուց ու տե-
սաւ զԼիւդիա . և չեմ գիտեր՝ արդեօք
անոր մտքէն անցածը գուշակելով՝ թէ
վերջին բարև մը տալու համար, առաւ
եզիպտացի մատնին, զոր շղթայէ մը կա-
խած էր, ու համբուրեց : Լիւդիա պա-
տուհանէն ներս քաշուեցաւ . ետքը քիչ

ատենէն նորէն հոն երթալով՝ տեսաւ
որ քոյր եղբայր կը հեռանային իրենց
պղտիկ ձիերուն արշաւատոյր ընթաց-
քովն ու դէպ 'ի լեռները կ'երթային :
Կէս ժամ ետքը՝ հաղարապետը դիտա-
կով ցրցուց զանոնք Լիւզիոյ որ ծոցին
վերջին ծայրն հասած էին , և Օրսոյ միա-
կերպ գլուխը դէպ 'ի քաղաքը կը դար-
ձընէր : Քիչ ատենէն ճահիճներուն ե-
տեն աներևութացան :

Լիւզիա ինքզինքը հայլի մէջ նայե-
ցաւ ու դէմքը տժգոյն գտաւ : Անկողնին
վրայ նետուեցաւ և ուղեց քուն ըլլալ ,
բայց չկրցաւ . և ետէ ետե այլ և այլ
զգացմունքներ կը խօսէին փոփոխակի
սրտին մէջ : Մենք ալ թողունք զինքը
որ խօսի :

Թ.

Այն միջոցին դեռ Օրսոյ և Աղաւնի
ճամբանին առաջ կը տանէին : Առջի
բերան ձիերնին վազցուցած ատեննին
չկրցան իրարու հետ խօսիլ . բայց երբ
զառիվայրերէ ելլելու միջոցը կենդա-
նիները կամաց կը քալցընէին , Այաչ-

չիոյ թողուցած բարեկամներնուն վրայ
խօսք կը բանային : Աղաւնի գովեստով
կը խօսէր Լիւդիոյ շնորհալի կերպին
վրայ . ետքը հազարապետին հարուստ
ըլլալն ուզեց իմանալ , և թէ արդեօք
Լիւդիա իր միածին աղջիկն էր : Ինծի
անանկ կ'երևայ , կը զուրցէր Աղաւնի ,
թէ սըր Նէվիլ շատ գուժ ունի վրադ . . .

— Օրսոյ լուռ կեցաւ — . . . մեր ազգա-
տոհմն ալ ատենօք հարուստ է եղեր ,
այսօրուան օրս ալ նշանաւորներէն մէկն
է կղզւոյս մէջ : Աղնուականութիւնը՝
գարորաւ ցեղերուն մէջ միայն մնացած
է հիմա . և մենք հնագոյններէն մէկն
ենք : Գիտե՞ս , Օրսոյ . թէ որ ես քու տեղը
ըլլայի , շիակէ շիտակ Լիւդիան կը խընդ-
րէի հօրմէն հարսնութեան . (Օրսոյ ու-
սերը թօթվեց) : Իրեն օժտովը Ֆալսէդ-
դայի անտառը կը գնէի և մեր բնակու-
թեան մօտ եղած այգիները , և տաշած
քարէ ալ աղուոր տուն մը կը շինէի :

— Խենթեցեր ես , Աղաւնի , պատաս-
խանեց Օրսոյ՝ ձին վազցընելով :

Այս կերպ խօսակցութեամբք շատ
մը ճամբայ ընելնէն վերջը , գեղ մը հա-
սան Պոզոնեանոյի մօտ , ուր ուզեցին

ճաշել և գիշերն անցընել բարեկամի մը
տուն : Մեծ մարդասիրութեամբ ընդու-
նուեցան . Գորսիգացոց հիւրասիրու-
թիւնն աղէկ ճանչնալու համար՝ պէտք
է փորձով տեսնել : Երկրորդ օրը բարե-
կամնին հետերնին ընկերեց փարսախ
մը տեղ . և բաժնուելու ատենը

— Կը տեսնա՞ս , ըսաւ Օրսոյի , սա ան-
տառն և Վաքին . մարդ մը՝ թէ որ ճա-
խորդ գործողութիւն մը ըրած ըլլայ՝ տա-
սը սարի հանգիստ անոնց մէջ կրնայ
պահուրտիլ ու ազատիլ զինուորաց ձեռ-
քէն : Այս անտառները կ'երթան կը միա-
նան վիցցավոնայի անտառին հետ . և
թէ որ պահուրտողը բարեկամներ ու-
նենայ Պոզոնեանոյի կամ շրջակայից
մէջ , իր կենաց ամէն պիտոյքը կը գըտ-
նայ : Ի՛նչ գեղեցիկ հրացան ունիս . ան-
շուշտ շատ հեռուն կը նետէ ասիկայ . ես
կարծեմ որ կինճէն զատ ուրիշ բան ալ
կրնաս սպաննել ասով :

Յետոյ գրկախառն համբուրիւ բաժ-
նուեցան իրարմէ . և իւրաքանչիւրն իր
ճամբան դնաց : Մեր ճանապարհորդքը
մօտեցան Բիէզրանէրայի , և երբ նեղ
կիրճէ մը պիտի անցնէին , եօթը ութը

հոգի տեսան հրացաններով զինեալ, ու
րոնցմէ մէկ երկուքը քարերու վրայ նըս-
տեր էին, այլք խտտին վրայ պառկեր,
իսկ մնացածները ոտքի վրայ և պահ-
պանութեան հետ կ'երևային. ձիերնին
ալ իրենցմէ քիչ հեռու կ'արածէին :
Աղաւնի պղտի դիտակով մը զննելէն
վերջը,

— Մեր մարդիկն են, աղաղակեց ու-
րախութեամբ. Բիւրուչչիոյ ճիշդ կատա-
րեր է առած հրամանը :

— Ո՞ր մեր մարդիկը :

— Մեր հովիւներն են. երկու օր ա-
ռաջ Բիւրուչչիոն զրկեցի որ երթայ
Ժողվէ այս կտրիճներն, որպէս զի քեզի
ընկերեն մինչև տուն. որովհետև չվայ-
լեր որ առանց բազմութեան մանաս
Բիւրուչչիոն. թող որ Պարրիչինինե-
րուն ձեռքէն ամէն բան կու գայ :

— Աղաւնի, ըսաւ Օրսոյ խտտութեամբ,
ես քանի հեղ զուրցեցի որ Պարրիչինի-
ներուն և քու անհիմն կասկածներուդ
վրայ չխօսիս հետս : Ես չեմ ուզեր ծի-
ծաղելի ըլլալ ասանկ դատարկ մարդ-
կանց խմբի մը հետ տունս մտնալով. և
կը զարմանամ ինչպէս Ժողվեր ես զա-
սոնք առանց ինծի իմաց տալու :

— Եղբայր իմ, մուցեր ես հայրենիքդ .
ինձի կ'իյնայ վրադ հսկելն երբոր դու
անխոհեմութեամբ վտանգի մէջ կը դնես
անձդ . ինչ որ ըրի՝ պէտք էր ըրած ըլ-
լայի :

Նոյն միջոցին հովիւները տեսան զի-
րենք , և ձիերնին հեծնալով՝ իրենց ընդ-
առաջ ինչան կայծակի պէս :

— Կեցցէ՛ Օրս' Անտոն , պոռայ առոյգ
ծերունի մը ճերմակ մօրուքով , որ գոր-
սիդացի չուխայէ կնգղաւոր վերարկու-
մը առած էր վրան՝ իր այծերուն մոր-
թէն աւելի հասա : Ճիշդ հօրը կը նմա-
նի . միայն աւելի բարձրահասակ և ա-
ւելի զօրաւոր է : Ի՛նչ ընտիր հրացան .
այս հրացանին վրայ պիտի խօսուի ,
Օրս' Անտոն :

— Կեցցէ՛ Օրս' Անտոն , աղաղակեցին
ամէնքը միաբերան : Գիտէինք որ վեր-
ջապէս կու գայ ինքը հոս :

— Ա՛հ , Օրս' Անտոն , զուրցեց աղիւ-
սի գունով յաղթանդամ հովիւ մը , ի՛նչ
ուրախութիւն պիտի զգար հայրդ թէ
որ հիմա հոս ըլլար գրեզ ընդունելու :
Ազնիւ անձ էր . դու այսօր զինքը տե-
սած կ'ըլլայիր՝ թէ որ խօսքիս մտիկ ը-

րած ըլլար, թէ որ թող առած ըլլար
որ ճիւղափչէի բանը ըննցընեմ. . . կրու
րիճ մարդը մտիկ չըրաւ ինձի, բայց հի-
մա աղէկ իմացած է որ ես իրաւունք
ունէի անանկ խօսելու:

— Բան մը չէ, պատասխանեց ծերու-
նին. ուրիշ մնաս մը չկայ՝ բայց եթէ քիչ
մը աւելի սպասած կ'ըլլայ ճիւղափչէն:

— Կեցցէ՛ Օրս' Անտոն, պռուպիւն դար-
ձեալ ամէնքը միաբան և տասը տաս-
ուերկու հրացան պարազուեցան:

Օրսոյ առջի բերան չկրցաւ բերանը
բանալ բազմութեան մէջ, որ չորս կող-
մին առեր էին և ամէնքը մի և նոյն մի-
ջոյին խօսելով՝ ձեռքը կ'ուզէին թօթ-
վել: Վերջապէս հրամայողական և սաս-
տող կերպով մը

— Բարեկամք, ըսաւ, շնորհակալ եմ
ձեր՝ իմ և հօրս վրայ ցըցուցած սիրոյն.
բայց չեմ ուզեր որ մէկը ինձի խոր-
հուրդ տայ. ես գիտեմ ընելիքս:

— Իրաւունք ունի, իրաւունք ունի,
գոչեցին հովիւները: Բաւական է գիտ-
նաս որ մենք քուկդ ենք:

— Գիտեմ. բայց հիմա մարդու պէտք
չունիմ, որովհետեւ տունս վտանգի մէջ

չէ : Ձեզ տեսնեմ, եղէք ձեր այծերուն
դայցէք . ես Յիէղրանէրայի ճամբան դի-
տեմ, առաջնորդի պէտք չունիմ :

— Բնաւ մի վախնար, Օրս' Մնտոն,
լսաւ ծերունին . անունք այսօր չեն հա-
մարձակիր երևնալու . մուկը կը վազէ
ծակը կը մանայ՝ երբոր կատուն դուրս
կ'ելլէ :

— Կատու դու ես, ճերմակ մօրուք,
պատասխանեց Օրսոյ : Ի՞նչ է անունդ :

— Ի՞նչ, չեն ճանչնար դիս, որ այնչափ
անդամ խածնող ջորւոյս վրայ տուեր
եմ գրեզ : Միտքդ չիգար Բոլոյ կրիֆֆոն.
Կտրիճ մարդ է, ինչպէս կը տեսնես, և
հողւով ու մարմնով տէլլա Ռէպպիա-
ներուն հեա է : Երբոր հրացանդ խօսի
օր մը, խօսք մը դուրցէ՞ ձեռքի ծեր հրա-
ցանս, որ իր ախրոջն հասակակից է,
լուռ չկենար . ապահով եղիր, Օրս' Մն-
տոն :

— Աղէկ, աղէկ . բայց հիմա դայցէք
ու թող տուէք որ մենք ճամբանիս շա-
րունակենք :

Վերջապէս հովիւներն հեռացան,
բայց մերթ ընդ մերթ ճամբուն բարձր
տեղերը կանկ կ'առնէին նայելու համար

Թէ արդեօք դարանի նատողներ կային ,
և միշտ կը ջանային Օրսոյի և իր քրոջը
մօտ ըլլալու , որպէս զի պէտք եղած ա-
տեն օգնութեան հասնին : Եւ ծերունին
Բոլոյ կրիֆֆոյ կ'ըսէր ընկերացը . Ես
հասկըցայ Օրսոյի միտքը . մտքի գրածը
չուզեր ըսել . բայց անշուշտ պիտի ընէ :
Բոլորովին հօրն ելած է : Ես խօսք կու-
տամ որ ամիս մը չերթար՝ գեղապետին
մտրթէն տիկ մը կրնայ շինուիլ :

Ասանկով Օրսոյ աէլլա Ռէպպիա մը-
տաւ իր գեղն և հասաւ իր գարարայ
հարց հին տունը : Տէլլա Ռէպպիանե-
րուն կողմնակիցները , որ երկայն ատենէ
'ի վեր անդուխ մնացած էին , բազմու-
թեամբ ընդառաջ եկեր էին , և գեղին
բնակիչներէն անոնք՝ որ չէզոք էին՝ գլու-
ներնուն առջևը կեցած , անոր անցնելը
տեսնալ կ'ուզէին . իսկ Պարրիչինիները
տուներնին քաշուած՝ վանդակապիեղկե-
րուն մէջէն կը նայէին :

Բիէզրանէրա գեղը անկանոն ձևով
շինուած է , ինչպէս Գորսիգայի բոլոր
գեղերը , աներն առդիս անդին զբաւած
են պղտի սարահարթի մը վրայ : Գեղին
մէջտեղը մեծ կաղնի ծառ մը բարձրաւ

շած է . քովը կրանխտեայ աղբիւր մը ,
ուր փայտեայ խողովակով մտնիկ ակուն
քէ մը ջուր կու գայ : Այս հասարակաց
օգտակար շինուածքը տէլլա Ռէպպլիա
ներուն ու Պարրիչինիներուն արդիւնքն
է . բայց ասով չկարծուի որ ատենօք այս
երկու ցեղերուն մէջ սէր և խաղաղու
թիւն կը տիրէ եղեր . ընդ հակառակն՝
նախանձու պատճառաւ ըրած են այս
բանս : Տէլլա Ռէպպլիա հազարապետը
պզտի գումար մը դրամոյ դրկեր էր դիւ
ղական բարեկարգութեան գլխաւորաց՝
աղբիւրի մը շինութեանն համար . աս
տեսնելով Պարրիչինի փաստարանն ինքն
ալ ստակ դրկեց , և երկուքին նախան
ձորդութենէն օգուտը Բիէդրանէրայի
եղաւ : Կասնիին և աղբիւրին քով դա
տարկ տեղ մը կայ՝ զոր հրապարակ կը
կոչեն , ուր պարապօրդները կը ժող
վուին իրիկուան դէմ . երբեմն թուղթ
կը խաղացուի հոն , և տարին անգամ
մը՝ բարեկենդանի մէջ՝ պար կը բռնեն :
Հրապարակին երկու ծայրերը մէյմէկ
կրանխտեայ շէնք կայ՝ աւելի բարձր քան
թէ լայն . և են տէլլա Ռէպպլիաներուն
և Պարրիչինիներուն աշտարակները :

ճարտարապետութիւննին նոյն, բարձրութիւննին ալ նոյն, որով կը տեսնուի որ բարդն ինչուան այն ատեն հաւասար բռնած էր երկու ազգատոհմերը:

Գէշ չլլար կարծեմ բացատրելը թէ ինչ են այս աշտարակ ըսուածները: Քառակուսի շէնք մ'է՛ գրեթէ քառասուն սաք բարձրութեամբ. դուռը նեղ է և հողէն ութը սաք բարձրութեամբ, ուր շիտակ սանդղէ մը կ'ելլըցուի: Գրան վրայ դուրս ելած պատուհան մը կայ, որուն տակէն ծակ մը բացուած է. ան ծակէն առանց վտանգի՝ ներս դալ ուղող թշնամի մը կրնայ սպաննուիլ: Պատուհանին և դրան միջոցին վրայ երկու վահանակ կայ, որոնցմէ մէկուն վրայ ասենօք ճենովայի խաչը քանդակուած էր. իսկ մէկային վրայ տանտէր ազգատոհմին կնիքը կը տեսնուի: Պատուհանին շրջանակին և վահանակներուն վրայ հրացանի դնտակներու հետքեր կային. այս պարագայն ալ գիտնալէն վերջը՝ Գորսիդայի միջին դարու բնակարանի մը դադափարն առած կ'ըլլայ ընթերցողը: Մուցայ ըսելու որ բնակութեան շէնքերն ալ աշտարակներուն

հետ միացած կ'ըլլան, և երբեմն ներքին հաղորդակցութիւն ունին :

Տէլլա Ռէպպլիաներուն աշտարակն ու տունը Բիէդրանէրայի հրապարակին հիւսիսային կողմը բռնած են, իսկ Պարրիչինիներուն աշտարակն ու տունը՝ հարաւային կողմը : Հիւսիսային կողմին աշտարակէն մինչև աղբիւրը՝ տէլլա Ռէպպլիաներուն ճեմելիքն է, իսկ դիմացի կողմը՝ Պարրիչինիցեղին : Հաղարապետին կնոջ թաղմանէն ետքը՝ ոչ երբէք երկու ազգատոհմից անձինքներէն մէկը մէկալ ցեղին ճեմելեաց վրայ տեսնուեր էր : Օրսոյ շիտակ երթալ ուղելով՝ դեղապետին տանն առջևէն պիտի անցնէր, բայց Աղաւնի խմաց տուաւ և բռնադատեց որ նեղ փողոց մը մտնան, որպէս զի չստիպուին հրապարակէն անցնիլ տուն մտնելու համար :

— Ինչո՞ւ համար նեղութիւն պիտի քաշեմ, պատասխանեց Օրսոյ . հրապարակն ամենուն չէ : — Ըսաւ և ձին առաջ քշեց :

— Կարի՞ճ սիրտ, ըսաւ ինքնիրեն Աղաւնի : . . . Ո՛վ հայր իմ, վրէժդ պիտի առնուի :

Հրապարակն որ հասան, Աղանի Պարրիչիններուն տանն ու եղբօրը մէջ անցաւ, և միշտ աչքը անկած կը նայէր թշնամեաց պատուհաններուն վրայ: Տեսաւ որ պատնիշով ամրացուցեր էին, և պատուհաններուն վարի կողմը մեծ կոճղերով գոցելով՝ վերերէն նեղ ծակեր բացեր էին, որպէս զի եթէ յարձակմունք ըլլայ վրանին՝ կարենան ապահովութեամբ յարձակողներուն վրայ հրացան պարպել:

— Վաս մարդիկ, ըսաւ Աղանի: Տես, եղբայր իմ, սկսեր են ներս քաշուիլ. բայց օր մը պէտք է դուրս ելլեն:

Օրոյի՝ հրապարակին հարաւային կողմէն անցնիլը մեծ տպաւորութիւն ըրաւ Քիէզրանէրայի բնակչաց վրայ, և յանդդնութիւն սեպուեցաւ: Չէզոք կեցողներուն համար մեծ խօսակցութեան նիւթ մը եղաւ այս բանս՝ իրիկունը կաղնի ծառին տակ ժողվուած ատեննին:

— Աղէկ որ, կ'ըսէին, Պարրիչինին տըղաքը հոս չէին. չէ նէ՛ անոնք հօրերուն պէս համբերող չեն, և թերևս իրենց թշնամայն յանդդնութիւնը կը պատժէին նոյն միջոցին: — Միտքերնիդ

պահեցէք, տղար, ինչ որ ձեզի հիմա
պիտի ըսեմ, զուրցեց ծերուն մէկն որ
դեղին պատգամն էր. այսօր Աղաւնիի
դէմքը դիտեցի. անոր դիտուն մէջ բան
մը կը պարտի: Օղուն մէջ վառօղի հո-
տեր կ'առնեմ. քիչ ատենէն սպանդա-
նայի միս աժան դնով պիտի ծախուի
Բիէզրանէրայի մէջ:

Ժ

Օրսոյ մատաղ հասակին մէջ բաժ-
նուած ըլլալով հօրմէն, չէր ճանչցած
զանիկայ: Տասնըհինգ տարուան էր Բիէ-
զրանէրայէն Բիզա դացած միջոցն ուս-
ման դրուելու համար. հոնկից ալ զի-
նսուորական դպրոց անցեր էր, այն մի-
ջոցին որ Կիլիֆուշիոյ կայսերական դրօ-
շակն Եւրոպիոյ մէջ կը քալցընէր: Յա-
մաք երկրի վրայ մէկ քանի անգամ տե-
սեր էր զանիկայ, և միայն 1845 տա-
րուցն այն վաշտին մէջ գտնուեցաւ՝ ու-
րուն կը հրամայէր իր հայրը: Բայց հա-
զարապետը զինսուորական բարեկար-
գութեան սաստիկ պահանջող ըլլալով,
իր որդւոյն հետ ալ անանկ կը վարուէր՝

ինչպէս ուրիշ երկտասարդ տեղակալ
ապայից հետ, այսինքն մեծ խառու թեամբ:
Սասնկով երկու տեսակ դաղափար ա-
ռեր էր Օրսոյ հօրը վրայ. մէյ մը միտ-
քը կը բերէր զանիկայ Բիէդրանէրայի
մէջ, որ սուրն իր ձեռքը կու տար, և որ-
սէն դարձած միջոցը թող կու տար որ
պարպէր իր հրացանը. նոյնպէս կը յի-
շատակէր անոր առաջին անգամ իրենց
հետ սեղան նստեցընելը զինքը երբոր
դեռ պզտի տղայ էր: Մէյ մ'ալ միտքը
կու դար տէլլա Ռէպպիա հաղարապետն,
որ զինքը բանտ կը փակէր ու և իցէ երկ-
տասարդական պակսութեան մը հա-
մար, և տէլլա Ռէպպիա անուներ միայն
կու տար իրեն: — Տեղակալդ տէլլա Ռէպ-
պիա, պատերազմի տեղոյդ վրայ չես.
իրեք օր բանտ քեզի: — Զինուորներդ
պահանջողաց զնդէն շատ հեռացեր են.
հինգ օր բանտ: — Ընտանեկան դիտարկ
դրեր ես գլուխդ՝ կէսօրուրնէ հինգ վայր-
կեան վերջը. ութ օր բանտ: Մէկ ան-
գամ մը միայն, Շատ աղէկ, Օրսոյ, գոհ
եմ՝ զուրցեր էր, բայց նայէ որ խոհեմ
լլաս: Բայց Բիէդրանէրա ստացած ըզ-
գացմունքն այս վերջին յիշատակները

քորորովին Օրսոյին մտքէն կը ջնջէին . իր
տղայութեան տեղեաց և իր սիրելի մօ-
ջը գործածած կահկարասեաց տեսու-
թիւնը՝ քաղցր ու միանգամայն սրտա-
ճմլիկ զգացմունքներով կը յուզէին իր
սիրտը . առնցմէ զատ , այն փոթորկա-
լից ազագայն որ կը գուշակէր իր ան-
ձին համար , այն յառաջատես՝ բայց
ստորտամ՝ անհանգստութիւնն որ քրոջը
կերպը կու տար իրեն , միանգամայն այն
վախն ալ թէ չըլլայ որ Ս. յաչչիոյի բա-
րեկամքն այցելութեան եկած միջոցին՝
գոհ չըլլան իր տանը վրայ , այս ամէն
մտածութիւնները կը տազնապէին զին-
քրն ու վհատութիւն կը բերէին վրան :

Ընթրիքի միջոց սեպած ընկուզէ մեծ
բազմոցի մը վրայ նստաւ , ուր կը նըս-
տէր հայրն ընտանեկան սեղանի միջոց .
և ժպտելն եկաւ երբ տեսաւ զՍ. դանի
որ կը պատկառէր իրեն հեա սեղան
նստելու : Բայց ախորժեցաւ որ քոյրն
կերակրոյ միջոց չխօսեցաւ հեան և մէ-
կէն առանձնացաւ . վասն զի սիրտը
շատ ելած ըլլալուն՝ կը վախէր որ տե-
ղիք կու տար անոր պատճառաբանու-
թիւններուն : Գլուխը ձեռքին կռթրն-

ցուցած՝ երկայն ատեն անշարժ կեցաւ ,
և վերջի տասնուհինգ օրուան անցուցած
կենաց տեսարանները մտքէն կ'անցը-
նէր : Սարսափով մը կը մտածէր որ ա-
մէնքը կը սպասէին տեսնալ թէ ինչ
կերպ պիտի բռնէր Պարրիչինիներուն
հետ , և թէ վատ մարդ պիտի սեպուէր՝
եթէ վրէժխնդրութիւն չընէր : Բայց
ուսկից վրէժ պիտի առնեմ՝ կ'ըսէր ինքն
իրեն : Չէր կրնար Պարրիչինիներուն
վրայ ձգել յանցանքը . իրօք իր ազգա-
տահմին թշնամիներն էին , բայց իրեն
կ'երևար որ Գորսիգացուց յատուկ բար-
բարտական նախապաշարմունք մըն էր
զանոնք մարդասպան սեպելը : Երբեմն
Նէվիլ օրիորդին առած գոհարին վրայ
կը նայէր և ցած ձայնով կը կրկնէր .
« Կեանքը պատերազմ մըն է » . բայց
վերջապէս հաստատութեամբ մը ինքն
իր անձին ըսաւ . « Պիտի յաղթեմ այս
պատերազմին » : Այս աղէկ մտածու-
թեամբ զօրացած՝ ոտքի վրայ ելաւ , և
կանթեղն առած դէպ իր սենեակը պիտի
երթար , մէյ մ'ալ դուռը զարնուեցաւ :
Ժամանակն այցելութեան ատեն չէր :
Սղառնի մէկէն երևցաւ աղախնայն հետ .

— Բան չկայ, ըստ դէպ 'ի դուռն երթալով: Սակայն բանալէն առաջ հարցուց թէ ո՞վ էր զարնողը: Անոյշ ձայն մը պատասխան տուաւ՝ թէ Ես եմ: Մէկէն փայտեայ ձողն որ դրան լայնութեան վրայ ձգուած էր ամրութեան համար՝ վերցուեցաւ, և Աղաւնի սեղանատուն մտաւ տանամեայ աղջկան մը հետ, որ բռնան էր, պատառատուն զգեստներ հագած, գլուխը խեղճ թաշկինակով մը ծածկած, և մազերուն ծայրերը կ'երևային՝ ադուաւի թևերուն պէս սև: Նիհար էր այդ աղջիկը, գունաթափ, և մորթն արևէն էրած. բայց աչքին մէջ արթնութիւն կը փայլէր: Զօրայ տեսնալով՝ վախով մը կանկ առաւ և դեղացւոյ քաղաքավարութեամբ ծռեցաւ. ետքը Աղաւնիի հետ ականջէն խօսեցաւ և նոր սպաննուած փասիան մը տուաւ անոր:

— Իմ կողմանէս շնորհակալ եղիր, Քիլի, հօրեղբօրդ, ըստ Աղաւնի: Ի՞նչ պէս է, աղէկ է ինքը:

— Շատ աղէկ է, և պատրաստ է ծառայելու քեզի: Աւելի կանուխ չկրցայ դալ, որովհետև շատ ուշացաւ. իրեք ժամ մաքիին մէջ սպասեցի իրեն:

- Չես ընթրած :
- Չէ, ժամանակ չունեցայ :
- Հիմա քեզի կու տանք : Հօրեղբայրդ հայի կարօտութիւն ունի :
- Քիչ մը, բայց անկէ աւելի վառօղի պէտք ունի :
- Ես քեզի մէկ հաց մը կու տամ իրեն համար՝ և վառօղ ալ, բայց ըսէ իրեն որ խնայութեամբ գործածէ այս վերջինը, որովհետեւ սուղ է :
- Աղաւնի, հարցուց Օրսոյ դաղղիարէն, որուն կ'ընես այս ողորմութիւնը :
- Հոտեղացի աղքատ աւաղակի մը, պատասխանեց Աղաւնի նոյն լեզուով. այս պղտիկն իր եղբօր աղջիկն է :
- Կարծեմ ողորմութիւնդ լաւագոյն տեղ պէտք էիր տալ : Ինչո՞ւ համար վառօղ կը դրկես անդգամ մարդու մը՝ որ անով անօրէնութիւններ պիտի ընէ : Թէ որ այս աստիճանի կարեկցութիւն չըլլար հոս աւաղակներուն՝ վրայ, շատոնց 'ի վեր անոնք աներևութացած կ'ըլլային Գորսիդայէ :

1 Աւաղակ ըսածնիս՝ Գորսիդացւոյ ասմամբը աստիկ դէշ նշանակութիւն չունի :

— Մեր երկրին ամենէն զէշ մարդիկները՝ մաքիներուն մէջ պահուրատուները չեն :

— Հայ տուր, անոր խօսք չունիմ, բայց բնաւ չեմ ուզեր որ վառօղ տրուի :

— Եղբայր իմ, պատասխանեց Աղաւնի ծանր կերպով, դու ես տան տէրը, և ամէն բան քուկդ է. բայց առաջուցմէ կ'իմացընեմ քեզի՝ որ ես մեծատու կուտամ այս աղջրկան որ երթայ ծախէ, թէ որ չկարենամ վառօղ տալ աւաղակի մը : Թէ որ վառօղ չունենայ, ի՞նչպէս պիտի կուուի գիւղային պահպանութեան ղինուորաց չեա :

Այն միջոցին պզտի աղջիկը հացի կըտորն անյագ աչքով կը լափէր, և փոփոխակի ուշադրութեամբ Օրսոյի և Աղաւնիի երեսը կը նայէր, ուզելով իմանալ ըսածնին :

— Ի՞նչ է նայինք այս մարդուն աւաղակ կոչուելուն պատճառը, հարցուց Օրսոյ : Ի՞նչ անօրէնութիւն ըրեր է որ դացեր մաքիին մէջ պահուրատու է :

— Պրանտօլաչչիոյ անօրէնութիւն ըրած չէ, ըստ Աղաւնի : ԶՅովհաննէս Օրիցոյոյ սպաննած է, որ իր հօրը ըս-

պաննայն եղած էր՝ այն միջոցին որ ինքը բանակին մէջն էր :

Օրսոյ գլուխը դարձուց, կանթեղն առաւ, և առանց պատասխանելու՝ սենեակն առանձնացաւ : Այն ատեն Աղաւնի վառօղ և պաշար տուաւ պղտիկին, և ինչուան գուռը տարաւ զինքը, ուր ըսաւ. « Ըսէ՛ հօրեղբօրդ որ ամէն բանէ աւելի՛ ապէկ հսկէ Օրսոյի վրայ » :

ԺԱ.

Օրսոյի քունը չտարաւ մէկէն, անոր համար երկրորդ առաւօտը շատ ուշ արթնացաւ : Անկողնէն ելածին պէս՝ առջի բանը իր թշնամեաց տունն աչքին հանդիպեցաւ և անոնց պատուհաններուն նեղ ծակերը : Վար իջաւ, հարցուց քրտոջն ուր ըլլալը : — Խօհանայն է, պատասխանեց Սամէրիա անուն աղախիներ, գնտակ կը ձուլէ : Այսպէս կռուոյ և պատերազմի գաղափար կ'ելլէր միշտ Օրսոյի առջև :

Աղաւնի ամբողջի մը վրայ նստած էր, առջևը շատ մը նոր թափած կա-

պարեայ գնտակներ , որոնց աւելորդ
ծայրերը կը կտրէր :

— Ի՞նչ բանի ետեւ ինկեր ես , հար-
ցուց Օրսոյ :

— Տեսայ որ հաղարապետին հրացա-
նին համար գնտակ չունիս , պատասխա-
նեց քոյրն անոյշ ձայնիւ , կաղապար մը
դասայ ու մինչև իրիկուն քսանը չորս լուց-
կի (գղ. Cartouche) պիտի պատրաս-
տեմ քեզի , եղբայր :

— Փանք Աստուծոյ պէտք չունիմ :

— Առանց պաշարի կենալու չէ , Օրս՝
Անտոն . մտռցեր ես երկիրդ և քաղա-
քակիցքդ :

— Թէ որ մտռցած ալ ըլլայի , մէ-
կէն միտքս բերած կ'ըլլայիր դու : Կ'ու-
զէի խմանալ թէ քանի մը օր առաջ մեծ
անտուկ մը հասան հոս :

— Այո , եղբայր . կ'ուզեն խուցիդ աա-
նիմ :

— Դո՛ւ տանիս . անիկայ վերցընելը
քու բանդ չէ . . . Մարդ մը չկայ հոս որ
խուցս բերէ զանիկայ :

— Կարծածիդ չափ տկար չեմ , պա-
տասխանեց Աղաւնի՝ բազուկները ցու-
ցընելով : Քեզ տեսնամ Մալէրիս , ը-
սաւ աղախնոյն , օգնէ ինձի :

Եւ սկսաւ ինքիրեն վերցընել բոլոր
անտուկին ծանրութիւնը . բայց Օրսոյ
աճապարեց ու օգնեց :

— Աս անտուկին մէջ քեզի համար
այ բաներ կան սիրելի Աղաւնիս , զուր-
ցեց Օրսոյ : Չես մեղադրեր անշուշտ աղ-
քատօրէն ընծաներ բերելուս . որովհե-
տև կէս թոշակով պաշտօնակալի մը
քրակը շատ լեցուն չկրնար ըլլալ :

Ըսաւ և անտուկէն զգեստներ հա-
նեց , շալ մը և ուրիշ աղջրկան վերա-
բերեալ բաներ :

— Ի՛նչ աղուոր զգեստներ , աղաղա-
կեց Աղաւնի . մէկէն բալլիքի տակ կըղ-
պեմ որ չաւրուին : Հարանիքիս համար
կը պահեմ զասոնք , ըսաւ տխուր ժպի-
տով մը , որովհետև հիմա սուգի մէջ եմ :

Եւ եղբօրը ձեռքը պագաւ :

— Արուեստակեալ բան մըն է , քոյր
իմ , այսչափ երկար ատեն սուգ բռնելը :

— Երդուընցեր եմ , ըսաւ Աղաւնի
հաստատութեամբ , սուգի զգեստները
չթողլու . . . Եւ պատահանէն Պարրի-
չինիներուն տունը կը նայէր :

— Սուգի զգեստները չթողլու՝ մինչև
որ չկարգուիս , անանկ չէ :

— Ես այն մարդուն հետ միայն կը կարգուիմ, որ իրեր բան պէտք է ըրած ըլլայ . . . Եւ դարձեալ ձախողակ նա յուածքով մը թշնամեաց տան վրայ կը անկէր աչքը :

— Գեղեցիկ ես, կը զարմանամ ինչուան հիմա չկարգուելուդ վրայ : Չկայ դքեզ ուղտդ մը :

— Ո՞վ կ'ուզէ խեղճ որբ աղջիկ մը . . . Ասկէց զատ՝ ան մարդն որ իմ սուգի ըզգեաններս հանել պիտի տայ, պէտք է որ դիմացի տան կնիկները սգաւոր ընէ :

— Քոյրս խենթեցած է, ըսաւ ինքնիրեն Օրայ, և խօսակցութիւնը շտաքցընելու համար՝ պատասխան չտուաւ Աղաւնիի :

— Եղբայր իմ, զուրցեց Աղաւնի, ես ալ քեզի ընծայ պատրաստած եմ : Բերած զգեաններդ՝ հոստեղի համար չափազանց գեղեցիկ են, վրայի ազուոր հագուստդ երկու օրուան մէջ կտոր կը տոր կ'ըլլայ, թէ որ անով մաքիին մէջ մանեա : Եւ գորոց մը բանալով, որտորդի ամբողջ հագուստ մը դուրս հանեց, զոր ինքը ձեռքովը շինած էր, և հագուց Օրայի այդ թաւիշէ կանաչագոյն զգեա-

տը, որ ետևի կողմէն մեծ գրպան մը
ունէր. դուխն ալ սեւ թաւիչէ սրա-
ծայր գլխարկ մը դրաւ՝ մետաքսով ասդ-
նեգործած և ծայրը ծոպով զարդա-
րուած :

— Այս ալ հօրերնուս գօտին՝ է. իր
դանակը զգեստիդ գրպանին մէջն է.
երթամ բերեմ իր ատրճանակն ալ :

— Աւաղակի կերպարանք առի՝ ըսաւ
Օրսոյ աղախնոյն, պզտի հայլի մը մէջ
ինքզինքը նայելով :

Օրսոյ աս նոր զգեստով նախաճա-
շիկն ըրաւ, և ուտելու միջոցնին ըսաւ
քրոջն որ իր սնտուկին մէջ քանի մը
հատոր գրքեր կային. և թէ ուրիշ գրք-
քեր ալ պիտի բերել տար Գաղղիայէն
ու Իտալիայէն՝ որպէս զի քոյրը հար-
կաւոր եղած բաները սորվի :

— Իրաւունք ունիս, եղբայր իմ, պա-
տասխանեց Աղաւնի. ես ալ գիտեմ որ
չատ բանի գիտութիւն կը պակսի ին-
ծի. և սիրով պատրաստ եմ սորվելու՝

¹ Այս գօտին Գաբէրա կը կոչեն գորսիդայեք
և կը ծառայէ լուցիկ գնելու մէջը, անոր ձախ կող-
մը ատրճանակ մը կը գնեն :

մանաւանդ թէ որ դու ինձի սորվեցը
նես :

Քանի մը օր անցաւ և Աղաւնի բնաւ
Պարրիչինիներուն անունը բերանը չէր
առներ : Օր մը նախաճաշիկէն վերջը ,
փոխանակ դիրք ու թուղթ բերելու՝ որ
պէս զի իրենց սովորական կրթութիւն
ներն ընեն , մէջ ճարտն գրւին առած՝
— Եղբայր իմ , խնդրեմ մէկտեղ դուրս
ելլենք , ըսաւ : Աղաւնիի դէմքն աս ան
դամ սովորականէն աւելի լուրջ էր :

— Ո՛ւր կ'ուզես որ ընկերեմ հետդ :

— Մ'ա հրացանդ մէկտեղ և վառօդ
ալ : Մարդ մը առանց դէնքի պէտք չէ
դուրս ելլէ :

— Աղէկ , աղէկ , սովորութեան հե
տևինք : Ո՛ւր կ'երթանք :

Աղաւնի պատասխան չտուաւ , պա
հապան շունը կանչեց ու եղբօրը հետ
դուրս ելաւ : Արագ արագ քալելով դե
ղէն հեռացաւ , և խոր ճամբայ մը բռն
նեց՝ որ օճապտոյտ կը քալէր այգինե
րուն մէջ , առջևէն շունը կը քալցընէր ,
որուն նշան մը ըրաւ , և կենդանին հաա
կընալով զայն՝ սկսաւ ասդիս անդին
վազել այգիներուն մէջ՝ մէյ մը ասդիի

կողմը մէյ մը անդիի, և երբեմն կանկ
կ'առնէր ճամբուն վրայ և պոչը շարժե-
լով իր տիրուհւոյն կը նայէր :

— Թէ որ Մուսքէդոն հաջէ, ըսաւ Ա-
ղաւնի, լեցուր հրացանդ՝ եղբայր, և ան-
շարժ կեցիր տեղդ :

Գեղէն կէս մղոն հեռու, խել մը շրջ-
ջաններէ վերջը՝ Աղաւնի կանկ առաւ
տեղ մը ուր ճամբան անկիւն կը ձևա-
ցընէր : Հոն պղտիկ բուրդ մը ձևացած
էր թարմ և թոռմած ճիւղերէ, որոնք
իրարու վրայ դիզուած էին իրեք ոտք
բարձրութեամբ. և մէջէն սև խաչի մը
ծայրը դուրս ելած էր : Գորսիդայի շատ
կողմերը, մանաւանդ լեռներուն մէջ,
սասաիկ հին սովորութիւն մը կայ՝ որ
անցաւորք քար մը կամ ծառի ճիւղ մը
կը նետեն ան տեղւոյն վրայ՝ ուր մէկն
անբնական մահուամբ մեռած է : Քանի
որ մեռելոյն բնական մահն իր հայրե-
նակցաց մտքէն ելած չէ, այս նուէրն
օրէ օր կը դիզուի կը բարձրանայ :

Աղաւնի մաթուղենույ (ՏՃ. Հօձա
եւեմիի աղաձը) ճիւղ մը կտրելով՝
բուրդին վրայ աւելցուց : — Օրսոյ, ըսաւ,
հոս մեռաւ հայրերնիս : Աղօթե՛նք հող-

ւոյն համար, եղբայր իմ: Եւ ծունկ չու-
քեցաւ. եղբայրն ալ մէկտեղ: Նոյն մի-
ջոցին գեղին ժամուն զանգակը սկսաւ
ծանր ծանր հնչել, որովհետեւ նոյն գի-
շերը մէկը մեռեր էր: Օրսոյ յորդու-
թեամբ լացաւ:

Քանի մը վայրկենէն Աղաւնի ոտք ե-
լաւ՝ աչքերը չոր, բայց դէմքը կրակոտ,
անապարելով մը բռն ժամառը երեսը
խաչ հանեց, որ Գորսիդացոյ մէջ մեծ
երդման նշանակ է, ետքը եղբօրը
հետ գեղ դարձաւ: Լռութեամբ տուն
մտան. և Օրսոյ իր սենեակը դնաց: Քիչ
մը ետքը Աղաւնի ներս մտաւ, ձեռքը
պզտիկ արկղիկ մը՝ զոր ստովին վրայ
դրաւ. և մէջէն շապիկ մը դուրս հանեց՝
որ արեամբ ուռդած էր ասղիս անդին:
— Ահաւասիկ հօրդ շապիկը, Օրսոյ, Ը-
սաւ և անոր ծնկուքներուն վրայ նետեց
զայն: — Ահաւասիկ զինքը սպաննող
կապարը, և երկու ժանգահար գնտա-
կիկ դրաւ շապիկին վրայ: — Օրսոյ, եղ-
բայր իմ, աղաղակեց անոր գիշերը վա-
ղելով և ուժգին սխմելով. Օրսոյ, դու
իրեն վրէժը պիտի առնուս: Եւ մոլեգին
եռանդեամբ մը պագաւ եղբայրը, պա-

դաւ կապարներն ու շապիկը, և սենեկէն դուրս ելաւ՝ ուր քարայցած թողուց զեղբայրը :

Օրայ անշարժ կեցաւ կտոր մը առտեն, չհամարձակելով հեռացընել իրմէն այս ահաւոր նշխարքները : Ետքը ինքը իրեն ոյժ տալով՝ նորէն արկղիկին մէջ դրաւ զանոնք և սենեկին միւս ծայրը վազեց անկողնին մէջ նետուելու, զլուխը պատին դարձուցած և բարձր զլուխը քաշած, իբրև թէ ուրուականի մը երևոյթէն կ'ուզէր վախշել : Քրոջը վերջին խօսքերն անդադար ականջին մէջ կը հնչէին, և կարծես թէ մահադուշակ ու անխուսափելի պատգամ մը կը լսէր, որ արիւն կ'ուզէր իրմէ և անմեղ արիւն : Չեմ ուզեր նկարագրել զըժբազդ երիտասարդին զգացմունքները, որ խառն՝ ի խուռն կը պտրտէին իր գլխառն մէջ ինչպէս որ խենթ երուռն կը հանդիպի : Երկար ատեն նոյն զրքով կեցաւ, առանց համարձակելու զլուխը դարձրնել : Հուսկ ուրեմն ելաւ անկողնէն, վազեց արկղիկն և աճապարելով անէն դուրս ելաւ, դաշտերուն մէջ թափառելով՝ առանց դիմնալու թէ ուր կ'երթար :

Կամայ կամայ բայ օղը սիրար բա-
ցաւ, և քիչ մը աւելի հանդարտելով՝
կրցածին չափ պաղ արեամբ մտածեց
իր վիճակն և թէ ինչպէս կրնար անկից
ելլել: Ամենևին մարդասպանութեան
կասկած չունէր Պարրիշիններուն վրայ,
ինչպէս որ ուրիշ անգամ ըսինք. բայց
Ակոսդինի նամակն հնարողը զիրենք
կը սեպէր, և միտքը դրած էր որ այս
նամակը իր հօրը մահուան պատճառն
եղած էր: Սակայն գիտէր որ այս խար-
դախութեան համար բան մը չէր կրնար
ընել. երբեմն իր երկրին նախապաշար-
մունքներովն ու բնածին ազդամամբքը
միտքը դրաւած՝ գաղտուկ վրէժխնդրու-
թիւն մը ճամբու մը վրայ գիւրին կը
տեսնուէր աչքին, բայց մէկէն կը վռն-
տէր մտքէն սոսկումով այս մտածու-
թիւնը: Ետքը քրոջը յանդիմանութիւն-
ները միտքը կու գային, և կերպով մը
սրտէն իրաւունք ալ կու տար անոնց:
Այսպէս խղճմտանքին և նախապաշար-
մունքներուն հետ միակերպ պատերազ-
մելով՝ վերջապէս ճար մը գտաւ, որ
պատճառանքով մը վէճ բանայ փաս-
տաբանին մէկ տղուն հետ ու մենամար-

տի : Եւ միտքը համոզուելով այս գիւ-
տին , սկսաւ գործադրութեան կերպերը
մտածել . ասանկով սիրտը մեծ բեռ է մը
խայրսեցաւ :

Ճամբէն ետ դարձաւ ու դէպ 'ի գեղը
կու դար , ուսկից շատ հեռացեր էր ա-
ռանց անդրադառնալու . յանկարծ պըղ-
տիկ աղջիկան մը երգելու ձայնը լսեց ,
որ վաքիին ծայրը ճամբու մը վրայ նրա-
տած էր : Երգը ծանր ու միակերպ եղա-
նակ մըն էր՝ գերեզմանական ողբերու
սահմանուած . այսպէս կ'երգէր աղջի-
կը . « Որդւոյս , որ հեռաւոր աշխարհք
է , պահեցէք որդւոյս իմ խաչս ու ա-
րիւնտուգ շապիկս . . . »

— Ի՞նչ է երգածդ , հարցուց Օրսոյ
բարկութեամբ՝ յանկարծակի երևնա-
լով :

— Դ՞ու ես , Օրս՝ Մնատն , ըսաւ աղջի-
կը վախցած . . . Մղաւնիի շինած մէկ
երգն է :

— Կ'արգիլեմ որ մէյ մ' ալ չերգես ,
զուրցեց Օրսոյ ահաւոր ձայնով :

Մղջիկը գլուխն առիւտ անդին դար-
ձուց , կարծես թէ կը նայէր թէ ո՞ր կող-
մէն կրնար փախչիլ . և անտարակոյս

վախած կ'ըլլար, թէ որ մեծ ծրարի մը պահպանութիւնը չունենար, որ գետնին վրայ էր :

Օրայ ամբողջաւ իր բարկութեանը վերայ . և ձայնը քաղցրացընելով՝

— Ի՞նչ ունիս՝ աղջիկս, այդ ծրարին մէջ, հարցուց :

Տեսնելով որ Ֆիլինա կ'ուշացընէր պատասխան տալու, բացաւ ծրարն և տեսաւ որ հայ մը և ուրիշ պաշարներ կային մէջը :

— Որո՞ւն կը տանիս այս հայը :

— Արդէն գիտես . հօրեղբօրս :

— Հօրեղբայրդ աւազակ չէ :

— Այո :

— Թէ որ պահպանութեան զինուորները հանդիպին քեզի և հարցընեն թէ ուր կ'երթաս . . .

— Կ'ըսեմ իրենց, պատասխանեց աղջիկն անխռով, որ վաքին կարող լուրգացիներուն ուտելիք կը տանիս :

— Հապա թէ որ անօթի որսորդ մը դիմացդ ելլէ և ձեռքէդ պաշարներդ առնէ . . .

— Ոչ որ կրնայ համարձակիլ . կ'ըսեմ թէ հօրեղբօրս համար է :

— Իրօք անանկ մարդ չէ որ իր կերա-
կուրն ուրիշներուն ձեռքը թողու . . . :
Շատ կը սիրէ զքեզ հօրեղբայրդ :

— Շատ կը սիրէ , Օրս' Անտոն , հօրս
մահուրնէն վերջը՝ ինքը կը հողայ մայրս ,
զիս ու պզտի քոյրս : Քանի որ մայրս
հիւանդ չէր , հարուստներուն կը յանձ-
նէր զինքը որ աշխատութիւն տան ի-
րեն : Գեղապետն ամէն տարի զգետ մը
կուտայ ինձի , և ժողովրդապետը քրիս-
տոնէական և կարգալ կը սորվեցընէ ին-
ձի . ասոնց պատճառը հօրեղբայրս է :
Բայց ամենէն աւելի քոյրդ կը խնամէ
զմեզ :

Նոյն վայրկենին ճամբուն վրայ շուն
մը երևցաւ . աղջիկն երկու մատը բեր-
նին վրայ դնելով՝ սուր մը սուլեց . մէ-
կէն շունը քովը մօտեցաւ քծնելով , ետ-
քը շուտով վաքիին մէջ աներևութա-
ցաւ : Քիչ ատենէն երկու հողի խեղճ
զգետաներ հագած բայց աղէկ զինուա-
րած՝ ծառերու մէջէն դուրս ելան . կար-
ծես թէ օձերու պէս սողալով յանդդա-
տից առաջ եկեր էին :

— Օրս' Անտոն , բարի եկեր ես , ըսաւ
աս երկուքէն աւելի տարեցը : Ի՞նչ , չես
ճանչնար զիս :

— Չէ, ըսաւ Օրսոյ՝ ուշի ուշով երեւոր նայելով :

— Նայէ մէկ մօրուք մը ու սրածայր դիտարկ մը ինչպէս կը փոխեն զմարդ : Աղէկ նայէ ինծի, տեղակալդ, մուցեր ես ուրեմն վաղէրլուի ընկերներդ, միտքդ չիգար Պրանսոյ Սամէլլին, որ քովդ հրացան կը պարպէր այն դժբաղդ օրը

— Դու ան ես : 1846ին չիտախանր դիւսուորութենէ :

— Այո, ճանճրացեր էի այն կեանքէն, և հոս գործ մը ունէի ընելու : Հա՛հա՛, Քիլի, դու կարիճ աղջիկ մըն ես, դուրս հանէ նայինք ունեցածներդ, որովհետև անօթի ենք : Չես կրնար մակարերել, տեղակալդ, թէ ինչ ախորժակ կ'ունենան մաքիին մէջ կեցողները : Ո՛վ է ասիկայ խրկողը մեզի, Աղաւնին թէ գեղապետը :

— Չէ, պատասխանեց Քիլի. շաղպայան կիներ տուա :

— Ի՞նչ կ'ուզէ ինծմէ :

— Ա՛րսէ թէ իր երկիրը հերկող Լուդգացիները սկսեր են հիմա 35 փող և շագանակ ուզել իրմէն օրը՝ Բիէզրանէրայի ջերմին պատճառաւ :

— Պարապորդները . ինչ և իցէ , տես
նանք : — Առանց քաղաքավարութեան
խօսինք , կ'ուզէս՝ տեղակալդ՝ մեր կե-
րածէն ուտել :

— Շատ շնորհակալ եմ :

— Ճողովրդապետ , ըսաւ Պրանտո,
լայկիոյ ընկերոջը , սեղանն նստէ :

— Ճողովրդապետ մի ըսեր , զուրցեց
երկրորդ աւազակը . եկեղեցական պի-
տի ըլլայի , բայց չյաջողեցաւ :

— Ի՞նչ պատճառաւ ետ կեցար , հար-
ցուց Օրսոյ :

— Ոչինչ բանի մը համար . գործ մը
ընելու համար , ինչպէս որ ընկերս սո-
վորութիւն ունի ըսելու : Բիզայէն ելայ
եկայ որ քոյրս կարդեմ . բայց փեսան
հասնելէս իրեք օր առաջ՝ տենդէ մը մե-
ռեր էր : Ան ատեն մեռնողին եղբօրն
առաջարկեցի . ըսին որ կարգուած էր .
աս բանիս վրայ շփոթեցայ :

— Իրաւ ձախորդ պարագայ մըն է :
Ի՞նչ ըրիր :

— Գնտակ մը պարպեցի գլխուն , պա-
տասխանեց աւազակը պառլ արեամբ :

Օրսոյի ոսկրները դող ելան , բայց
հետաքրքրութենէն շարժած ուզեց խօ-

սակցութիւնը առաջ տանիլ այս երկու-
քին հետ, որոնց խրաքանչիւրը՝ գտնէ
մէկ մարդասպանութեամբ մը ծանրա-
ցուցած էր խիղճը :

Ընկերոջը խօսած միջոցը՝ Պրանտո-
լաչչիոյ հաց և միս դրաւ դիմացը. ետ-
քը ինքն ալ առաւ, նայնպէս մաս հանեց
իր Պրուսգոյ շանը, որուն համար ըսաւ
Օրսոյի թէ զարմանալի յարմարութիւն
մը ունի զինուորները ճանչնալու՝ թէ-
պէտ և ծպտեալ ըլլան : Հուսկ յետոյ
հացի կտոր մը ու քիչ մը երջիկ տուաւ
եղբօր աղջրկանը :

— Երբոր տանըհինգ տարուան ըլ-
լայ առ պզտիկն, ըսաւ Պրանտոլաչչիոյ
Օրսոյի, կը կարգեմ զինքը. արդէն ա-
ղէկ տեղ մը դտած եմ մտքիս մէջ :

— Դո՛ւ պիտի ուզես իրեն փեայ :

— Տարակոյս չկայ. ես թէ որ հա-
րուստի մը ըսելու ըլլամ՝ թէ որդիդ Մի-
քէլինա Սավէլլիին հետ կարգէ, կար-
ծե՛ս թէ կը անտընայ ու կը թողու որ
սկանջները քաշեմ :

— Ես խորհուրդ չեմ տար, ըսաւ միւս
աւաղակն. որովհետև ընկերոջս ձեռքը
քիչ մը ծանր է, գիտէ ուղածն առաջ
տանիլ :

— Թէ որ ես անզգամ մարդ մը ըլլայի, շարունակեց Պրանտոլաչչիոյ, բաւական էր որ մախաղս բանայի՝ հինգ Ֆրանզուսացիներ անձրևի պէս կը թափէին մէջը :

— Բսել է որ մախաղիդ մէջ անանկ բան մը կայ, զուրցեց Օրսոյ, որ կը քաշէ զանոնք :

— Չէ. բայց թէ որ հարուստի մը դրերու ըլլամ (ինչպէս ուրիշները կ'ընեն) թէ հարիւր Ֆրանզի պէտք ունիմ, մէկէն կը խրկէ : Բայց ես պատուաւոր մարդ եմ :

— Պիտե՞ս Օրսոյ, ըսաւ միւս աւագաւորը, որ անզգամ մարդիկ մեր զիրը ձեացրնելով՝ փոխանակագիրներ կը շինեն. որովհետև գիտեն թէ ինչպէս մեր վրայ համարմունք ստանալ կու տանք ամենուէն մեր անցագիրներովը (իբ հրացանը կը ցուցնէր) :

— Ի՞նչ փոխանակագիրներ :

— Վեց ամիս առաջ՝ Օրէցցայի կողմը կը պարտէի. յանկարծ գեղացի մը սկըսաւ դալ դէպ 'ի ինձի, ու հեռուէն գըլտխը բանալով՝ ըսաւ. — Մ'հ, պարոն Ժողովրդապետ (միշտ ինձի այս անու-

նը կու տան) ներէ ինծի. ժամանակ
տուր. հիմկու հիմա 55 ֆրանգ միայն
կրցայ ձեռք ձգել, հաւտա՝ ճշմարիտ կ'ը-
սեմ: Ես ապշած՝ — Ի՞նչ կ'ըսես, հար-
ցուցի, 55 ֆրանգ: — Կ'ուզեմ ըսել 65,
պատասխանեց: Բայց ուզածիդ պէս 100
ֆրանգ տալը կարողութենէս վեր է: —
Ե՞ս քեզմէ 100 ֆրանգ կ'ուզեմ. եկուր
նայէ որ չեմ ճանչնար դքեդ: — Ան ա-
տեն ձեռքս աղտոտ նամակ մը տուա,
որուն մէջ կը պատուիրուէր իրեն որ
երթայ 100 ֆրանգ դնէ որոշուած տեղ
մը, թէ որ չուզեր որ ձիողանդոյ Գաս-
դրիգոնի (իմ անունս է) իր տունն այ-
րէ և կովերն սպաննէ: Կիրքս ելաւ. մա-
նաւանդ որ նամակը ուղղադրութեան
սխալներով լեցուն էր. Էս ուղղադրու-
թեան սխալ ընեմ, որ համալսարանին
մէջ ամէն բանի մրցանակ կ'առնէի:
Բարկութենէս անանկ ապտակ մը զարկի
գեղացւոյն, որ ինկաւ երկու անգամ
զլորեցաւ: — Դու զիս գողի տեղ կը
դնես, նայէ սա անզգամին. և ոտքովս
ինչպէս որ պէտք էր հարուած մը տուի:
Սիրտս քիչ մը բացուեցաւ. հարցուցի
թէ երբ պիտի տանիս ստակն որոշուած

տեղը : — Այսօր : — Գնա՛ դիր ուրեմն :
Որոշուած տեղը մայր ծառ մըն էր .
բերաւ ստակը , ծառին տակը թաղեց ու
քովս եկաւ : Ես մօտերը պահուրտած
էի . գեղացւոյն հետ վեց ժամ սպասեցի
հոն . ձանձրութենէս կը մեռնէի , բայց
թէ որ պէտք ըլլար՝ իրեք օր ալ կը կե-
նայի : Վեց ժամէն վերջը՝ պատիացի
անզգամ վաշխառու մը երևցաւ . ան մի-
ջոցին որ ծռեցաւ ստակն առնելու , պար-
պեցի հրացանս , և անանկ աղէկ նշան
առեր էի՝ որ գլուխը հողէն հանած սար-
կին վրայ ինկաւ : — Ա՛ռ հիմա ստակդ ,
դարձայ ըսի գեղացւոյն , և միտքդ մի
դներ որ ճիտգանդոյ Գասգրիգոնի ցած
մարդ է : — Խեղճուկը դողդըղալով ա-
ռաւ 65 ֆրանգը՝ առանց սրբելու մաք-
րելու զանոնք . շնորհակալ եղաւ ինձի ,
ևս ալ ոտքի աղէկ հարուածով մը բարև
տուի , և դեռ կը վազէ :

— Ժողովրդապետ , ըսաւ Պրանատ-
լաչչիոյ , աս հրացանի հարուածիդ կը
նախանձիմ :

Ետքը ըսաւ Օրայի որ արևը մայրը
մանալու վրայ էր . — Խորհուրդ կու տամ
որ ալ չսպասեցրնես Աղաւնին . և աղէկ

բան չէ որ արևը մտնալէն վերջը ասանկ
դուրսը պտըտիս : Ինչո՞ւ համար ասանց
հրացանի կ'ելլես . հաս մտերս դէշ մար
դիկ կան , զգուշացիր : Այսօր վախնա
լու բան չունիս . որովհետև Պարրիչինի
ներն իրենց տունը հրաւիրեցին դաւա
ռապետը . ճամբուն վրայ հանդիպեցան
իրեն , որ Գորդէ կ'երթար հիմնարկու
թեան մը առաջին քարը դնելու . ինչ և ի
ցէ՛ աս դիշեր Պարրիչինիներուն քովը կը
պառկի . բայց վաղը ազատ են : Վինչէն
դէլլոյ ըսածդ անպիտան երիտասարդին
մէկն է , Յուրանտուչիոն ալ անոր նը
ման . . . նայէ որ զատ զատ հանդիպիս
անանց , այսօր մէկուն , վաղը մէկալին .
բայց զգոյշ կեցիր , ուրիշ բան չեմ կըր
նար ըսել :

— Շնորհակալ եմ խորհրդիդ , պա
տասխանեց Օրսոյ . բայց ես անոնց հետ
բան դործ չունիմ բնաւ . ինչուան որ ի
րենք չգան դիս մնարուելու , ես իրենց
ըսելիք մը չունիմ :

Աւազակը լեզուն դուրս հանեց խաղ
ցոյ , բայց պատասխան չտուաւ : Երբոր
Օրսոյ տաքի վրայ ելաւ երթալու , — Ա
դէկ միտքս եկաւ , զուրցեց Պրանտուչի

չիտյ, որ շնորհակալ ըլլամ վառօղին հա-
մար, աղէկ ժամանակին հասաւ : Հիմա
բանի մը պէտք չունիմ . . . այսինքն կօշ-
կի պէտք ունիմ . . . , բայց վայրի ոչխա-
րի մը մորթէն կը շինեմ տա օրերս :

Օրսոյ երկու հինգ ֆրանգնոց աւա-
ղակին ձեռքը խոթեց . — վառօղը խըր-
կողը Աղաւնի էր, ըսաւ . իսկ ասով կօ-
շիկդ կը գնես :

— Կոպտութիւն մի ըներ, աղաղա-
կեց Պրանտոլաչչիոյ՝ ստակը ետ տա-
լով : Մութացկան կը կարծես դիս . հաց
և վառօղ կ'ընդունիմ, բայց ուրիշ բան
չէ :

— Կարծէի որ հին դինուորակիցք ի-
րարու կրնան օգնել : Մնան բարով :

Բայց երթալէն առաջ՝ կամացուկ մը
ստակն աւաղակին մախաղին մէջ դը-
րաւ, առանց անոր խմանալուն :

— Երթան բարով Օրս' Անտոն, զուր-
ցեց միւս աւաղակը . յուսանք որ նորէն
կը տեսնուինք իրարու հետ :

Օրսոյ հեռացաւ անոնցմէ, և քառոր-
դի մը չափ քալելէն վերջը՝ ետևէն մէ-
կու մը սաստիկ վազերու ձայնը լսեց :
Պրանտոլաչչիոյ էր եկողը : — Ըրածդ

չատ յանդգնութիւն է, շունչը կտրած
ըսաւ Օրսոյի. ա՛ռ քու տասը ֆրանգդ.
ուրիշ մը ըրած ըլլար նէ՛ անպատիժ չէի
անցըներ : Շատ բարեւ ըրէ Աղաւնիի :
Արիւն քրտինք մտնել տուիր ինձի : Գի-
շեր բարի :

ԺԲ

Աղաւնի քիչ մը այլայլեր էր. բայց
վերջապէս Օրսոն տեսնալով՝ իր սովո-
րական տխուր զուարթութիւնն առաւ :
Ընթրիքի միջոց անտարբեր բաներու
վրայ խօսեցան. ետքը Օրսոյ պատմեց
քրոջը՝ աւազակներուն հետ ըրած տե-
սութիւնը :

— Պրանտոլաչչիոյ գէշ մարդ չէ, ը-
սաւ Աղաւնի. իսկ իր Գասդրիզոնի ըն-
կերը՝ լսեր եմ որ սկզբունք շունեցող
մարդ մըն է :

— Ես կարծեմ որ իրարմէ տարբե-
րութիւն չունին, և երկուքն ալ մարդ-
կային ընկերութեան հետ կը պատե-
րազմին : Մէկ յանցանք մը ուրիշ յան-
ցանքի մը կը մղէ զիրենք. հանդերձ այ-
սու՝ թերեւս իրենցմէ աւելի յանցաւոր

մարդիկ կը դանուին անոնց մէջ որ մա-
քիէն դուրս կը բնակին :

Ուրախութեան նշոյլ մը փայլեցաւ
քրոջն երեսին վրայ : Եւ վայրկեան մը
լուսթենէ ետքը ,

— Եղբայր իմ , ըսաւ սուրճ լեցընե-
լով Օրսոյի , գիտե՞ս որ երէկ դիշեր կա-
րողոս Մկրտիչ Բիէդրի մեռեր է ճախ-
ճախուաներու ջերմէն :

— Ո՞վ է առ Բիէդրի ըսածդ :

— Հոստեղի դեղացի մը , ան Մադդա-
ղինէին էրիկն՝ որուն ձեռքը սուաւ հայ-
րերնիս մեռնելու ատենն իր դրապա-
նակը : Խեղճ այրին եկաւ աղաչեց ինձի
որ մեռելին հսկման ես ալ ներկայ ըլ-
լամ և ողբ մը երդեմ : Պատշաճ է որ
դու ալ մէկտեղ դաս , որովհետեւ մեր
դրացիներն են :

— Կորանցուր հսկումը : Ես բնաւ չեմ
ախտրժիր որ դու ասանկ մէջտեղ լի-
նաս :

— Օրսոյ , պէտք է մեծարել տեղւոյս
սովորութիւնը . այսինքն պաշխադան ,
որ մեր հիներէն իջած է մեզի : Մադ-
դաղինէ 'ի բնութենէ այն ձիրքը չունի .
իսկ Ֆիարափարինա պառաւն ալ , որ հոս

տեղի ամենէն կարիճ պաշխարա երգողն է, հիւանդ պառկած է: Մէկը պէտք է որ երգէ:

— Ի՞նչ, մի՞թէ կարողոս Մկրտիչը երկրնքին ճամբան պիտի կորսնցընէ, թէ որ դադարին վրայ չերգըցուի նէ: Ա՛ռ զես հսկման երթալ նէ, ես ալ հետդ կու գամ, որովհետև պատշաճ կը դատես. բայց չեմ ուզեր որ յանկարծախօսես. վայելուչ չէ աս հասակիդ:

— Խօսքս տուած եմ, ճար չկայ: Հոս տեղի սովորութիւնն այս է, և այս անգամ ինձմէ դատ մէկը չկայ որ յանկարծախօսէ:

— Մնասիտ սովորութիւն:

— Շատ կը կրեմ ես ալ այսպէս երգելու միջոցս, ամէն դժբաղդութիւննիս միտքս կու գան, և անտարակոյս վաղը պիտի հիւանդանամ. բայց պէտք է որ երգեմ: Խնդրեմ հրաման տուր եղբայր իմ: Կը յիշես, թոյլ տուիր ինձի Ա. յաչ չիոյ յանկարծախօսելու, անդդիացի օրիորդը զուարճացընելու համար. ուրեմն ի՞նչպէս չկարենամ հիմա յանկարծախօսել խեղճ աղքատներու համար, որ ինձի երախտագէտ կ'ըլլան և այս եր-

դով ճախարհութիւննին աւելի դիւրութեամբ կը տանին :

— Աղէկ աղէկ, երդէ : Ո՛ր դիտէ թէ արդէն շինած չես պաշտպան, և չես ուղեր փճացընել :

— Չէ, եղբայր իմ, առաջուց չեմ կրնար շինել : Մեռելոյն առջևը կ'անցնիմ, և ողջ մնացողներուն վրայ կը մըտածեմ : Աչքերս արցունքով կը լեցուին, և ան ատեն ինչ որ միտքս կու գայ կ'երգեմ :

Այս խօսքերն այնպիսի պարզ սրտով կ'ըսէր Աղաւնի, որ մնափառութեան հետք չէր երևար սրտին մէջ : Օրայ դնայ հետը Բիէզրիի տունը, մեծագոյն սենեկին մէջ ստուլի մը վրայ տարածուած էր մեռելը՝ երեսը բաց, դռներն ու պատահանները բաց էին, և մամեղէնք կը վառէին ստուլին շորս կողմը : Մեռելին գլխուն առջև իր այրին կեցած էր, և անոր ետևը շատ մը կանաչք սենեկին այն կողմը բռնած էին, մէկալ կողմը էրիկ մարդիկը կեցած էին ոտքի վրայ, դուխնին բաց, աչքերնին գիակին վրայ սևեռած, և բոլորովին լուռ : Սմէն ներս մտնողը կը մօտենար ստուլին, կը համ

բուրէր մեռելը¹, գլխովը նշան մը կ'ընէր այրւոյն ու անոր զաւակին, ետքը իրեն սահմանուած կողմը կը քաշուէր՝ առանց բերանը բանալու: Սակայն մերթ ընդ մերթ հանդիսականաց մէկը լռութիւնը կ'ընդհատէր և քանի մը խօսք կը զրուցէր մեռելոյն: — Ինչո՞ւ համար ազնիւ կինդ թողուցիր, կը հարցընէր պառաւ մը. անկէց աւելի աղէկ կրնամք հոգալ զքեզ. ի՞նչ կը պակսէր քեզի: Ինչո՞ւ համար ամիս մ'ալ չսպասեցիր. քու նուդ զաւակ մը բերած կ'ըլլար քեզի:

Բիէդրիի տղան, որ երկայնահասակ երիտասարդ մըն էր, հօրը պաղած ձեռքը սխամելով՝ աղաղակեց. Ո՛հ, ինչո՞ւ համար բռնական մահուամբ չմեռար. վըրէժդ կ'առնէինք:

Օրսոյ այս խօսքը լսեց ներս մտած միջոցը: Ձինքը տեսածնուն պէս բազմութիւնը ճղքուեցաւ, և հետաքրքրութեամբ մը նայեցան պաշխադաւ երգողին վրայ: Աղաւնի համբուրեց զայրին,

¹ Այս սովորութիւնը դեռ կը տեսնուի Պոզոնեանոց:

մէկ ձեռքը իր ձեռքին մէջ առաւ և կե-
ցաւ անանկ քանի մը վայրկեան՝ միտքն
ամփոփած և աչքերը վար առած : Ետ-
քը մեծ ճարոն կու ձգեց, աչքերը մե-
ռելոյն վրայ սևեռեց, և դիակին վրայ
ծռած, դրեթէ անոր պէս գունատեցաւ,
և այսպէս սկսաւ .

« Կարողնա Մկրտիչ, Քրիստոս ընդունի քու
հողիդ : — Ապրելը՝ կրել է . դու այնպիսի տեղ մը
կ'երթաս — ուր ոչ արև կայ և ոչ ցուրտ : — Ա՛լ
պէտք չունիս յօտոցիդ, — և ոչ ծանր բահիդ : —
Ա՛լ աշխատելք չունիս . — ասկէ ետքը բոլոր քու
օրերդ կ'իրակի են : — Կարողնա Մկրտիչ, Քրիս-
տոսի քով երթայ հողիդ : — Որդիդ կը կառա-
վարէ տունդ : — Տեսայ կաղնին ինկած — լիպէ-
լիոյ քամիէն չորցած . — կարծեցի որ մեռած է .
— նորէն առջևէն անցայ, և արմատը — ընձիւղ
մը արձըկեր էր : — Ընձիւղը աճեցաւ կաղնի ե-
ղաւ — լայն հովանիով : — Անոր առջիկ ճիւղերուն
տակ հանդէ՛, Մագդաղինէ, — և մտածէ անցած
դացած կաղնւոյն վրայ » :

Մագդաղինէ սկսաւ բարձրաձայն հե-
ծել . և հանդիսականներէն երկու իրեր
հողի, որ եթէ դիմացնին առիթ ելլար՝
անանկ անտարբերութեամբ կը սպան-
նէին իրենց նմանները՝ ինչպէս կարաւ .

ները , աչքերնուն արցունքները կը սըր-
բէին :

Սղաւնի շարունակեց իր երգը՝ մերթ-
մեռելոյն հետ խօսելով , մերթ անոր ըն-
տանեացն հետ , և մերթ մեռեալը խօ-
սեցընելով , որ կը մխիթարէր իր բարե-
կամքը և խորհուրդներ կու տար անոնց :
Որչափ որ առաջ կը տանէր բանին թե-
լը , Սղաւնիի դէմքը վեհութեամբ կը
պայծառանար , և երեսին գոյնը կար-
մրութեամբ կը վառէր . կարծես պիւ-
թեան պատգամախօսն էր եռոտանւոյն
վրայ հանդիսացած : Թեթև հառաչանք-
ներէ և հեծութիւններէ զատ՝ ամենևին
ձայն չէր լսուեր բաղմութեան մէջ : Օր-
սոյ , որ հանդիսականաց չափ զգայուն
չէր այս տեսակ վայրենի բանատեղ-
ծութեան , վերջապէս ինքն ալ զգացուե-
ցաւ հասարակաց պէս , և սենեկին մէկ
ծայրը քաշուած՝ կու լար Բիէզըիի սը-
ղուն պէս :

Յանկարծ բաղմութիւնը մեծարանօք
տեղիք տուաւ նոր այցելուաց . յայտնի
կ'երևար որ նշանաւոր անձինք էին մրա-
նողներն և պատիւ կը համարուէր իրենց
զարուսար : Մակայն պաշրադային պատ-

ճառաւ ոչ որ համարձակեցաւ հետեր-
նին խօսելու: Ամենէն առաջ մտնողը
քառսուն տարուան կ'երևար. զգեստին
սև գոյնէն և վարդաձև կարմիր ժապա-
ւինէն, և իր իշխանական կերպէն՝ կ'ի-
մացուէր որ քաղաքապետն էր: Մնոր ե-
տեւէն մտնողը կռնակը կորացած ծեր մըն
էր, գունատ, և կանաչ ակնոցին մէջէն
աչքերուն վախկոտութիւնն ու խռովու-
թիւնը կը նշմարուէր: Սաստիկ լայն ըզ-
դեստ մը հագած էր, և թէպէտ նոր
յայտնի քանի մը տարի առաջ շինուած
կ'երևար: Միշտ քաղաքապետին քովը
կը կենար, կարծես թէ անոր շուքին
տակ կ'ուզէր պահուրտիլ: Իրմէ ետքը՝
երկու բարձրահասակ երիտասարդներ
մտան, երեսնին արևէն էրած, աչքեր-
նէն հպարտութիւն և յանդգնութիւն
կը ցատքէր, և աներես համարձակու-
թիւն մը կը ցուցնէին: Օրսոյի միտքը
հին յիշատակներ արթնցան՝ երբ կա-
նաչ ակնոցով ծերը տեսաւ, որ Պարրի-
չինի վաստարանն էր՝ Բիէզրանէրայի
գեղապետը, և եկեր էր երկու տղոցը
հետ՝ քաղաքապետին պաշտպան մը և
սեղ տալու համար: Շատ դժուարին է

Նկարագրել Օրսոյի զգացածն այն վայր-
կենին . այսչափ յայտնի է՝ որ հօրը թըշ-
նամուտն ներկայութիւնը տեսակ մը սու-
կումն ձգեց վրան , և առաջին անգամ
այն կասկածներուն տեղիք սուտա՝ զո-
րոնք ինչուան այն ատեն չէր ընդու-
նած :

Երբոր Աղաւնիի աչքին ալ երևցաւ
այն մարդն՝ որուն մահացու ռիս պահած
էր , կերպարանքն այլայլեցաւ , երեսին
գոյնը գնաց , ձայնը խղղուեցաւ , սկսած
տողը շրթանցը վրայ մեռաւ . . . բայց
քիչ ետքը՝ ներքին թափով մը շարու-
նակեց .

« Երբոր բազէն կ'ողբայ — իր դատարկացած
բոյնին վրայ , — տարմերը (ՏՃ . սըղըրճըդ) չորս
դին կը թռչտան — և կը խնտան անոր թշուա-
ռութեանը վրայ : (Այս տեղը նոր եկած երկու
երիտասարդները քթերնուն տակէն խնտացին ,
անտարակոյս յանդուգն կ'երևար իրենց այդ այ-
լաբանութիւնը) : — Բազէն անշուշտ կ'արթըն-
նայ , — թեւերը կը տարածէ , — կտուցը արեան
մէջ կը լուանայ : — Եւ դու , Վարու՛նա Մկրտիչ ,
բարեկամքդ — վերջին բարենին տան քեզի : —
Բաւական արցունք վաղցուցին իրենք : — Խեղճ
որք աղջկիւր միայն չար . — և ինչո՞ւ համար
լայ վրագ : — Դու պարարտ օրերով մտար մա-

հուան անկողինը , — աղգատոհմիդ աչքին առջև ,
— և պատրաստուած էիր ելլալու — Ամենակա-
րողին առջև : — Որք աղջիկն իր հօրը վրայ կու-
լայ , — զոր ցած աւագակներ յանկարծակիի բե-
րելով , — կունակէն զարկին դանակը . — կանաչ
տերեւներու տակ — դեռ իր կարմիր արիւնը կե-
ցած է : — Բայց որքն անոր արիւնը ժողված է ,
այն ազնուական և անմեղ արիւնը , — և Բիւդրա-
նէրայի վրայ թափեց , — որպէս զի մահացու թոյն
ըլլայ : — Եւ Բիւդրանէրա դրոշմուած պիտի մը-
նայ — մինչև որ մեղապարտ արիւնը — անմեղ
արեան հետքը ջնջէ » :

Աղաւնի աթոռի մը վրայ ձգեց ինք-
զինքը , մեծ ճարտն դէմքին վրան առաւ-
եւ սկսաւ հեծել և ողբալ : Մէկէն քո-
վը ժողվուեցան լալաղին կանայք . էրիկ
մարդկանցմէ ոմանք վայրագ աչքով գե-
ղապետին և իրեն որդւոց վրայ կը նայ-
էին . ծերերէն ոմանք կը տրանջային ա-
նոնց ասանկ շիտթութեան պատճառ
ըլլալուն վրայ : Մեռնողին որդին ճեղ-
քեց բազմութիւնն՝ որպէս զի երթայ ա-
ղաչէ գեղապետին որ մէկէն դուրս ել-
լի : Բայց անիկայ քան զինքն առաջ ա-
ճապարեր էր ելլելու , և երկու որդիքն
արդէն փողոցն էին : Քաղաքապետը քա-
ղաքավարական ցաւակցութիւններ ը-

նեկէն ետքը երիտասարդ Բիէզըրիին, ա-
նոնց ետեւէն դուրս ելաւ: Իսկ Օրսոյ քրո-
ջը քով մօտեցաւ, թեկէն բռնեց և սե-
նեկէն դուրս հանեց: — Ընկերեցէք ի-
րենց, ըսաւ Բիէզըրի իր բարեկամներէն
մէկ երկուքին, աղէկ նայեցէք որ վար-
ձանք մը չգայ զլուխնին: Երկու իրեք
երիտասարդ մէկէն դանձակնին զգեստ-
նուն ձախ գրպանը դրին, և տարին զՕր-
սոյ ու իր քոյրը մինչեւ իրենց տան դու-
ռը:

ԺԳ

Աղաւնի շունչը կտրած ու մարմնով
սաստիկ յողնած՝ բառ մը չէր կրնար
արտաբերել. զլուխը եղբօրն ուսին վրայ
կռթընցուցած էր, և անոր մէկ ձեռքը
կը սխմէր: Օրսոյ թէպէտ չէր հաւնած
քրոջը վերջաբանին, սակայն խելքը
միտքն անոր ջղային այլայլութեան դա-
դրելուն վրայ էր, որուն կը սպասէր լու-
թեամբ: Այն միջոցին դուռը դարձուե-
ցաւ, և Սաւէրիա վախէն շնչատած՝ վա-
ղելով եկաւ իմաց տուաւ որ քաղաքա-
պեան էր: Աղաւնի լսածին պէս՝ մէկէն

զլուխը վեր բարձրացուց, ոտքի վրայ ելաւ և ասիտ մը առաւ իրեն նեցուկ, որ ձեռքին տակ կը դողար :

Քաղաքապետը ներսւմ ուզեց ան յարմար ժամով այցելութեան դալուն, և ցաւակցելով Աղաւնիի՝ բացատրեց սաստիկ դժացմանց վտանգը, սլախաբակեց յուղարկաւորութեան երգերուն սովորութիւնը, որ տխրաբեր էր հանդիսականաց. և ճարտարութեամբ մը վերջին յանկարծախօսութեան ոտատկութիւնը մեղադրեց : — Ետքը կերպը վախելով — Պ. տէլլա Ռեպպիա, ըսաւ, անդդիացի բարեկամներէդ շատ բարեներ ունիս՝ քեզի. և Նէվիլ օրիորդը սիրով կ'ողջունէ քոյրդ. իսկ քեզի, նամակ մը բերած եմ իրմէն, դժբաղդաբար վրաս չէ. բայց մէկէն կը խրկեմ : Հայրը հիւանդացի էր, վախցանք որ չըլլայ թէ հոտեղի վտանգալի ջերմէն բռնուած ըլլայ. բայց հիմա խաղտեցաւ, և յուսամ որ քիչ ատենէն կը տեսնես դինքը :

— Նէվիլ օրիորդը շատ շփոթած պիտի ըլլայ :

— Բարեբաղդ եղաւ որ վտանգն անց-

նելէն վերջը խմայաւ վտանդը : Պ . անլը
լա Ռէպպիա , շատ աղէկ խօսեցաւ ին-
քը ձեր երկուքին վրայօք . — Օրսոյ քա-
ղաքավարութեամբ մը ծռեցաւ . — և գրե-
թէ իր աղաչանքովն է որ եկած եմ հոս :
Ինծմէ աղէկ ոչ ոք գիտէ այն ձախող
գիպուածն որ ցաւով սրտիս բռնադա-
տուած եմ հիմա յիշատակելու քեզի :
Որովհետև Պ . Պարրիչինի այսօրուան
օրս Բիէզրանէրայի գեղապետն է և ես
այս գաւառին գաւառապետն եմ , հարկ
չէ ըսեմ թէ կ'արհամարհեմ այն կաս-
կածներն որ քանի մը անխոհեմ ան-
ձինք միտքդ ձգեցին և որոց դու չհաւ-
տացիր՝ գիտեմ՝ քու հաստատուն բնա-
ւորութեամբդ և աստիճանիդ վեհու-
թեամբը :

— Աղաւնի , ըսաւ Օրսոյ քրոջը՝ ամօռ-
ուին վրայ ինքզինքն ուտելով , շատ յող-
նած ես . անկողին երթաս նէ աղէկ կ'ը-
նես :

Աղաւնի գլխովը չէ ըսաւ , և իր սովո-
րական հանդարտութիւնն առած՝ կրա-
կէ աչուրներով գաւառապետին վրայ
կը նայէր :

— Պ . Պարրիչինի , շարունակեց քա-

ղարապետը , կը փափագի որ դադրի այս թշնամութիւնը . . . կ'ուզեմ ըսել այս տարտամ վիճակն որ երկուքնուդ մէջ կայ . . . իմ ախորժածս ալ այն է որ իրարու հետ բարեկամական միութեամբ կապուիք . . .

— Պարոն , ընդհատեց Օրսոյ , ես ոչ երբէք ամբաստանած եմ զՊարրիչինի փաստարանն իբրև սպաննող հօրս , բայց ինքն անանկ գործ մը ըրած է որ յաւիտեան չեմ կրնար հետը վերաբերութիւն ունենալ : Սպառնալեաց թուղթ մը ձեացուց՝ աւագակի մը բերնէն դրած . կամ գոնէ՝ ձեռքի տակէն հօրս վրայ ձգեց անոր ձեացմունքը : Ս. յդ նամակն եղաւ հաւանականապէս իմ հօրս մահուան անուղղակի պատճառը :

Քաղաքապետն ինքզինքը ամփոփեց վայրկեան մը , ետքը — Ս. յս բանս , ըսաւ , հայրդ կրնար կարծել՝ երբոր տաքութեամբ բռնկած Պ . Պարրիչինիի դէմ դատաստան բացաւ . բայց դու այս աստիճանի կուրութեան մէջ իյնալու վիճակը չես . մտածէ որ Պարրիչինի շահ մը չունէր այս նամակը ձեացրնելու : . . . Իր բնաւորութեանը վրայ խօսք չեմ

բանար . . . որովհետև չես ճանչնար դին-
քը և միտքդ պղտորած է վրան . բայց
յուսամ համոզուած չես թէ մարդ մը
որ օրէնսագէտ է . . .

— Բայց , պարոն , ըսաւ Օրսոյ ոտք
ելլելով , երբոր կ'ըսես թէ այդ նամակը
Պարրիչինեայ շինածը չէ , ըսել է որ հօրս
վրայ կը ձգես զայն : Իր պատիւը՝ իմն է :

— Ամենէն աւելի ես համոզուած եմ
տէլլա Ռէպպիա հաղարապետին պա-
տուաւոր մարդ ըլլալուն . . . նամակին
հեղինակն այսօրուան օրս ծանօթ է . . .

— Ո՛վ է , աղաղակեց Աղաւնի դէպ
'ի քաղաքապետն երթալով :

— Մնղգամին մէկը , անանկ յանցա-
ւոր մը որուն Գորսիզացիքդ չէք ներեր .
դողին մէկը , թովմաս Պիանքի անուամբ ,
որ հիմա Պատգիոյ բանտերուն մէջ վա-
կուած է . ասիկայ յայտնեց որ նամա-
կին հեղինակն ինքն իսկ էր :

— Այդ մարդը չեմ ճանչնար , պա-
տախտանեց Օրսոյ . ինչ վախճանաւ կըր-
նայ ըրած ըլլաւ :

— Հոստեղացի մարդ մըն է , ըսաւ
Աղաւնի , մեր մէկ շաղացականին եղբայ-
րը . անանկ անպիտանին և սուտղրու-
ցին խօսքը չհաւտացուիր :

— Հիմա կ'իմանաք թէ ի՞նչ շահ ունէր այդ մարդն այն կերպով գործելու : Քրոջդ ըսած ջաղացականը , որուն անունը թէողորոս էր կարծեմ , հօրերնէդ վարձքի առած էր ջաղացք մը , որուն ջրոյն վրայ կը վիճէր Պ . Պարրիչինի տէլըա Ռէպպիա հազարապետին հետ : Հազարապետն առատաձեռն ըլլալով 'ի բնէ' գրեթէ բնաւ ստակ չէր առներ ջաղացքին համար . անով թովմասը միտքը դնելով որ եթէ Պ . Պարրիչինեայ իյնար ջրին իրաւունքը , եղբայրը շատ վարձք պիտի վճարէր անոր (որովհետեւ Պ . Պարրիչինեայ արծաթ սիրուած իւնն աշխարհք ամեն դիտէ) , եղբօրն օգտին համար աւաղակին բերնէն ձեացուցեր է յիշեալ նամակը . այս է բոլոր պատմութիւնը : Գիտէք արդէն որ ազգախառնութեան կապանքն անանկ զօրաւոր կ'ազդեն Գորախպացուց սրտին վրայ , որ երբեմն ինչուան յանցանաց մէջ ալ կը ձգեն : . . . Խնդրեմ կարդացէք սա նամակն որ ընդհանուր գործակատարին փոխանորդը դրած է ինձի , և ըսածին կը համոզուիք :

Օրոյ աչքէ անցուց նամակն որ ման-

րամասնաբար կը գրէր թովմասի ըրած
յայտնութիւնները . և Աղաւնի ալ եղ-
բօրն ուսին վրայէն կը կարդար :

Երբոր Աղաւնի լմնցուց կարդալը ,
— Օրլանտուշիոյ՝ Պարրիչինեայ որդին ,
ըսաւ , ամիս մը առաջ Պասդիա գնաց ,
երբ իմացուեցաւ որ եղբայրս կու գար :
Հոն տեսնուած պիտի ըլլայ թովմասի
հետ և ստակով գնած պիտի ըլլայ ան-
կէ այս սուտը :

— Դու ամեն բան ենթադրութեամբ
կը դատես , պատասխանեց քաղաքա-
պետը նեղանալով : Ճշմարտութիւնը
ճանչնալու ճամբան ան է : Իսկ զքեզ ,
պարոն , պաղ արեամբ կը տեսնեմ . ըսէ
ինձի՝ ի՞նչ է հիմա կարծիքդ : Դու ալ ան
կարծիքէն ես որ մարդ մը ուրիշի ախորժ-
մը ընելու համար՝ սուտէն յանցանք մը
առնէ վրան և իր դատապարտութիւ-
նը ծանրացընէ :

Օրսոյ նորէն կարդաց փոխանորդին
թուղթը , երդուընցընելով անոր ամեն
մէկ բառը . որովհետև Պարրիչինի փաս-
տաբանը տեսնելէն ետքը՝ աւելի դժուա-
րաւ կը համոզուէր քան թէ քանի մը
օր առաջ : Հուսկ ուրեմն՝ բռնադատե-

ցաւ խոտափանելու որ կը համոզուէր նամակին ըսածներուն . բայց Աղաւնի աղաղակեց ուժգին .

— Թովմաս Պիանքի սատանային մեծն է . ապահով եմ որ կամ դատապարտութենէ կ'ազատի կամ բանտէն կը փախչի :

Քաղաքապետն ուսերը վեր թօթվեց .

— Ունեցած տեղեկութիւններս հաղորդեցի քեզի , պարոն , ըսաւ Օրսոյի . ես հիմա կ'երթամ , և քեզի կը թողում մտածելը . կը սպասեմ որ միտքդ լուսաւորուի , և քրոջդ ենթադրութեանցը նման ըմբռնունք չունենաս :

Օրսոյ ջանաց արդարացընելու զԱղաւնի , և ապահովցուց զքաղաքապետն որ այսուհետև զԹովմաս միայն յանցաւոր կը ճանչնար :

Քաղաքապետն ոտքի վրայ ելած էր . . . Թէ որ ժամանակն ուշ եղած չըլլար , ըսաւ , կ'ըսէի որ հետս դաս Նէվիլ օրիորդին թուղթն առնելու . . . նոյն առթով Պարրիչինիին առջև կը զուրցէիր ինչ որ հիմա ինձի զուրցեցիր , և ամէն բան կը ըմբռնար :

— Ոչ երբէք Օրսոյ տէլլա Ռեպպիա

Պարրիչինի մը տուն պիտի մտնայ, պու-
ռայ Աղաւնի թափով:

— Կ'երևայ որ օրիորդը դերդաստա-
նին զանգակ կրողն¹ է, ըսաւ քաղա-
քապետը ծաղր ընելով:

— Պարոն, պատասխանեց Աղաւնի
տարութեամբ, խաբեր են դքեզ: Գու-
չեա ճանչնար փաստաբանը, անկէց ա-
ւելի նենդաւոր և վարպետորդի մարդ
չկայ աշխարհքիս մէջ: Հոգիդ սիրեա
կ'աղաչեմ՝ անանկ բան մը ընել մի տար
Օրսոյի, որ յաւիտեան ամօթով պատէ
զինքը:

— Աղաւնի, դուրցեց Օրսոյ, կիրքով
կը խօսիս:

— Օրսոյ, Օրսոյ, այն արկղիկին հա-
մար ըլլայ՝ որ տուի քեզի, կ'աղաչեմ
մտիկ դիր ինձի: Քու և Պարրիչինիներ
բուն մէջ արիւն կայ, չեա կրնար անոնց
քով երթալ:

— Քոյր իմ:

— Չէ, եղբայր, պիտի չերթաս հոն,

¹ Աշխարհն բուն հօտին առջեւն դացող զանգա-
կաւոր խոյին կը նմանցընեն Գորսիգացիք մէկը՝ որ
դերդաստանի մը կառավարողն է մեծ դիպուած
ներու մէջ:

ապա թէ ոչ կ'ելլեմ կ'երթամ աս տու-
նէն, և մէյ մ'ալ երեսս չես տեսներ . . .
Օրսոյ, զթա վրաս: Ըսաւ և ծունկը ին-
կաւ:

— Կը ցաւիմ, ըսաւ քաղաքապետը,
ասանկ յամառ գտնարուս տէլլա Ռէպ-
պիա օրիորդը: Բայց դու զինքն անշուշտ
կը համոզես: Գուռը բացաւ և կանկ ա-
ռաւ. անանկ կ'երևար որ Օրսոյի կը սպա-
սէր:

— Հիմա չեմ կրնար քովէն բաժ-
նուիլ, զուրցեց Օրսոյ . . . վաղը՝ թէ որ . . .

— Վաղը կանուխ կ'երթամ ես, պա-
տասխանեց քաղաքապետը:

— Գոնէ, աղաղակեց Աղաւնի ձեռ-
քերն իրարու միացուցած, ինչուան վա-
ղը առաւօտ սպասէ, եղբայր: Թո՛ղ ին-
ժի ժամանակ որ հօրս թղթերը նորէն
մէյ մը նայիմ . . . չես կրնար չէ ըսել աս
բանիս:

— Աղէկ. աս իրիկուն աչքէ անցուր
զանոնք. բայց անկէ ետքը ալ պիտի
չչարչարես զիս այս արտաքոյ կարգի ա-
տելութեամբ: . . . Ներումն կը խըն-
դրեմ, Պ. քաղաքապետ . . . ես ալ ար-
դէն հանդիստ չեմ . . . Շաւելի աղէկ է
որ վաղուան ձգենք:

— Գիշերը աղէկ խորհուրդներ կը բերէ, զուրցեց քաղաքապետը, յուսամ որ վաղը տարտամութիւններդ կը վարատին :

— Մավէրիա՛, ըսաւ Աղաւնի, կանթեղն ա՛ռ և ընկերէ՛ք քաղաքապետին. քեզի նամակ մը պիտի տայ եղբօրս համար : — Ետքը քանի մը խօսք ըսաւ Մավէրիայի ականջէն :

— Աղաւնի, ըսաւ Օրսոյ քաղաքապետին երթալէն վերջը, շատ վշտացուցիր դիս. մինչև ցվերջ ասանկ յայտնի բանը պիտի ժխտես :

— Ինչուան վաղը ժամանակ տուիր ինձի, պատասխանեց Աղաւնի. քիչ է ժամանակս, բայց դեռ կը յուսամ :

Ետքը բալլիքներու խուրձ մը առաւ և վերի յարկին մէկ սենեակը դնաց : Հոն աճապարելով գզրոյցներ բացաւ, և դրասեղանի մը մէջ կը նայէր կը փընտռէր՝ ուր տէլլա Ռէպպիա հազարապետն իր հարկաւոր թղթերը կը դնէր ատենօր :

ԺԳ

Մավէրիա ուշացաւ դառնալու, և Օրսոյ անհամբերութենէն չէր գիտեր ընելիքը. վերջապէս երևցաւ՝ ձեռքը նամակ մը, հեան ալ պզտիկ ֆիլիսնան որ աչքերը կը շփէր, որովհետև առջի քունէն արթնցուցեր էին զինքը:

— Պզտիկ, ըսաւ Օրսոյ, ի՞նչ ունիս հոս այս ժամուս:

— Սղաւնի կանչեր է զիս:

— Ի՞նչ փշեր է արդեօք խելքին, մըտքէն զուրցեց Օրսոյ: Բացաւ Լիւզիոյ նամակը, և զայն կարդացած միջոցը՝ ֆիլիսնա քրոջը քով դնաց: Նէվիլ օրիորդին նամակը հետևեալն էր.

« Պարոն,

« Հայրս քիչ մը հիւանդացաւ, և արդէն ՚ի բնէ անանկ ծոյլ է գրելու, որ բունադատեցայ իրեն քարտուղարութիւն ընելու: Գիտես որ քանի մը օր առաջ ծովուն եղերքը ոտքերը թրջեց, փոխանակ մեզի հետ տեսարանին ըզմայլելու. այնչափը բաւական է ձեր գե-

դեցիկ կղզւոյն մէջ մարդուն վրայ ջերմ
բերելու : Ուստի հայրս քիչ մը ջերմ ու-
նեցաւ , իսկ ես մեծ վախ . քաղաքապե-
տը , որ ինծի շատ ազնիւ մարդ կ'երևայ,
աղէկ բժիշկ մը տուաւ մեզի . անիկայ
երկու օրուան մէջ հողէ խալըացուց ըզ-
մեզ : Հայրս կ'ուզէ հիմա որսի երթալ ,
բայց ես դեռ թող չեմ տար : — Ի՞նչ
պէս դտար քու լեռնային պալատդ . քու
հիւսիսային աշտարակդ միշտ իրեն տեղն
է . շատ ուրուականներ կային մէջը : Այս
բաները կը հարցընեմ քեզի , որովհետեւ
հայրս միտքը պահած է որ խոստացեր
եւ իրեն այժեամն , վարազ և վայրի ոչ-
խար : — Պատիւ երթալու միջոցնիս՝
մտքերնիս դրած ենք ձեր հիւրասիրու-
թիւնն ընդունելու . և յուսամ որ տէլլա
Ռէպպիաներուն պալատն , որ հինցած ու
քայքայած է կ'ըսէիր , դուխնիս չկոր-
ծանիր : Քաղաքապետին հետ վրադ խօ-
սեցանք . Պատիւայէն գրեթէ իրեն անըզ-
գամ բանտարկելոյ մը ըրած յայտնու-
թիւնները , որոնք քու կասկածներդ կը
վարատեն . և ասկէ ետքը պէտք է որ
թշնամութիւնդ բոլորովին դադրի , որ
երբեմն կը վախցընէր զիս : Չես կրնար

մակարեւրել թէ ինչ ախորժ առի եր-
բոր պաշխատաւ երգող օրիորդին հետ
երթալդ տեսայ՝ հրացանը ձեռքդ և
աչքդ խոժոռ . այն միջոցին սովորակա-
հէն աւելի դորսիգացի երեցար ինձի . . .
քիչ մը սաստիկ ալ : Երկայն կը դրեմ
թուղթս . որովհետև ձանձրացած եմ :
Քաղաքապետը ճամբայ պիտի ելլէ . եր-
բոր դէպ'ի ձեր լեռները ճամբայ ընենք՝
մասնաւոր մարդ կը դրկենք առաջ խմա-
ցընելու , և ես Սղաւնիի պիտի աղաչեմ
որ պրոշչիւր մը պատրաստէ մեզի : Հիմ
կու հիմա իմ սիրալիր ողջոյնս առը ի-
րեն : Իրեն առած դանակն ստէպ կը
դորժածեմ . վիպասանութեան մը թըղ-
թերը կը կտրեմ անով , բայց ահաւոր
դանակը չսիրեր այս պաշտօնն ու կը
պատրուտէ դիրքս : Բարեան մնաս , պա-
րան . հայրս սիրոյ ողջոյն կը դրկէ քեզի :
Քաղաքապետին խօսքին մտիկ դիր , ա-
ղէկ խորհրդատու է , և կարծեմ ձեր
պատճառաւ ճամբէն կը խոտորի : Գոր-
դէ կ'երթայ հիման քար մը անկելու . կը
մակարեւրեմ որ վսեմ արարողութիւն
մը պիտի ըլլայ , և կը ցաւիմ որ չեմ
կրնար ներկայ ըլլալ : Կարծեմ պի-

տի սրդողիս այսչափ երկայն գրելուս .
բայց կը կրկնեմ որ ձանձրացած եմ, և
նոյն պատճառին համար հրաման կու
տամ որ կրցածիդ չափ երկայն պատաս-
խան տաս : Իրօք կը զարմանամ որ ին-
չուան հիմա չգրեցիր ինձի Բիէդրանէ-
րայի պալատդ յաջողութեամբ հաս-
նելդ :

Լ Ի Ի Դ Ի Ա

Յ . Գ . Խնդրեմ մտիկ դիր քաղա-
քապետին , և ըսածն ըրէ . ինձի ախոր-
ժեղի բան կ'ընես » :

Օրսոյ իրեք չորս անգամ կարդաց այս
նամակը . ետքը երկայն պատասխան մը
գրեց , և Սավէրիայի տուաւ որ երթայ
տանի գեղացւոյ մը որ նոյն գիշերը Այ-
աչչիոյ պիտի երթար : Ա՛լ անկէ ետքը
Պարրիչինիներուն վրայօք կասկածները
բարորովին փարատեցան մտքէն . և ոչ
իսկ ատելութեան հետք մնաց սրտին մէջ :
Քիչ մը ատեն սպասեց որ քոյրը վար-
իջնայ , և տեանալով որ չգար՝ գնաց
պառկելու : Աղաւնի ծածուկ բաներ ա-
պրապըրեր Քիլինայի ու զրկեր էր . և
գիշերուան մեծ մասը հնոտի թղթեր

կարդալով անցուց : Արշալուսէն քիչ առաջ քանի մը պզտի խիճեր նետուեցան իրեն պատուհանին . այս նշանը լաածին պէս՝ պարտէզն իջաւ, ծածուկ դուռ մը բացաւ, ժանիքոտ դէմքով երկու մարդ խոթեց տունը . և առջի հոգը խոհանոցը տանիլը զիրենք ու կերպընեն ին եղաւ : Հիմա կ'իմացընենք ով էին այս մարդիկը :

ԺԵ

Առաւօտը ժամը վեցին ատենները քաղաքապետին կողմանէ ծառայ մը եկաւ Օրսոյի տան դուռը զարկաւ : Աղաւնի բացաւ . ծառան ըսաւ որ քաղաքապետը ճամբայ ելլելէն առաջ կը սպասէր Օրսոյի : Աղաւնի մէկէն անխռով պատասխանեց որ եղբայրը սանդուխէն վար իյնալով՝ ոտքը ճմլեցուցեր էր, և չկարենալով քալել՝ շատ շնորհակալ կ'ըլլար թէ որ քաղաքապետն հաճէր իր տունը դալու : Աս դէպքէն քիչ ետքը՝ Օրսոյ վար իջաւ և հարցուց Աղաւնիի թէ քաղաքապետն իմաց տուեր էր որ երթայ իրեն : — Հոս կ'ուզէ տես

նուիլ հետդ , պատասխան տուաւ Ա.
ղաւնի առանց բնաւ այլայլելու : Կէս
ժամի մը չափ Պարրիշինիններուն անէն
ելլող շեղաւ . ան միջոցին Օրսոյ հար-
ցուց քրոջը թէ նոր բան մը դտեր էր
արդեօք . Աղաւնի պատասխանեց որ քա-
ղաքապետին առջև կ'ըսէ : Աղաւնի ար-
տաքուստ խաղաղ կը կեղծէր զինքը .
բայց երեսին գոյնէն և աչքերէն կ'իմա-
ցուէր խռոված ըլլալը :

Հուսկ ուրեմն Պարրիշինեայ տան դու-
ռը բացուեցաւ . քաղաքապետը ճամ-
բորդի զգեստով դուրս ելաւ , ետևէն
գեղապետն և երկու որդիքը : Ի՛նչպէս
զարմայան Բիէդրանէրայի բնակիչքն ,
որ առաւօտուրնէ 'ի վեր կը սպասէին
գաւառապետին երթը տեսնելու , երբ
տեսան որ անիկայ Պարրիշինիններուն
հետ հրապարակը շիտակ կտրեց անցաւ
և տէլլա Բիէպպիաններուն տունը մտաւ :

— Կը հաշտուին իրարու հետ , զուրցե-
ցին գեղին քաղաքագէտքը :

— Ես չէի զուրցեր ձեզի , ըսաւ ծե-
րունի մը , որ Օրսոյ շատ ժամանակ ցա-
մաք երկիր կեցած ըլլալով՝ սրտի մարդ
չէ :

— Քայց ան նայեցէք, զուրցեց տէլ-
լա Աէպպիաներուն կողմնակից մը, որ
Պարրիչինիներն են իրեն դացողը. կ'եր-
թան ներումն խնդրելու իրմէ:

— Քաղաքապետն է երկու կողմիններն
ալ կակրղյընողը, կրկնեց ծերունին.
այսօրուան օրս կտրըճութիւն չէ մնա-
ցած և երիտասարդաց բնաւ հողը չէ
իրենց հարց արիւնը:

Գաւառապետը զարմացաւ Օրսոյի
տարի վրայ ըլլալն և քալելը տեսնելով.
Աղաւնի մէկէն ներումն խնդրեց սուտ
զուրցելուն, և վրայ բերաւ. — Թէ որ
ուրիշ տուն մը կեցած ըլլայիր, եղբայրս
երէկ մէկէն եկած կ'ըլլար քեզի այցե-
լութեան:

Օրսոյ շատ մահացաւ այս սուտին հա-
մար, բողոքեց որ ինքը մաս չունէր ա-
նոր մէջ, և յանդիմանեց քոյրը: Քաղա-
քապետն ու ծերունի Պարրիչինին հաւ-
տացին իրեն խօսքին. բայց դեղապե-
տին աղաքը չհամոզուեցան, և Օռլան-
տուչչիոյ — Ասոնք հետերնիս կը խաղան,
ըսաւ: Իսկ վինչէնդէլլոյ ալ — Թէ որ
իմ քոյրս, զուրցեց, ասանկ բաներ ը-
նէր ինձի, ես կը սորվեցընէի իրեն:

Այս խօսքերը տհաճելի եղան Օրսոյի . և բարկութեամբ նայեցան իրարու երկու կողմէն ալ :

Ամէնքը նստան , բայց 'ի Աղաւնիէ՛ որ խոհանոցին դրան քով ոտքի վրայ կեցած էր . քաղաքապետն եղաւ խօսքը բացողը , և երկրին նախապաշարմունքներուն վրայ քանի մը խօսք կցկրցելէն ետքը , ըսաւ որ ամենէն սաստիկ արմատացած թշնամութիւններուն շատն իրարու միտքը չհասկընալէն ծագած է : Յետոյ դեղապետին դառնալով զուրցեց որ Պ . տէլլա Ռէպպլիա ոչ երբէք կաակած մը ունեցեր էր Պարրիչիինի ազգատոհմին վրայ որ իր հօրը սպանութեան մէջ մատ ունեցած ըլլայ . միայն երկբայութիւն մը ունեցեր էր երկու ազգատոհմից մէջ եղած դատաստանին մէկ պարագային վրայօք , բայց հիմա նոր յայտնութիւններէն ճշմարտութիւնն ստուգելով՝ ամեն տարակոյս մտքէն փարատեր էր , և կը փափագէր դրացւոյ բարեկամութիւն կապել Պ . Պարրիչիինիին և իրեն ընտանեացն հետ :

Օրսոյ բռնի հաւանութեան նշան տըլաւ . Պարրիչիինի քանի մը խօսք կակա-

զեց զոր ոչ որ լսեց, իսկ իր որդիքը ձե-
ղունին գերաններուն կը նայէին: Քա-
ղաքապետն Օրսոյի դարձած՝ Պարրիչի-
նիի բերնէն պիտի խօսէր, բայց Աղաւնի
զգեատին դրպանէն մէկ քանի թղթեր
հանելով՝ ծանրութեամբ մը մէջտեղն
անցաւ ու ըսաւ.

— Շատ ուրախութիւն պիտի զգայ
սիրտս՝ երբոր երկու ազգատոհմից մէջ
հակառակութիւնը դադրի: Բայց որպէս
զի հաշտութիւնը սրտանց ըլլայ, պէտք
է որ ունեցած տարակոյսնիս փարա-
տենք: — Պ. քաղաքապետ, ես ընաւ չէի
հաւտացած թովմաս Պիանքիի յայտա-
բարութեանը, որովհետեւ զիտեմ ինչ
անզգամ մարդ ըլլալը: — Ես կ'ըսէի որ
թերեւ Պ. Պարրիչինի որդիքը Պաս-
դիայի բանտին մէջ տեսնուած ըլլան
անոր հետ...

— Սուտ է, ընդհատեց Օւլանտուչ-
չիոյ, ես չեմ տեսնուած հետը:

Աղաւնի արհամարհութեամբ նայե-
ցաւ վրան, և շարունակեց խօսքը քա-
ղաքապետին հետ.

— Դու ըսիր թէ այն դիտմամբ թով-
մաս սպառնապիք զրեւ էր Պ. Պարրի-

չինեայ՝ կատաղի աւազակի մը բերնէն ,
որ իր թեողորսս եղբօրը ձեռքէն ջաղաց-
քը շեղէ , որ իմ հայրս թեթեւ դնով ա-
նոր վարձքի տուած էր :

— Այս այսպէս է , պատասխանեց
քաղաքապետը :

— Անանկ անպիտան մարդ ըլլալէն
ետքը՝ կարող էր Պիանքի ասիկայ ալ ը-
նելու , խորհրդածեց Օրսոյ՝ խարուե-
լով քրոջը հանդարտ խօսակցութենէն :

— Կեղծեալ նամակը , շարունակեց
Աղաւնի՝ կամաց կամաց աչքերը կեն-
դանութիւն առնելով , յուլիսի 11ին
գրուած է : Թովմաս ան միջոցին իր եղ-
բօրը քոմս էր՝ ջաղացքը :

— Այո , պատասխանեց քաղաքա-
պետը քիչ մը շփոթած :

— Ուրեմն ի՞նչ շահ ունէր թովմաս
Պիանքի աս բանս ընելու , հարցուց Ա-
ղաւնի յաղթական ձայնիւ : Եղբօրը
վարձքին ժամանակն անցեր էր . հայրս
յուլիսի 11ին արձրկեր էր զանիկայ : Ա-
հաւաստիկ հօրս հաշուէզիլքը , արձակ-
ման թուղթը , և Այաչչիոցի մը նա-
մակն որ նոր վարձուոր մը կ'առաջար-
կէր մեզի :

Այս ըսելով ձեռքի թուղթերը քաղաքապետին յանձնեց :

Ամենքը զարմացած լուռ կեցան վայրկեան մը : Գեղապետին երեսին գոյնը նետեց . Օրսոյ ընքուիները խաղցրնելով՝ քաղաքապետին մօտեցաւ ձեռքի թուղթերն առնելու կարդալու համար :

— Ատնք հետերնիս կը խաղան , աղաղակեց դարձեալ Օռլանտուչչիոյ՝ բարկութեամբ ոտքի վրայ ելլելով : Երթանք հայր հոսկից . բնաւ հոս պէտք չէինք եկած ըլլալ :

Պարրիչինի շուտով իր սովորական պաղարիւն կերպն առաւ . ուղեց քննել թուղթերը , զորոնք քաղաքապետն յանձնեց իրեն լուռ թեամբ . և կանաչ ակնոցները ճակտին վրայ վերցընելով , անտարբեր կերպով մը կարդաց . ան միջոցին Աղաւնի կատաղի աչքերով կը զննէր զինքը , նման մատակ վազրի մը՝ որ կը տեսնայ այժեման մը դէպ 'ի իր ձաղերուն մօտենալը :

— Անտարակոյս , ըսաւ Պարրիչինի՝ ակնոցը վար առնելով և թուղթերը քաղաքապետին դարձընելով , թովմաս ճանչնալով հանգուցեալ հաղարապե-

տին սրտին ազնուութիւնը, յուսացեր է որ միտքը կը փոխէ ու չարձրկեր զինքը. և իրօք ջաղացքն իրեն ձեռքը մնաց. ըսել է որ . . .

— Ես զինքը ջաղացքը պահեցի, պատասխանեց Աղաւնի մէկ արհամարհուտ կերպով մը. հայրս մեռած ըլլալով, իմ վիճակս անանկ կը պահանջէր՝ որ մեր մարդիկներուն գլխով:

— Մակայն թովմաս կը խոստովանի, պատասխան տուա քաղաքապետը, որ նամակն ինքը դրած է. աս յայտնի բան է:

— Յայտնին ան է՝ որ աս նիւթիս մէջ մեծ անդդամութիւններ կան, զուրցեց Օրսոյ:

— Աս պարոններուն մէկ ուրիշ ըսածին ալ դէմ պիտի խօսիմ, ըսաւ Աղաւնի: — Աս ըսելով՝ խոհանոցին դուռը բացաւ, և ներս մտան Պրանտոլաչչիոյ, ընկերն ու Պրուսգոյ շունը: Դըրսուանց զէնք չէր երևար երկու աւազակաց վրայ. և թէպէտ մեծարանքով գլուխնին բացին, կրնայ մակարերուիլ թէ իրենց յանկարծական ներկայութիւնն ինչ տպաւորութիւն ըրաւ ժո.

դովերոյ վրայ . դեղապետը վախէն վար
կ'իյնար , բայց մէկէն տղաքը վրան վա-
ղելով՝ բռնեցին , և ձեռուրնին գրպան-
նին տարին՝ դանակնին դուրս հանելու
համար . դաւառապետը դէպ 'ի դուռը
սկսաւ երթալ , իսկ Օրսոյ Պրանտոլաչ-
չիոյի վզնոցէն բռնած՝ ինչու համար
հոս եկեր ես , անզգամ՝ աղաղակեց :

— Որոգայթ է ասիկայ , պոռայ դե-
ղապետն ու կը ջանար դուռը բանալու .
բայց Սավէրիա դրսէն կղզեր էր դա-
նիկայ՝ աւազակներուն հրամայելովը ,
ինչպէս որ վերջէն խմացուեցաւ :

— Սղնիւ մարդիկ , ըսաւ Պրանտո-
լաչչիոյ , մի վախնաք ինծմէ . սև եմ ,
բայց սատանայի չեմ նմանիր : Մենք
դէշ դիտաւորութեամբ եկած չենք հոս ,
հապա իբրև վկայ . քեզ տեսնամ , ժո-
ղովրդապետս , դու խօսէ՛ ասոնց հետ :

— Պարոն քաղաքապետ , ըսաւ միւս
աւաղակը , իմ անունս Ճիօզանդոյ Գաս-
դրիգոնի է , բայց ժողովրդապետ կ'ը-
սեն ինծի : Սղաւնի ինծմէ տեղեկու-
թիւն ուզեց թովմաս Պիանքի անուամբ
մէկուն վրայ , որուն հետ բանտուած էի
Պասդիայի մէջ՝ իրեք շաբաթ առաջ :
Ուստի իմ տեղեկութիւնս . . .

— Խնդրեմ մի աշխատիր տեղեկութիւնդ տալու, պատասխանեց քաղաքապետը. քեզի պէս մարդէն պէտք չունիմ բան լսելու: . . . Պ. տէլլա Ռէպպիա, անանկ կը կարծեմ որ դու մասն չունիս այս դաւաճանութեան մէջ, բայց տէր չե՞ս տանդ մէջ. բանալ տուր դուռը: Ետքը քոյրդ պէտք է որ համար տայ աւազակներու հետ ունեցած վերաբերութեանցը վրայօք:

— Պ. քաղաքապետ, աղաղակեց Ս. դաւնի, կ'աղաչեմ մտիկ ըրէ աս մարդուն ըսելիքը: Դու հոս եկած ես ամենուն արդարութիւն ընելու համար, որով պարտական ես ճշմարտութեան տեղեկանալու: Խօսէ, ճիօղանդոյ Գասդրիգոնի:

— Մտիկ մի ըներ, միաբերան աղաղակեցին իրեք Պարրիչինիները:

— Թէ որ ամենքը միատեղ խօսին, ըսաւ աւազակը ժպտելով, իրարու ըսածները չենք իմանար: Ուստի խօսքիս դառնալով, բանտին մէջ ինծի հետ թովմաս ալ կը դանուէր. և ստէպ Պ. Օռլանտուչչիոյ իրեն այցելութեան կու գար:

— Մուտ է, պոռային միաձայն երկու եղբարք:

— Երկու անգամ ժխտելը՝ հաստա-
տել է, զուրցեց Գասդրիգոնի : Թովմասի
քով ստակ կար, անոր համար աղէկ
կ'ուտէր ու կը խմէր : Ես ալ՝ շիտակը
խոստովանիմ՝ միշտ աղէկ ուտելը կ'ա-
խորժիմ, և թէպէտ կը խորշէի ան ա-
նրդգամին ընկերութենէն, սակայն չդի-
մացայ ու խել մը անգամ հետը սեղան
նստայ : Երախտագիտութեան համար
առաջարկեցի իրեն որ հետս փախչի
բանտէն : Թովմաս յանձն չառաւ, ըսե-
լով որ իրեն բանը ապահով էր, որ Պար-
րիչինի փաստաբանը դատաւորներուն
հետ իր վրայօքը խօսեր էր, և թէ ձեան
պէս մարտը պիտի ելլէր բանտէն, դըր-
պանն ալ ստրկով : Իսկ ես պատշաճ սե-
պեցի աներևոյթ ըլլալ բանտէն : Լմըն-
ցուցի ըսելիքս :

— Սա մարդուն ըսածները բոլոր սուտ
են, կրկնեց հաստատութեամբ Օսլան-
տուչչիոյ : Թէ որ բաց տեղ եղած ըլ-
լայինք՝ իւրաքանչիւրնիս իրեն հրացա-
նովը, ասանկ չէր կրնար խօսիլ :

— Մնմտի խօսք, ըսաւ Պրանտոլաչ-
չիոյ : Նայէ՛, Օսլանտուչչիոյ, ժողովրդա-
պետին հետ չաւրուիս :

— Վերջապէս թող պիտի շտան , Պ . տէլլա Ռէպպիա , որ դուրս ելլեմ , աղա , դակեց քաղաքապետը՝ բարկութենէն ոտքը գետին զարնելով :

— Սավէրիա , Սավէրիա , պուռայ Օրսոյ . բայց դուռը , գետինն անցնիս :

— Վայրկեան մը կեցէք , ըսաւ Պրանտոլաչչիոյ . առաջ մենք պիտի ելլենք մեր կողմէն : Պ . քաղաքապետ , բարեկամաց սովորութիւնն է որ իրարմէ բաժնուելու ատեննին՝ կէս ժամ իրարու միջոց կու տան :

Քաղաքապետն արհամարհութեամբ մը նայեցաւ վրան :

— Ծառայ եմ ամենուդ , ըսաւ Պրանտոլաչչիոյ : Ետքը ձեռքն երկնցընելով՝ Քե՛զ տեսնամ՝ Պրուսոյ , ըսաւ շանը , քաղաքապետին համար ցատքէ մէյ մը :

Շունը ցատքեց . և աւաղակներն աճապարեցին առնելու խոհանոցէն իրենց զէնքերն ու պարտիզէն փախչելու . ետքը սուլելու սուր ձայն մը լսուեցաւ և անմիջապէս սրահին դուռը բացուեցաւ՝ իբրև ինքիրմէ :

— Պ . Պարրիչինի , ըսաւ Օրսոյ բարկութիւնը չափաւորելով , ես դքեզ նա

մակ խարդախող կը սեպեմ. այսօր իսկ բողոքս պիտի խրկեմ թագաւորին գործակատարին, ամբաստանելով զքեզ միանգամայն իբրև դաւակից Պիանքիի հետ: Թերևս ուրիշ ծանրագոյն բողոք մ'ալ ընեմ, քեզի դէմ:

— Իսկ ես ալ, Պ. տէլլա Ռէպպիա, զուրցեց զեղապետը, պիտի բողոքեմ քեզի դէմ՝ մեզի դարան զնելուդ և աւազակաց հետ դաւակցութիւն ընելուդ համար: Առ այժմ քաղաքապետը զինուորաց ձեռք կը յանձնէ անշուշտ ըզքեզ:

— Քաղաքապետն իրեն պարտքը պիտի ընէ, ըսաւ անիկայ խստութեամբ: Պիտի հսկէ որ խաղաղութիւնը չվրդովի Բիէդրանէրայի մէջ. և արդարութիւն պիտի ընէ: Ամենուդ հետ կը խօսիմ, պարոնայք:

Գեղապետն ու վինչէնդէլլայ արդէն սրահէն դուրս ելեր էին, և Օռլանտուչչիոյ դէպ 'ի ետ ետ քալելով դուրս ելելու վրայ էր. բայց Օրսոյ ցած ձայնով ըսաւ իրեն. — Հայրդ ծեր է, ապտակ մը զարնելու ըլլայի 'նէ՛ կը ջախջախէի. անոր համար վրէժս ձեզմէ պիտի առնեմ, քեզմէ ու եղբօրմէդ:

Օսլանտուչիոյ պատասխան տալու
տեղ՝ դանակը քաշեց ու կատաղու-
թեամբ Օրսոյի վրայ յարձակեցաւ. բայց
Սղաւնի մէկէն թեր բռնեց պրկեց,
իսկ Օրսոյ բուռովը քթին բերնին զար-
նելով՝ անանկ ետ հրեց, որ գնաց ու-
ժով մը զարնուեցաւ դրան զարդին: Դա-
նակը սահեցաւ Օսլանտուչիոյի ձեռ-
քէն. բայց Վինչէնդէլլոյ իր դանակը
հանեց ու սրահը մտաւ. Սղաւնի տե-
սածին պէս զանիկայ՝ վազեց հրացան
մը առաւ, որով Վինչէնդէլլոյ տեսաւ
որ դիմացինն աւելի զօրաւոր էր: Նոյն
միջոցին քաղաքապետը վրայ հասաւ ու
կռուողներուն մէջ մտաւ: — Քիչ ա-
տենէն քեզի կը սորվեցընեմ՝ Օրս՝ Ան-
տոն, պոռաց Օսլանտուչիոյ: Եւ ուժով
մը սրահին դուռը քաշելով՝ բանալիով
կղպեց, որպէս զի փախչելու ժամանակ
ունենայ:

Օրսոյ ու քաղաքապետը քառորդ մը
լուռ կեցան՝ իւրաքանչիւրը սենեկին մէկ
ծայրը: Սղաւնի, որուն ճակատը դուար-
թացեր էր ըրած յաղթանակին պատ-
ճառաւ, փոփոխակի կը նայէր անոնց
վրայ, ան հրացանին վրայ կռթրնած՝ որ
յաղթութիւնն ստանալ տուեր էր:

— Այս ի՛նչ երկիր, այս ի՛նչ երկիր,
աղաղակեց հուսկ ուրեմն քաղաքապե-
տը՝ թափով մը ոտքի վրայ ելլելով: Պ.
տէլլա Ռէպպիա, յանցաւոր ես. խօսք
տուր ինձի որ ո՛ր և է բռնութենէ ետ կե-
նաս, և սպասես որ արդարութիւնն ու-
րոշէ աս անիծած խնդիրը:

— Այո, Պ. քաղաքապետ, յանցա-
ւոր եմ որ ձեռք վերուցի անդդամին.
բայց եղածն եղած է, և չեմ կրնար գը-
լանալ իրեն ինձմէ ուզած փոխարէնը:

— Չէ չէ, ինքը միտք չունի մենա-
մարտելու հետդ: . . . Բայց թէ որ ըս-
տաննէ գրեզ, . . . ճշմարիտն ըսելով՝ բա-
ւական առիթ տուիր:

— Զգուշութիւննիս կ'ընենք, ըսաւ
Աղաւնի:

— Օսլանատուչից, ըսաւ Օրսոյ, կըտ-
րի՞ճ տղայ մը կ'երեւայ ինձի, և չեմ կար-
ծեր՝ Պ. քաղաքապետ, որ ցած միտքեր
ունենայ: Շատ շուտով դանակը դուրս
քաշեց. բայց թէ որ ես ալ իրեն տեղն
ըլլայի՝ թերեւս նոյնպէս ըրած կ'ըլլայի.
և շատ ուրախ եմ որ քրոջս դաստակը
փափուկ և տկար չէ եղեր:

— Կ'արգիլեմ որ չմենամարտիք ի-
րարու հետ, զուրցեց քաղաքապետը:

— Գիտնաս, պարոն, որ պատուոյ խնդրի մէջ իմ գիտակցութեանս ձայնին միայն մտիկ կ'ընեմ:

— Կ'ըսեմ քեզի որ պիտի չմենամարտիք:

— Կրնաս զիս բանտել (թէ որ թողում որ զիս բռնէք), բայց ասով ուրիշ բան չես ըներ՝ բայց եթէ ուշացրնել այն բանն որ անհրաժեշտ պիտի ըլլայ:

— Թէ որ եղբայրս բանտել տաս, ըսաւ Ս. Ղաւնի, գեղին կէսն իրեն կողմը կը բռնէ, ան ատեն տեսնաս թէ ինչ հրացաններ կը պարպուին:

— Առաջուց կ'իմացընեմ քեզի, պարոն, զուրցեց Օրսոյ, որ եթէ Պ. Պարրիչինի իր գեղապետի իշխանութեամբը զեղծանելով՝ ուղենայ զիս բանտել, կը պաշտպանեմ անձիս:

— Այսօրուքնէ սկսեալ Պ. Պարրիչինի իր պաշտօնէն կախեալ է, զուրցեց քաղաքապետը... յուսամ որ ինքզինքը կ'արդարացընէ: ... Պ. տէլլա Ռէպպիա, քեզի բան մը պիտի յանձնեմ՝ որ շատ փոքր բան է. տունդ հանդարտ կեցիր, ինչուան որ Գորդէէն դառնամ.

իրեք օր միայն պիտի կենամ հոն, ետ-
քը թագաւորական գործակատարին
հետ կու գամ, և ան ատեն բոլորովին
կը լուծանենք այս անախորժ խնդիրը :
կը խոստանամ ինձի որ ինչուան այն ա-
տեն սր և է թշնամութենէ ետ կենաս :

— Չեմ կրնար խոստանալ, պարոն,
թէ որ Յաւանտուչիոյ ուզէ որ ինձի
հանդիպի, ինչպէս որ կը կարծեմ :

— Ի՞նչ . դու՛ գաղղիացի զինուորա-
կանդ՝ կ'ուզես մենամարտիլ այնպիսի
մէկու մը հետ, որուն հայրը խարդա-
խող կը սեպես :

— Բայց զարկի իրեն :

— Թէ որ ծառայիդ զարկած ըլլայիր
և ինքը փոխարէն ուզէր, կը մենամար-
տէիր հետը : Թո՛ղ ատ խօսքերը, Պ . Օր-
սոյ : . . . Բայց ես կը զիջանիմ քեզի, ու
շատ աւելի թեթեւ բան կը խնդրեմ քեզ-
մէ . Յաւանտուչիոյի ետեւէն մի իյնար . . .
իսկ թէ որ կանչէ գրեզ, թոյլ կու տամ
որ մենամարտիս :

— Ապահով եմ որ կը կանչէ . բայց
կը խոստանամ նորէն ապտակ չզարնե-
լու իրեն՝ որպէս զի չբռնադատուի մե-
նամարտելու հետս :

— Ս.յս ինչ երկիր, կրկնեց քաղաքապետը վեր վար քալելով արագութեամբ. երբ պիտի դառնամ Գաղղիա :

— Պ. քաղաքապետ, ըսաւ Սղաւնի անոյշ ձայնով մը, ժամանակը ուշ է. մեր քովը նախաճաշիկ ընելու յանձն կ'առնես :

Քաղաքապետը խնտաց . և Շատ իսկ կեցայ հոս, ըսաւ . . . կրնան կողմնակցութեան տալ աս բանս : . . . Ս'հ ան օրհնած հիւան քարը . պէտք է որ երթամ : . . . Օրիորդդ տէլլա Ռէպպիա, ինչպիսի թշուառութիւններ արդեօք պիտի ծագին այսօր քու պատճառաւ :

— Գոնէ կը հաւտաս անշուշտ՝ Պ. քաղաքապետ, դուրցեց Օրսոյ, որ քոյրս սաստիկ համոզուած է իր կարծիքներուն վրայ, և ապահով եմ որ դու ալ արդարացի կը սեպես զանոնք :

— Մ'նաս բարով՝ պարոն, ըսաւ քաղաքապետը : Երթամ խնաց տամ զինուորական պահապանաց զլխաւորին որ ձեր վրայ հսկէ :

Երբոր քաղաքապետը դնաց, — Օրսոյ, ըսաւ Սղաւնի, հոս ցամաք երկիր մի կարծեր դքեղ. Օուլանատուչչիոյ չղի-

տեր թէ մենամարտութիւնն ինչ է, և
պէտք չէ որ այնպիսի մահուամբ մեռնի
անանկ ցած մարդը :

— Սիրելի Աղաւնիս, դու կտրիճ կին
ես. դու զիս խալըսեցիր Օսլանտուչչիոյի
դանակէն : Բայց ուրիշ բաներու մէջ
թող տուր որ ես գործեմ. բաներ կան
որ քու գործդ չէ : Նախաճաշիկս պատ,
բասակ. և երբոր քաղաքապետը ճամ,
բայ ելլէ, ինձի խրկէ պզտի Ֆիլինան,
որ կարծեմ շատ աղէկ կը կատարէ իւ
րեն տրուած յանձնարարութիւնները :
Պէտք է որ մէկ նամակս տանի :

Մինչդեռ Աղաւնի նախաճաշկին
պատրաստութեանը կը հակէր, Օրսոյ
իր սենեակը գնաց ու հետեւեալ տոմսա
կը գրեց .

« Ատարակոյս շուտով կ'ուզես ինձի հանդի
պել. ես ալ նոյնպէս կ'ուզեմ : Ատըր առաւօտ
ժամը վեցին Ա. քուսովիսլա ձորին մէջ կրնանք զի
րար գանալ : Ես շատ ձարտար եմ ատրճանակ
սրարսելու, անոր համար այդ զէնքը չեմ առա
ջարկեր քեզի : Վ'ըսեն թէ աղէկ հրացան կը սար
սկես. ուստի զէնքերնիս երկու բերնով հրացան
ըլլայ : Ես հետս հոս տեղի գեղացիներէն մէկը կ'առ
նեմ : Թէ որ եղբայրդ կ'ուզէ հետդ ընկերել՝ եր-

կրորդ վկայ մըն ալ ան. և առաջուց խմացուը ինձի,
որ ան ատեն ես ալ ուրիշ վկայ մը առնեմ» :

ՕՐՍՈՅ-ԱՆՏՈՆ ՏԷԼԼԱ ՌԷՊՊԻԱ.

Քաղաքապետը ժամ մը դեղապե-
տին փոխանորդին քովը կենալէն, և
քանի մը վայրկեան ալ Պարրիչինինե-
րուն տունը անցընելէն ետքը, դէպ 'ի
Գորդէ ճամբայ ելաւ՝ մէկ դինուորի մը
ընկերութեամբ : Քառորդ մը ետքը, Ֆի-
լինա վերոյիշեալ նամակը տարաւ Օռ-
լանտուչիոյի ձեռքը յանձնեց :

Պատասխանն ինչուան իրիկուն ու-
շացաւ : Նամակը երիտասարդաց հայրը
գրած էր, որուն մէջ կ'իմացընէր Օր-
սոյի որ թաղաւորին գործակատարին
պիտի յանձնէր իր որդւոյն գրուած ըս-
տառնապեաց թուղթը, և կ'աւելցընէր
ըսելու. — Ես խղճմտանքիս վրայ սպա-
հով ըլլալով, կը սպասեմ որ արդարու-
թիւնը քու զբալարտութեանցդ վրայ
վճիռ կտրէ :

Մակայն Սղաւնի հինգ վեց հովիւ
կանչեց որոնք եկան պահպանութիւն
ընելու տէլլա Ռէպպիաներուն աշտա-
րակին առջևը : Թէպէտ Օրսոյ կ'ընդդի-

մանար, հրապարակին վրայ նայող պա-
տուհաններուն վարի կողմը կոծղերով
գոցեցին՝ վերը նեղ ծակեր թողլով. և
բոլոր նոյն իրիկունը գեղին բնակիչնե-
րէն շատ անձինք կ'առաջարկէին իրեն՝
ձեռքերնէն եկածն ընելու: Նոյն իսկ ժո-
ղովրդապետ աւագակէն նամակ մը ե-
կաւ, որ կը խոստանար իր և Պրանտո-
լաչչիոյի կողմէն օգնութեան հասնելու,
թէ որ գեղապետը զինուոր գործածէր:
Նամակին վերջը հետևեալ Յետ գրու-
թեանն ըրեր էր. « Կ'ուզէի իմանալ
թէ քաղաքապետն հաւնեցա՞ւ արդեօք
Պրուսոյ շան կրթութեանը, զոր բարե-
կամս ինչպէս որ պէտք է կը դաստիա-
րակէ: Քիչինայէն վերջը՝ անոր պէս հլու
աշկերտ չեմ ճանչնար, միանգամայն
շատ յարմարութիւն կը ցուցնէ »:

ԺԶ

Երկրորդ օրն առանց թշնամութեան
անցաւ. Օրսոյ տունէն չելաւ, և Պարրիչի-
նիններուն դուռն ինչուան իրիկուն գոց
մնաց: Պահպանութեան համար ձգուած
քանի մը զինուորները հրապարակին և

գեղին շրջակայից մէջ վեր վար կը պար-
տէին . իսկ գեղապետի փոխանորդն ալ
իր պաշտօնին նշանազգեստը վրայէն
չէր հաներ :

Ընթրիքի միջոց Աղաւնի ուրախու-
թեամբ ցըցուց Օրսոյի Նէվիլ օրիորդէն
ընդունած հետևեալ նամակը .

Ազնիւ Աղաւնի, մեծաւ գոհութեամբ խմացայ
եղբօրդ նամակէն որ ձեր թշնամութիւնները ընն-
ցեր են . ընդունէ իմ ուրախակցութիւնս : Հայրս
ալ Այազիոյ չիրնար կենալ՝ քանի որ եղբայրդ
քովը չէ որ պատերազմներու վրայ խօսի և հեար
որսայ : Այսօր ճամբայ պիտի ելլենք , և գիշերն
աղբականիդ քով պիտի անցընենք , որուն նամակ
մը առելը մեզի : Իսկ միւս օր ժամը տասներմէկին
ատենները պիտոր դամ քեզի՝ պրո-ւ-ւ-իոյիդ համն
առնելու , որ կ'ըսես թէ լեւը շինուածը քաղաքը
շինուածէն շատ ազնիւ է :

Ողջ լեր , ազնիւ Աղաւնի .

Բարեկամդ

Լ Ի Ի Դ Ի Ա Ն Է Վ Ի Լ

— Ըսել է որ իմ երկրորդ նամակս
չէ ընդունած , զուրցեց Օրսոյ :

— Իր նամակին թուականէն կը տես-
նես որ Լիւդիա ճամբան եղած պիտոր

ըլլայ՝ քու նամակդ Այազիոյ հասած
միջոցը : Մէջը դրած էիր որ չդայ հոս :

— Իմացուցի իրեն որ պաշարման վի-
ճակի մէջ ենք : Կարծեմ մարդ ընդու-
նելու ատեն չէ :

— Բէհ . Մնդդիացիք նորօրինակ մար-
դիկ են . ան իրիկունն որ Լիւդիոյ սե-
նեակը պառկեցայ , ըսաւ ինծի որ կը
ցաւէր թէ որ մեծ վրէժխնդրութիւն մը
չտեսած Գորսիդայէն երթար : Թէ որ
կ'ուզես , Օրսոյ , կրնայինք իրենց ներ-
կայութեան առջև մեր թշնամեաց տան
վրայ յարձակմունք մը տալ :

— Գիտես , ըսաւ Օրսոյ , որ դու սխալ-
մամբ կնիկ ծներ ես . աղէկ զինուորա-
կան մը կ'ըլլայիր :

— Կրնայ ըլլալ : Հիմա երթամ պրոռչ-
ջիռն շինեմ :

— Աւելորդ է : Մարդ մը խրկելու է
որ երթայ իմաց տայ իրենց ու խափա-
նէ գալուսանին՝ քանի որ ճամբայ չեն
ելած :

— Աս փոթորիկով մարդ կ'ուզես խըր-
կել , որ հեղեղը առնէ տանի զինքը :
Ի՛նչպէս կը ցաւիմ խեղճ աւաղակնե-
րուն վրայ . աղէկ որ հասա վերարկու-

ներ ունին: Գիտեա ինչ կրնաս ընել,
Օրսոյ. թէ որ փոթորիկը գազրի, վաղը
առաւօտ մութն 'ի լոյս ճամբայ ելիր,
որ կարենաս մեր բարեկամին քով հաս-
նիլ քանի որ անոնք իրմէն չեն բաժ-
նուած: Սպահովապէս կրնաս հասնիլ,
որովհետեւ Ղիւղիա միշտ ուշ կ'ելլէ ան-
կողմէն: Կը պատմես հոս հանդիպած
բաները, և թէ որ դիտաւորութիւննին
գալ է, սիրով կ'ընդունինք զիրենք:

Օրսոյ հաւանեցաւ սա քանիս. և Ս.
ղաւնի քանի մը վայրկեան լռութենէ
կտրը ըսաւ.

— Թերեւ կարծես որ կատակի հա-
մար ըսի որ կրնայինք Պարրիչիններուն
տան վրայ յարձըկիլ. բայց չե՞ս գիտեր
որ մենք զօրաւոր ենք, մէկի դէմ եր-
կուք ենք, որովհետեւ քանի որ քաղա-
քապետը պաշտօնէն կախեց զգեղապե-
տը, բոլոր գեղացիք մեր կողմն են. կըր-
նանք զանոնք կտոր կտոր ընել. և դիւ-
րին է առիթ մը գտնալ: Թէ որ ուզես
կրնամ ես աղբիւրին քով երթալ և ի-
րենց կնիկները ծաղր ընել. Պարրիչինի-
ները դուրս կ'ելլեն... կամ թերեւ, ո-
րովհետեւ վատ մարդիկ են, իրենց պա-

տուհաններէն վրաս հրացան կը պար-
պեն, և անտարակոյս սխալ նշան կ'առ-
նեն: Ալ ան ատեն ուրիշ բան պէտք
չէ. իրենք են առաջին կռուողը: Վնա-
սը՝ պարզ յաղթուողներունն է. որով
հետև շփոթութեան մը մէջ ո՞վ կրնայ
ըսել թէ սա անձը հրացան պարպեց:
Հաւտա՛, Օրսոյ, խօսքիս. սեւազգեստ
դատաւորները կու գան՝ ճերմակ թըղ-
թերը սևով կ'աղտոտեն, խել մը փուճ
խօսքեր կ'ըսեն, և ծայրը բան չելլեր:
Ծերունի աղուէսը կերպը կը գտնար ցո-
րեկ ատեն աստղեր ցուցնելու անոնց:
Ո՛հ, թէ որ քաղաքապետը վինչէնդէլ-
լոյի առջևը չըլլար, հիմա անոնցմէ մէկ
հատ մը պակաս եղած կ'ըլլար:

Աս խօսքերն անանկ պաղ արեամբ
կ'ըսէր Աղաւնի՝ ինչպէս որ վայրկեան
մը առաջ պրոռչչիտչի վրայ խօսեր էր:
Օրսոյ ամիշած՝ վախով մը կը նայէր քրո-
ջը վրայ. ետքը ոտքի վրայ ելլելով,

— Աղաւնի, ըսաւ, վախեմ թէ դու
սատանայ մըն ես կնոջ կերպարանք ա-
ռած. բայց հոգ մի ըներ. թէ որ ես
չկարենամ կախել տալ Պարրիչինինե-
րը, ուրիշ կերպով մը կը հոգամ դիրենք:

— Որչափ շուտ ըլլայ՝ այնչափ աղէկ է, պատասխանեց Սղաւնի հառաչելով։ Ո՞ր ձին կը հեծնաս վաղը, Օրս՝ Մնատն։

— Մեր։ Ինչո՞ւ կը հարցընես։

— Որպէս զի դարի կերցընեմ։

Օրսոյ իր սենեակը քաշուեցաւ. Սղաւնի պառկելու խրկեց զՍամերիա ու հովիւները, և մինակ մնաց խոհանոցին մէջ, ուր կը պատրաստէր պրոշչիոն։ Մերթ ընդ մերթ ականջ կը դնէր և կը սպասէր անհամբերութեամբ որ եղբայրը պառկի։ Երբոր յուսաց որ քուն եղած կ'ըլլայ, դանակ մը առաւ ձեռքը, փորձեց նայեցաւ սուր ըլլալը, և զգուշութեամբ մը պարտէզն ելաւ, ուր ցանկապատ, տեղւոյ մը մէջ դրած էին ձիերը. որովհետև Գորսիգայի ձիերը ախոռը չեն դրուիր, սովորաբար դաշտի մէջ կը թողուն ձիերը, ուր պէտք է իրենց սնունդը դանան և ցրտէն ու անձրևէն պաշտպանուին։ Սղաւնի նոյնպիսի ըզգուշութեամբ ցանկապատ տեղը մը առաւ, և մեղմ ձայնով մը սուլածին պէս՝ ձիերը քովը ժողվուեցան, որոնց ստէպ հաց ու աղ կը տանէր։ Երբոր սև ձին քովը մօտեցաւ, ուժով մը բաշէն բրու-

նեց և ականջը դանակովը ճղքեց : Կեն-
դանին սասաիկ մը ցատքեց ու փախաւ՝
սուր ձայնով մը պոռալով : Աղաւնի սիր-
տը դո՛հ երբոր պարտէզը կը դառնար,
Օրսոյ բացաւ պատուհանն ու Ո՞վ է ան
պոռաց : Աղաւնի լսեց որ Օրսոյ կը լե-
ցընէր հրացանը . բարեբաղդարար պար-
տիզին դուռը մութէն ծածկուած էր :
Քիչ ատենէն եղբորը սենեակը լոյս տե-
սաւ . մէկէն ցանկին դուռը գոցեց , և
պատերուն քովէն քալելով , որպէս զի
զգեստը ծառերուն մութ տերևներուն
հետ խառնուելով՝ շտեմնուի , Օրսոյէն
առաջ կրցաւ խոհանոցը հասնիլ :

— Ի՞նչ կայ , հարցուց Աղաւնի :

— Ինձի երևցաւ , պատասխանեց Օր-
սոյ , որ պարտիզին դուռը կը բանան :

— Անկարելի բան է . շունը հաճած
կ'ըլլար : Բայց թէ որ կ'ուզես նէ , եր-
թանք տեսնենք :

Օրսոյ շրջան մը ըրաւ պարտիզին մէջ ,
և տեսնելով որ արտաքին դուռն աղէկ
գոցուած է , քիչ մը ամօթով մնաց ու
սկսաւ դէպ 'ի սենեակն երթալ :

— Ուրախ եմ , ըսաւ Աղաւնի , որ կը
խոհեմնաս , ինչպէս որ վիճակդ կը պա-
հանջէ :

— Դու զիս կը կատարելագործես ,
պատասխանեց Օրսոյ : Գիշեր բարի :

Առաւօտն արշալուսոյն Օրսոյ ոտ-
քի վրայ էր՝ պատրաստ ճամբայ ել-
լելու . և աճապարելով սուրճ խմելու
միջոցը՝ հովիւ մը դնաց թամբելու սև
ձին : Այդ մարդը չկրցաւ սանձ դնել
կենդանւոյն բերնին , որովհետև գիշե-
րուան վէրքին ցաւը կրելով ու միւս ա-
կանջին համար վախնալով՝ ձին վեր կը
ցատքէր , կիցեր կը զարնէր , կը խխրն-
ջար , միով բանիւ՝ ըրածը չէր մնար :

— Քեզ տեսնամ՝ շուտ ըրէ , աղաղա-
կեց Օրսոյ :

— Ա՛հ , Օրսո՛ Անտոն , ա՛հ , Օրսո՛ Ան-
տոն , պոռայ հովիւք :

— Ի՞նչ կայ , հարցուց Աղաւնի :

Ամենքը ձիուն քով մօտեցան , և ա-
նոր ճղքած ալանջը տեսնելով՝ բարկու-
թիւննէն միաբերան պոռացին : Գիտ-
նալու է որ Գորսիգացւոց մէջ թշնա-
մւոյն ձին վիրաւորելը՝ վրէժխնդրութիւն
և մահուան սպառնալիք է . և կ'ըսեն
թէ հրացանի հարուած մը միայն կըր-
նայ այդ յանցանքը սրբել : Թէպէտ Օր-
սոյ ուրիշներէ աւելի նուազ կը զգար

այդ նախատիւքը՝ երկար ատեն ցամաք
երկիր սպրած ըլլալով, սակայն թէ որ
այդ վայրկենին Պարրիչիւններուն կողմէն
մէն մէկը դիմացն ելած ըլլար, հաւա-
նական էր որ մէկէն վրէժը առնէր: —
Վատ անզգամներ, ըսաւ Օրսոյ. խեղճ
կենդանիէն վրէժնին կ'առնեն, և չեն
համարձակիր դիմացս ելլելու:

— Ի՞նչ բանի կը սպասենք, պոռաց
Սղաւնի սաստկութեամբ. կու գան ա-
տոնք գրգռելու զմեզ, ձիերնիս վիրա-
ւորելու, և մենք անշարժ պիտի կենանք:
Մարդիկ էք դուք:

— Վրէժխնդրութիւն, պատասխա-
նեցին հովիւները: Ձին դեղին մէջ պը-
տրացընենք, և տուներնուն վրայ յար-
ձակինք:

— Իրենց աշտարակին մօտ յարդնոց
մը կայ, ըսաւ Բօլոյ կրիֆֆոյ. մէկէն
բռնակցընել կու տամ ես անիկայ: —
Ուրիշ մը կ'ուզէր երթալ եկեղեցւոյն
զանգակատան սանդուխը բերել. եր-
րորդ մըն ալ կ'ըսէր, գերանով մը՝ որ
հրապարակին վրայ կը գտնուէր, Պար-
րիչիւններուն դուռը կոտորել: Ան միջո-
ցին Սղաւնի ըսաւ իր արբանեկաց որ

դործի ձեռք զարնելէ առաջ՝ ամենուն
մէյակէկ մեծ դաւաթով անխտոնախառն
ըմպելիք պիտի տար :

Մակայն ինչ տպաւորութիւն որ յու-
սացած էր Աղաւնի որ այդ դէպքն ընէր
Օրսոյի վրայ, չտեսնուեցաւ վրան . որով-
հետեւ վատ և ցած վրէժխնդրութիւն մը
սեպելով՝ սկսաւ արհամարհել իր թըշ-
նամիքը, և կ'ըսէր մտքէն թէ այդպիսի
անձինք արժանի չեն իրեն հետ կռուե-
լու : Երբոր հովիւներուն ձայնը քիչ մը
ցածցաւ, իմացուց Օրսոյ անոնց որ ի-
րենց դիտաւորութիւննին մէկդի ձգեն,
և թէ արդարութիւնն իր ձիուն ական-
ջին վրէժը պիտի առնէր : — Ես եմ հոս
տէրը, խստութեամբ մը վրայ բերաւ,
և կ'ուզեմ որ հնազանդիք ինծի : Ով որ
դեռ խօսք կը բանայ սպաննելու կամ այ-
րելու, ես կը սպաննեմ զանիկայ : Թամ
բեցէք մոխրագոյն ձին :

— Ի՞նչ, ըսաւ Աղաւնի Օրսոյի՝ մէկդի
քաշելով զինքը, այդպէս թող կու տաս
որ նախատեն զմեզ : Հօրերնուս կենդա-
նութեան ատեն՝ Պարրիչինիները բը-
նաւ չէին կրնար համարձակիլ մեր կեն-
դանիները վիրաւորելու :

— Ես քեզի խօսք կու տամ որ պիտի
զղջան . բայց զինուորաց և բանտապա-
նաց կ'իյնայ պատժել անանկ վատ մար-
դիկն որ կենդանեաց վրայ միայն եր-
թալու կը համարձակին : Ըսի արդէն
քեզի , արդարութիւնը պիտի վրէժս
առնէ անոնցմէ . . . ապա թէ ոչ . . . կը
ցուցրնեմ քեզի թէ որո՞ւ որդին եմ :

— Համբերութիւն , զուրցեց Աղաւնի
հառաչանօր :

— Աղէկ զիտնաս , քոյր իմ , շարու-
նակեց Օրսոյ , որ եթէ 'ի դարձիս իմա-
նամ որ Պարրիչինիներուն դէմ բան մը
ըլլուեր է , ոչ երբէք կը ներեմ քեզի :

— Ետքը աւելի անոյշ ձայնով մը ըսաւ .
Եստ հաւանական է որ հազարա-
պեան ու աղջիկը հետս կը բերեմ հոս .
նայէ որ իրենց սենեակները կարգի
դրուին , նախաձաշն աղէկ ըլլայ , միով
բանիւ հիւրերնիս շատ դէշ բնակարան
մը չգտնեն տուներնիս : Ե՛կ համբոյր մը
տուր . քեզ տեսնամ հանդարտ կենաս .
ահա մոխրագոյն ձին պատրաստ է :

— Օրսոյ , ըսաւ Աղաւնի , թող չեմ
տար որ մինակ երթաս :

— Մարդու պէտք չունիմ , պատաս-

խանեց Օրսոյ, և ապահով եղիր որ թող
չեմ տար որ աղանջս կտրեն:

— Ո՛հ, անկարելի է որ պատերազ-
մի միջոց թողում որ առանձին եր-
թաս: Է՛ Բոլոյ կրիֆֆոյ, ճիան Ֆրան-
սէ, Մէմմոյ, հրացաննիդ առէք. եղբորս
ընկերութիւն պիտի ընէք:

Քիչ մը ատեն հակառակելէ ետքը,
Օրսոյ զիջաւ Աղաւնիի, և հովիւներէն
զանոնք ընտրեց՝ որոնք ամենէն աւելի
պոռայեր էին Պարրիչինիներուն վրայ
յարձըկելու. ետքը սուած պատուէր-
ները նորէն կրկնելով քրոջն ու մնա-
ցող հովիւներուն, ճամբայ ելաւ, և խո-
տոր ընթացք մը բռնեց՝ Պարրիչինինե-
րուն տանն առջևէն չանցնելու համար:

Բիէդրաներայէն ելան և արագու-
թեամբ ձիերնին կը վազցընէին. երբոր
գետակ մը հասան, ծերունի Բոլոյ կրիֆ-
ֆոն շատ մը խողեր տեսաւ, որոնք տըղ-
մին մէջ թաւալեր էին և կը վայլէին
արևն ու ջրին զովութիւնը: Մէկէն նը-
շան առաւ ամենէն դէր խողին, և հրա-
ցանը պարպածին պէս՝ սպաննեց զա-
նիկայ: Կենդանւոյն ընկերքն անմիջա-
պէս կայծակի պէս երագութեամբ փա-

խան, և թէպէտ միւս հովիւն ալ հրա-
ցան պարպեց վրանին, բայց անոնք ան-
մաս ազատեցան անատի մը մէջ:

— Ողորմելի մարդիկ, դուրցեց Օր-
սոյ. խողերը վարազ կը կարծէք:

— Չէ, Օրս' Անտոն, պատասխանեց
Բօլոյ կրիֆֆոյ, անանկ չէ, հապա այդ
խողերը փաստարանինն են, ձիուն ա-
կընջին փոխարէնն ըրինք:

— Չեզի պէս անզգամներ, աղաղա-
կեց Օրսոյ բարկութենէն կրակ կը տ-
րած, դուք ալ մեր թշնամեաց ըրած
ցածութեանը կը նմանիք: Գայէք քո-
վէս. ձեզի պէտք չունիմ. դուք խողե-
րուն հետ կռուելու կարիճ էք: Կ'եր-
դուրննամ որ եթէ յանդրդնիք հետս
գալու, գլուխնիդ կը ջախջախեմ:

Երկու հովիւները պաղ մնացին ու
իրարու կը նայէին: Օրսոյ ոտքին մըտ-
րակներովը ձիուն փորին զարկաւ, և
աներևոյթ եղաւ:

— Տեսա՞ր հիմա, ըսաւ Բօլոյ կրիֆֆոյ՝
ընկերոջը. եկու՛ր սիրէ աս մարդիկներն
որ այս կերպով կը վարուին հետդ: Ա-
տոր հայրը, հազարապետը, սրդողեցաւ
քեզի՝ անգամ մը փաստարանին վրայ

հրացան շտկելուդ համար . . . անխելք
եղար որ չպարպեցիր : . . . Իսկ որդին . . .
տեսար ինչ ըրի իրեն համար . . . կը
սպառնայ գլուխս ջախջախել, ինչպէս որ
կը ջախջախեն դդումէ անօթ մը որ ալ
մէջը գինի չկրնար պահել : Մհա ասանկ
բաներ կը սորվին ցամաք երկիր, Մէմ
մոյ :

— Մնանկ է. և թէ որ խմացուի որ
դու սպաններ ես այդ խողը, դատաս-
տան կը բանան վրադ, և Օրս' Մնտոն
չուղենար պաշտպանել զքեզ դատա-
ւորաց առջին, և փաստաբանին ստակ
տալ : Բարեբաղդաբար մարդ չտեսաւ
զքեզ, և սրբուհի Նէկա վտանգէն խա-
լըսեց զքեզ :

Քիչ մը ատեն մտածելէն ետքը, եր-
կու հովիւներն որոշեցին որ ամենէն ա-
ւելի խոհեմ ճամբան խողը փոսի մը
մէջ նետելն էր. ինչպէս որ ըրին. բայց
խրաքանչիւրը մէյմէկ մեծ կտոր մէկդի
դնելով խեղճ խողին մտէն, որ տէլլա
Ռէպպիաներուն և Պարրիչինիներուն ա-
տելութեանը զոհ եղեր էր :

ԺԷ

Իր անհրահանգ ընկերներէն խալը-
սելէն ետքը, Օրսոյ ճամբան կը շարու-
նակէր, աւելի բարեկամները գտնալուն
ուրախութեանը վրայ մտածելով, քան
թէ թշնամիներն իր առջևը գտնալու
վախէն պաշարուած: — Պիտի բռնա-
դատուիմ ան դատաստանին համար որ
այդ ցածազգի Պարրիչինիններուն դէմ
պիտի բանամ, կ'ըսէր մտքէն, Պասդիա
երթալու: Աս առթով Նէվիլ օրիորդին
ընկերութիւն կ'ընեմ դէպ 'ի հոն եր-
թալու, անկէց ալ կրնանք մէկտեղ Օ-
րէցցայի ջրերուն երթալու: Յանկարծ
մանկութեան յիշատակները միտքն ե-
կան ու յիշեց այն նկարակերտ տեղը,
մտքով ինքզինքը կանաչազարդ մար-
դագետնին մէջ գտաւ՝ ծեր շաղանակի
ծառերու քով: Դալար խոտին վրայ, ուր
սիւսած կապոյտ ծաղկրները կարծես
թէ աչքեր էին որ իրեն կը նայէին, կը
տեսնէր զլիւղիա իր քովը նստած, և
մէկտեղ մտերմաբար կը խօսէին: Այս-
պիսի քաղցր մտածութիւններ մտքին

մէջ յեղ յեղելով, ուշադրութիւն չէր ընէր քաղած ճամբուն: Մէյ մ'ալ յանկարծ ձին կանկ առաւ. որովհետև պրպտի Քիլիման դիմացն առեր էր ու սանձէն բռներ:

— Ո՛ւր կ'երթաս, Օրս' Անտոն, ըսաւ աղջիկը. չե՞ս դիտեր որ թշնամիդ հոս մօտիկ է:

— Թշնամիս, աղաղակեց Օրսոյ բարկութեամբ թօթափելով իր ախորժեղի երևակայութիւնները. ո՛ւր է:

— Հոս մօտ է Օռլանտուչիոյ. քեզիկը սպասէ: Ետ դարձիր, ետ դարձիր:

— Կը սպասէ ինձի. տեսա՞ր դինքը:

— Այո, Օրս' Անտոն. ես թուփերուն մէջ պառկեր էի՝ երբոր ինքը անցաւ. չորս դին կը նայէր դիտակով:

— Ո՛ր կողմէն կ'երթար:

— Հոնտեղէն վար կ'իջնար դէպ 'ի այն կողմն ուր դու կ'երթաս:

— Շատ աղէկ. շնորհակալ եմ:

— Օրս' Անտոն, չե՞ս սպասեր հօրեղբորս. քիչ ատենէն կը հասնի, և ան ատեն սպահով կ'ըլլաս:

— Մի վախեր, Քիլիմա. ես պէտք չունիմ հօրեղբորդ:

— Թէ որ կ'ուզես, առջևէդ երթամ:

— Պէտք չէ:

Եւ մտրակելով ձին, աղջրկան ըսած կողմը դնաց:

Մկզբան բարկութեամբ աչքը դարձած՝ ըսեր էր մտքէն թէ ձեռքէ չփախցրնէ սա առիթն Օսլանտուչչիոյի ցածութիւնը պատժելու, որ կերած ապտակին վրէժն առնելու համար՝ ձիումը ականջը ճղքեր էր: Ետքը քաղաքապետին տուած խոստմունքը, մանաւանդ Նէվիլ օրիորդը չտեսնելու վախը միտքը փոխեցին և գրեթէ կը փափաքէր որ չպատահի Օսլանտուչչիոյի: Յետոյ իր հօրն յիշատակը, ձիուն եղած նախատինքն, և իր թշնամեաց սպառնալիքը նորէն բորբոքեցին բարկութիւնը, անանկ որ կ'ուզէր գտնել թշնամին, գրգռել զանիկայ ու մենամարտիլ հետը: Այսպէս իրարու հակառակ դիտաւորութիւններով տաղնապած, առաջ կ'երթար, բայց խոհեմութեամբ, աղէկ դննելով թուփերն ու ցանկապատ տեղուանքը, երբեմն ալ կանկ առնելով՝ այն տարտամ ձայներուն ականջ դնելու համար, որ դաշտորէից մէջ կը լսուին: Քիչինայէն

բաժնուներէն տասը վայրկեան վերջը (առաւօտեան ժամը ինն էր), սաստիկ դարու վար բլուր մը հասաւ : Ան նեղ ճամբան ուսկից կ'անցնէր՝ նոր այրած անտառի մը մէջէն կ'անցնէր : Գեանին վրայ առատ մոխիր սփռած էր, և սադիս անդին քանի մը թուփեր ու քանի մը հաստ ծառեր թէպէտ կրակէն սեղեր ու բոլորովին տերևաթափ էին՝ առանց կենդանութեան հետքի մը, ոտքի վրայ էին : Այրած անտառ մը որ կը տեսնայ մարդ, հիւսիսային աշխարհ մը փոխադրած կը կարծէ ինքզինքը ձմեռնային եղանակով, և կրակին լափած տեղեաց ցամաք մերկութիւնը շրջակայից ակնախափող կանաչութեան հետ խառնուելով՝ աւելի տխուր ու անապատ կ'երևցնէ զանոնք : Բայց այս լերկութիւնն անախորժ չէր Օրսոյի աս միջոցիս . որովհետև բաց տեղւոյ մէջ թըշնամիքը չէին կրնար դարան դնել իրեն : Այրած վաքիէն ետքը կու գային շատ մը մշակուած արտեր, որոնց շրջապատը, ըստ սովորութեան երկրին, քարե պատեր քաշած են՝ քիչ մը բարձր : Ճամբան այս պատերուն մէջէն կ'անց-

նէր, ուր ասդիս անդին տնկուած շա-
ղանակի ծառերը՝ հեռուանց խիտ ան-
տառ մը ձևացուցած կ'երևային :

Օրսոյ ստիպուելով դարու վար տե-
ղոյն վրայ ձիէն վար իջնալու, սանձը
ձիուն վզին վրայ թողուց, և արագու-
թեամբ վար կ'իջնար մոխրին վրայէն
քալելով. երբոր քսանըհինգ քայլի հե-
ռաւորութեամբ մօտեցաւ քարաշէն պա-
տի մը, որ ճամբուն աջ կողմն էր, ճիշդ
իր դիմացը տեսաւ նախ հրացանի մը
ծայրը, ետքը գլուխ մը պատէն վեր
բարձրացած : Հրացանը քիչ մը վար
առնուածին պէս, Օրսոյ ճանչցաւ զՕռ-
լանատուչիոյ որ հրացանը պարպելու վը-
րայ էր, մէկէն ինքն ալ իր հրացանը
շտկեց. երկուքը իրարու վրայ նշան ա-
ռած ատեննին քանի մը մանրերկրորդ
իրարու նայեցան այնպիսի ներքին այ-
լայլութեամբ մը, որ ամենէն կտրիճ
մարդը կը զգայ սպաննելու կամ սպան-
նուելու միջոցը :

— Վատ, ցածազգի, պոռայ Օրսոյ . . .
Դեռ խօսքը բերանն էր, Օռլանատուչիոյի
հրացանին լոյսը տեսաւ, և գրեթէ նոյն
մանրերկրորդին ուրիշ հրացան մըն ալ

պարպուեցաւ իր վրայ՝ ճամբուն մէկալ
կողմէն . Օրսոյ չէր տեսած զասիկայ
պարպողը , որ ուրիշ պատի մը ետև դա-
րանած էր : Օւլանտուչչիոյի գնատկը
ձախ թեր մտաւ ծակեց . երկրորդը
կուրծքին եկաւ , զգեստը պատուեց ,
բայց բարեբաղդաբար դանակին պող-
պատին հանդիպելով՝ տափկեցաւ վրան
ու թեթև նեղութիւն մը պատճառեց :
Օրսոյի ձախ թեր ազդերը վրայ ինկաւ
անշարժ , և հրացանին եղէզը վար ծուե-
ցաւ քիչ մը ատեն . բայց մէկէն վեր ա-
ռաւ զանիկայ , և աջ ձեռքովը միայն
զէնքն ուղղելով՝ պարպեց Օւլանտուչ-
չիոյի վրայ : Թշնամւոյն դէմքը , որուն
հազիւ հազ աչուրները կը տեսներ , պա-
տին ետին աներևութացաւ : Օրսոյ ձախ
կողմը դառնալով՝ երկրորդ հարուածը
պարպեց միւսին վրայ , որ ծուխով պա-
տած ըլլալով՝ հազիւ հազ կը տեսնուէր :
Ս,յն անձն ալ աներևութացաւ : Ս,յս
հրացանի չորս հարուածներն անհաւա-
տալի երազութեամբ իրարու յաջորդեր
էին . և ոչ իսկ կիրթ զինուորք կարգաւ
հրացան պարպած ատեննին՝ ասկէց
շուտ կը նետեն : Օրսոյի վերջին հարուա-

ծէն ետքը՝ լռութիւնը տիրեց : Իր զէն,
քէն ելած ծուխը ծանր ծանր դէպ 'ի
երկինք կը վերանար . պատին ետին
շարժմունք չէր տեսնուեր , և ոչ թեթև
ձայն մը կը լսուէր : Թէ որ թևին ցաւը
չըլլար , կրնար կարծել որ այն մարդիկն
որոնց վրայ պարպեր էր դէնքը , իր ե-
րևակայութեան ճնունդն էին :

Օրսոյ սեպելով որ երկրորդ անգամ
մ'ալ կը պարպուին հրացանները , քա-
նի մը քայլ առաւ ու կրակէն մնացած
ծառի մը ետեր քաշուեցաւ : Հոն ծըն-
կուրներուն մէջ անցուց հրացանը , ու
աճապարելով լեցուց զան : Սակայն ձախ
թևին վէրքը սաստիկ կը ցաւէր , անանկ
որ կարծես թէ ծանր բեռ մը կը վեր-
ցընէր : Կը մտածէր թէ ինչ եղեր էին
իր հակառակորդքը . թէ որ փախած
էին , թէ որ վիրաւորուած էին , տերև-
ներու ձայն մը՝ շարժմունք մը անտա-
րակոյս լսած կ'ըլլար : Մեռեր էին ար-
դեօք . կամ մանաւանդ թէ՛ պատին ե-
տեն ամրացած , չէին սպասեր առթին
որ նորէն զէնքերնին իրեն վրայ պար-
պեն : Այսպիսի երկբայութեամբ պա-
շարած , և տեսնելով որ ոյժը կը նուա-

դի, աջ ծունկը գետին դրաւ, վիրաւո-
րած թեր միւս ծունկին կռթընցուց, և ա-
պաւինած ծառին մէկ ճիւղին վրայ հաս-
տատեց հրացանը: Մատուրները դայլա-
խազին երկաթին անցուցած, աչքը պա-
տին վրայ սևեռած, ականջը տնկած ո՛ր և
իցէ ձայն մտիկ ընելու, քանի մը վայր-
կեան անշարժ կեցաւ, որ դար մը ե-
րեցաւ իրեն: Վերջապէս իրեն ետևի
կողմէն հեռաւոր ձայն մը լսուեցաւ, և
քիչ ետքը շուն մը նետի երազութեամբ
բլրէն վար իջնալով, իր քովը կանկ ա-
ռաւ ու պոչը կը շարժէր. Պրուսդոյ էր,
աւազակներուն աշակերտն ու ընկերը,
որ իր տիրոջ գալուստը կ'իմացընէր.
Օրսոյ անհամբերութեամբ սպասեց ա-
նոր: Շունը քիթը վեր տնկած անհան-
դարտութեամբ կը հոտուրտար՝ մտաա-
ւոր պատին կողմը դարձած. մէյ մ'ալ
յանկարծ խորունկ ձայնով մը փակվըն-
կաց, ցատքեց անցաւ պատը, և անմի-
ջապէս ետքը պատին վրայ տեսնուե-
ցաւ, ուսկից անշարժ աչքով կը նայէր
Օրսոյի վրայ, զարմանք ցուցընելով՝ որ-
չափ որ շուն մը կրնայ զարմանք ցուցը-
նել. ետքը նորէն քիթը վեր տնկեց,

բայց այս անգամ միւս պատին ուղղու-
թեամբ, և անոր վրայէն ալ ցատքեց :
Մանրերկրորդէ մը ետքը՝ ան պատին
վրայ ալ ելաւ, առջինին պէս դարման-
քով ու անհանդարտութեամբ. ետքը
անտառին մէջ նետուեցաւ, պոչը ոտքե-
րուն մէջ առած, միշտ Օրսոյի նայելով,
և կամաց կամաց քովընտի հեռանա-
լով, ինչուան որ քիչ մը տեղ հեռացաւ
անկէ : Ան ատեն նորէն սկսաւ վազել,
և առաջին երագութեամբ բլրէն վեր ել-
լելով՝ ընդ առաջ վազեց մէկու մը, որ
շուտ շուտ առաջ կու դար :

— Հասիր քովս, Պրանտոյ, աղաղա-
կեց Օրսոյ՝ երբոր յուսաց որ ձայնը կը
հասնի :

— Ո՛հ, Օրս՝ Անտոն, վիրաւորուեր
ես, հարցուց Պրանտոլաչչիոյ շունչը հա-
տած հասնելով : Ո՛ր կողմդ է վերքը :

— Թեւ :

— Թեղ. բան չէ : Իսկ թշնամիդ :

— Կարծեմ անդին խրկեցի :

Պրանտոլաչչիոյ իր շան ետեւէն եր-
թալով, մօտի պատին դնաց, և ծռելով
մէկալ կողմը նայեցաւ : Եւ դիտարկը
հանելով գլխէն,

— Բարև՛, ըսաւ, Պ. Օսլանտուչչիոյ :
Ետքը Օրսոյի դառնալով, ծանր կերպով մը ըսաւ. — Ահա ասանկ կ'ըլլայ մէկուն բանը բուսցընելը :

— Կ'ապրի դեռ, հարցուց Օրսոյ՝ հաղիւ հազ շունչ առնելով :

— Չէ չէ, դնտակիդ ցաւը թող չէ տուած : Վայ թշուառութեանս, ան ինչ ծակ. աղէկ հրացան. դիւրաւ մարդու ըղեղը կը փշրէ : Գիտե՞ս, Օրս՝ Անտոն, երբոր լսեցի՝ թի՛ֆ թի՛ֆ, ըսի ինքիւրենս, Մեղք, Օրսոյի բանը կը լմընցընեն. բայց ետքը երբոր լսեցի՝ պո՛՛ւն պո՛՛ւն, անդդիացի հրացանն է որ կը խօսի, ըսի : . . . Ի՞նչ է, Պրուսդոյ, ի՞նչ կ'ուզես ինձմէ :

Շունը միւս պատը տարաւ դիմքը. Պրանտուչչիոյ ամիշած՝ Աս ինչ բան է, աղաղակեց, կրկին հարուած. կը տեսնուի որ վառօղը սուղ է, որովհետեւ աղէկ խնայութեամբ կը դործածես դայն :

— Հոգիդ սիրես՝ ի՞նչ եղեր է, հարցուց Օրսոյ :

— Ա՛լ մի ձևացընելը. դու որտեղդ դետին կը ձգես, և կ'ուզես որ ուրիշները ժողովեն : . . . Պարբիչինի փաստաբանին ժառանգութիւնը հիմա որուն պիտի անցնի :

— Ի՞նչ , վիճակներու ակ մեռեր է :

— Անանկ մեռեր է որ ալ չկրնար
լլալ : Մեր գլուխը ողջ մնայ : Եկուր տես
վիճակներուն , դեռ ծնկան վրայ է՝ գլու-
խը պատին կռթընցուցած : կարծես թէ
կը քնանայ , կրնայ կապարեայ քունը
սուիլ , խեղճ տղայ :

Օրսոյ սուկումով գլուխը մէկդի դար-
ձուց . — Ապահով ես որ մեռեր է :

— Դու Մանրիէրոյ Գորսոյի նման ես ,
որ մէկ հարուածէն աւելի չէր նեւեր :
Կրկին հարուած . ասկէ ետքը իմ բանս
չէ հրացան պարպելը . երկու հոգի եր-
կու հարուածով . երկու եղբարք : . . . Թէ
որ երրորդ հարուած մըն ալ նետած ըլ-
լայիր , հայրերնին կը սպաննէիր . . . բայց
ինչ և իցէ , անիկայ ուրիշ ատենուան
կրնայ մնալ . . . Ի՞նչ հարուած , Օրս՝ Ան-
տան . . . և ինձի պէս մարդը այսչափ ա-
տեն է որ չկրնար կրկին հարուած իջե-
ցընել պահպանութեան զինուորաց զը-
լուխը :

— Աւաղակը խօսելու միջոցը՝ միանգա-
մայն Օրսոյի բազուկը կը զննէր և դանա-
կովն անոր զգեստին թեր կը ճղքէր :

— Բան չկայ , ըսաւ : . . . Ան ի՞նչ է որ

կը տեսնամ. կուրծքիդ վրայ զգեստդ պատուած է . . . զնտանկ մը անցեր է հոն . չէ չէ, ապա թէ ոչ ասանկ ուժով չէիր ըլլար : . . . Պէտք է որ թաշկինակդ և փողպատդ առնեմ . . . նայէ զգեստդ փրճացեր է . . . ինչո՞ւ համար ասանկ աղուոր հագուեր ես . հարսնիքի կ'երթայիր : . . . Ա՛ռ կտոր մը գինի խմէ . ինչո՞ւ դդու՞մէ ամանը հետդ չեա առներ . ո՞ր Գորսիգացին առանց ատ ամանին տունէն դուրս կ'ելլէ : — Ետքը թեր պատելու միջոցը, յանկարծ կ'ըսէր . կրկին հարուած . երկո՞ւքն ալ մէկէն մեռած . . . իմ ժողովրդապետս շատ պիտի խընտայ . . . կրկին հարուած : . . . Ինչ և ինչ, վերջապէս մեր պզտի կրիան՝ Բիլինան եկաւ :

Օրսոյ պատասխան չէր տար, մեռելի պէս գունատ էր ու սաստիկ կը դողար :

— Բիլի, պուռաց Պրանտուլաչչիոյ, զնա՛ սա պատին ետին նայէ : Աղջիկը ձեռքով ոտքով աշխատելով՝ ելաւ պատին վրայ, և Յուլանտուլաչչիոյի դիակը տեսածին պէս՝ երեսը խաչ հանեց :

— Աս բան չէ, ըսաւ աւազակը, զնա՛ սա կողմն ալ նայէ :

Աղջիկը նորէն խաչակներեց ինքզինքը :

— Դ՞ու ըրիր առ բաները, հօրեղբայրս, հարցուց վախով մը :

— Ե՛ս. ալ ես բանի չեմ գար ասկէ ետքը : Քիլի, Օրսոյի գործն են ատոնք. ուրախակցութիւնդ ըրէ իրեն :

— Աղաւնի շատ պիտի ուրախանայ, ըսաւ Քիլինա. բայց վիրաւորուելուդ վրայ պիտի ցաւի, Օրս՛ Անտոն :

— Ահաւասիկ, Օրս՛ Անտոն, վէրքդ պատեցի, զուրցեց աւազակը. Քիլինա ալ ձիդ գտաւ բռնեց : Հեծիր վրան ու հետս եկուր Մդաղցոնայի անտառը. նայինք մարդ կը յանդգնի գալու դրանալու գրեզ հոն : Մեր ձեռքէն եկածին չափ աղէկ կը նայինք գրեզ : Երբոր Սըրբուհւոյն Քրիստինեայ խաչը հասնինք, պէտք է որ ձիերէն վար իջնանք : Ձիդ Քիլինայի կու տաս, որ կ'երթայ Աղաւնիի իմաց կու տայ. հիմա ճամբուն վրայ յանձնարարութիւններդ կ'ընես իրեն : Ամեն բան կրնաս ըսել իրեն, Օրս՛ Անտոն. աւելի յանձն կ'առնէ կտոր կտոր ըլլալ քան թէ մատնել իր բարեկամները :

— Ո՛ւր կ'ուզես երթամ, Պրանատոյ, հարցուց Օրսոյ մարած ձայնով :

— Ի՞նչ ձեռքդ է ընտրելը . կամ բանա
կամ անտառը : Բայց տէլլա Ռէպպիա,
ներուն ցեղին մարդիկը բանտին ճամ-
բան չեն դիտեր . ուստի մաքին եր-
թանք , Օրս' Մնտոն :

— Օ՛ղը ելան ուրեմն խմ ամեն յոյ-
սերս , զուրցեց ցաւագին սրտիւ վիրա-
ւորեալը :

— Յոյսերդ . դեռ ի՞նչ կ'ուզէիր ընել
երկու հարուածով հրացանով մը : . . .
Նայէ՛ նայէ՛ , ի՞նչպէս ալ վիրաւորեր են
զքեզ : Այդ երիտասարդները կ'երեւայ
որ կատուներէն աւելի ամուր են եղեր
մեռներու :

— Իրենք առաջ պարպեցին , ըսաւ
Օրսոյ :

— Իրաւ անանկ է , մտցայ . . . թի՛ֆ ,
թի՛ֆ . պո՛շմ , պո՛շմ . կրկին հարուած
մէկ ձեռքով : . . . Թէ որ ասկէց ադէկ
կրնայ նետուիլ նէ , ես ինքզինքս կը կա-
խեմ : . . . Վերջապէս հեծար . . . երթա-
լէդ առաջ մէյ մը ըրածիդ վրայ նայէ .
քաղաքավարութեան դէմ է առանց
բարե տալու ընկերութենէդ բաժնուիլ :

Օրսոյ մտրակեց ձին . որովհետեւ ան-
հնարին էր որ կարենար տեսնել այն
խեղճերն որոնց ինքը մահ տուեր էր :

— Օրս' Մնասն , կ'ուզեն որ շտկէ շիտակ խօսք մը ըսեմ քեզի , զուրցեց աւազակը՝ ձիուն սանձը ձեռք առնելով : Սա երկու խեղճերը կարեկցութիւնս կը շարժեն . . կ'աղաչեմ ներէ ինձի . . առնանկ գեղեցիկ . . անանկ ուժով . . անանկ երիտասարդ . . . սրչափ անգամ Օսլանտուչչիայի հետ մէկտեղ որսի ելեր եմ . . չորս օր հազիւ կայ որ սիկարի ծրար մը տուաւ ինձի . . . վինչէնդէլլոյ ալ միշտ զուարթ էր : . . . Իրաւ է որ զուրիշ բան չէիր կրնար ընել . . . և հարուածն ալ անանկ աղուոր է՝ որ ցաւիլ չըլլար . . . բայց ես վրէժ խնդրելու առիթ չունէի իրենցմէ : . . . Գիտեմ որ իրաւունք ունիս . երբոր մէկը թշնամի մը ունի՝ պէտք է մէջտեղէն վերցընէ : Սակայն Պարրիչինինները հին ցեղ են . և դժբաղդաբար սերունդնին պիտի կորսուի . . . և կրկին հարուածով մը . շատ նշանաւոր բան :

Ասանկ Պարրիչինիններուն դամբանաւ կանն ընելով Պրանտուլաչչիոյ , աճապարանօք դէպ'ի Սդացցոնայի անտառը կը սանկը զՕրայ , Բիլինան ու Պրուսգոյ շունը :

ԺԸ

Մակայն Աղաւնի Օրսոյի երթալէն
քիչ վերջը խմացեր էր լրտեսներէն որ
Պարրիչինները դուրս դացեր էին . ան
վայրկենէն խռովեցաւ, տան մէջ վեր վար
կը քալէր, մէյ մը խոհանոցը՝ մէյ մը
հիւրերուն համար պատրաստուած սե-
նեակները կ'երթար, առանց բան մը ը-
նելու . մերթ ընդ մերթ ալ կանկ կ'առ-
նէր նայելու թէ արդեօք անսովոր աղա-
ղակ մը կը ըսէ գեղին մէջ : Տասնըմէկին
ատենները ձիաւորներ մտան Բիէդրա-
նէրա . անգղիացի հազարապետն էր,
իր աղջիկը, ծառաներն ու առաջնորդ-
նին : Աղաւնիի առաջին խօսքն ան ե-
ղաւ՝ թէ Եղբայրս տեսա՞ք : Ետքը առաջ-
նորդին հարցուց ինչ ուղղութիւն բռն-
նելնին և թէ ո՞ր ժամուն ճամբայ ելեր
էին . և անոր պատասխաններէն խմա-
ցաւ որ պէտք էր իրարու հանդիպած
ըլլային :

— Թերևս եղբայրդ վերէն դացած
ըլլայ, ըսաւ առաջնորդը . մենք վարէն
եկանք :

Բայց Աղաւնի գլուխը շարժեց և հարց-
մունք հարցմունքի վրայ ըրաւ : Բնու-
թեամբ ինքզինքը բռնել դիտէր, մանա-
ւանդ որ չէր ալ ուզէր հիւրերուն գու-
շակել տալ իր վրդովմունքը . հանդերձ
այսու իր այլայլութիւնն յաղթեց, և
բռնադատուեցաւ հաղորդելու զայն հա-
զարապետին ու անոր աղջրկանը՝ պատ-
մելով հաշտութեան ընդունայն փորձն
որ շարագոյն վախճան ունեցեր էր : Նէ-
վիլ օրիորդը խռովեցաւ, և կ'ուզէր որ
ամեն կողմ մարդ դրկուի . հայրն ալ
կ'ուզէր նորէն ձի հեծնալ ու առաջնոր-
դին հետ երթալ Օրսոն փնտռելու :
Վերջապէս Աղաւնի մտածեց իր տան-
տիկնութեան պարտքն ընելու . ջանաց
որ ժպտի, վրայ տուաւ հազարապետին
որ սեղան նստի, և եղբօրն ու շանալուն
տեսակ տեսակ պատճառներ կը բերէր,
զորոնք ինքն իսկ ետքը հաւանական
չէր սեպեր : Հազարապետը մտածելով
որ իր պարտքն էր կանանց սիրտ տա-
լու, ասանկ մեկնեց Օրսոյի հեռաւորու-
թիւնը .

— Ես խօսք կու տամ որ տէլլա Ռէպ-
պիա ճամբան վայրի որսի հանդիպած

է. և անտարակոյս չկրնալով փորձու-
թեանն յաղթել, կը տեսնէք որ մախա-
ղը լեցուն պիտի դառնայ: Ճամբան չլսե-
ցի՞նք չորս հրացանի հարուած. երկու-
քը աւելի սաստիկ լսուեցան, և ես ան
ատեն դարձայ ըսի աղջիկանս. Գիտ-
նաս որ տէլլա Ռէպպիան որսի ելեր է.
Իմ հրացանս միայն ասանկ սաստիկ
ձայն կրնայ հանել:

Աղաւնիի դոյնը նետեց, և Լիւդիա՝
իմացաւ մէկէն ինչ կասկած ձգեցին օ-
րիորդին մտքին մէջ հաղարապետին
խօսքերը: Քանի մը վայրկեան լուսի-
նէ ետքը՝ Աղաւնի հարցուց թէ արդեօք
երկու սաստկաձայն հարուածները ա-
ռամջ նետուեր էին չէ նէ վերջը. բայց
ոչ հաղարապետը, ոչ իր աղջիկն և ոչ
առաջնորդը ուշադրութիւն ըրեր էին
այս էական կտորին:

Մինչև ժամը մէկ Աղաւնիի դրկած
մարդիկներէն մէկն ալ չդարձաւ. ան
ատեն իր բոլոր կտրըճութիւնը ձեռք
տուած՝ բռնադատեց հիւրերը կերա-
կրոյ նստելու. սակայն բայ՛ի հաղարա-
պետէն մէկաշնոնք չկրցան ուտել: Հրա-
պարակին մէջ պզտի ձայն մը լսուա-

ծին պէս՝ Աղաւնի պատուհանը կը վազէր, ետքը կու գար տրտում տխուր նորէն կը նստէր, և մեծագոյն տրտում թեամբ կը ջանար խօսակցելու իր հիւրոց հետ. աննշան խօսակցութիւն մը, որուն խօսողներն ու լսողները ուշադրութիւն չէին ըներ, և որ ստէպ կ'ընդհատէր երկայն լռութեամբ:

Յանկարծ ձիու մը վաղուածքի ձայնը լսուեցաւ: — Այս անտարակոյս եղբայրս է, ըսաւ Աղաւնի վեր ցատքելով. բայց երբոր տեսաւ Քիլինան Օրսոյի ձիուն վրայ հեծած, Եղբայրս մեռեր է՝ աղաղակեց կակծաղին ձայնիւ:

Հազարապետին ձեռքէն դաւաթը վար ինկաւ, Լիւդիա աղաղակեց, ամենքը դուռը վաղեցին: Դեռ Քիլինան ժամանակ չունեցած վար իջնալու, Աղաւնի վետրոյ մը պէս թևերուն մէջ առաւ դանիկայ ու խղղելու չափ կը սխմէր. աղջիկն իմացաւ ինչ կը հարցընէր Աղաւնիի ահաւոր նայուածքը, և առաջին խօսքն եղաւ՝ թէ Ռդջ է: Աղաւնի ան չսխմեց դանիկայ, և Քիլինա պղտի կատուի մը արագութեամբ դետին նետուեցաւ:

— Իսկ մէկալնո՞նք, հարցուց Աղաւնի խորին ձայնով:

Քիչինա ինքզինքը խաչակնքեց ցուցամատովն ու երրորդ մատովը: Մէկէն Աղաւնիի դէմքին մեռելատիպ տժգունութիւնը վառ կարմրութեան փոխուեցաւ, և մէյ մը Պարրիչիներուն տան վրայ կրակէ աչքեր տալէն վերջը, ժլպտելով ըսաւ հիւրերուն. — Ներս երթանք սուրճ խմելու:

Աւաղակաց Հիրիկը պատմելու շատ բան ունէր, զորոնք Աղաւնի խտալերէն կը թարգմանէր, Լիւդիա ալ անդդիարէն: Իրեք լսողներէն Աղաւնի միայն անձայն մտիկ կ'ընէր. բայց ձեռքի անձեռոցն անանկ կ'ողբէր՝ որ պատառ պատառ կ'ընէր: Հինգ վեց անգամ ընդհատեց աղջրկան պատմութիւնը՝ կրկին և կրկին լսելու համար թէ Պրանատլաչիոյ ըսած էր որ Օրսոյի վէրքը վտանգաւոր չէր և թէ անանկ վէրքեր շատ տեսեր էր: Քիչինա պատմութիւնը լմընցընելէն ետքը՝ զուրցեց որ Օրսոյ գրելու թուղթ կ'ուզէր, և կը յանձնէր քրոջը որ զուրցէ տունն եղած հիւր օրիորդի մը որ տունէն չերթայ՝ իրմէն նամակ

չառած : Այս խօսքին Աղաւնի ժպտեցաւ
և անդդիացի օրիորդին ձեռքը սխմեց :

— Այո, պէտք է հետս կենաս, ազ-
նիւ բարեկամութիւնս, զուրցեց Աղաւնի
համբուրելով զԼիւդիա, և պէտք է մե-
զի օգնես :

Ետքը գգրոց մը բացաւ, մէջէն հին
լաթեր հանեց և անոնցմէ փաթթելու
ու գղած լաթ կը պատրաստէր : Իր կրա-
կէ աչքերը, երեսին կենդանութիւնը և
մերթ զբաղեալ ու մերթ պաղարիւն
կերպը տեսնելով, չէր կրնար գուշա-
կուիլ թէ արդեօք աւելի եղբօրը վէրքին
վրայ վշտացած էր՝ թէ թշնամեաց մա-
հուանը վրայ ուրախացեր էր : Մէյ մը
խահուէ կը լեցրնէր հազարապետին և
կը պարծենար իր աղէկ շինելուն վրայ .
մէյ մը աշխատել կու տար Լիւդիոյ ու
Քիլինայի փաթթելու լաթ կարելու, և
միակերպ կը հարցրնէր թէ Օրսոյի վէր-
քը շատ ցաւ կու տա՞ր : Երբեմն երբեմն
աշխատելու միջոցը կ'ըսէր հազարապե-
տին . Երկու անանկ կտրի՞ճ, անանկ պա-
տերազմող անձինք . և ինքը մինակ,
վիրաւորուած, մէկ թևով միայն . . . եր-
կուքն ալ գետին փռեր է : Ի՛նչ կտրը

ճուժիւն, հաղարապետս . դիւցանոն չէ
Օրսոյ : Ա՛հ Լիւդիա, ինչպիսի երջան .
կուժիւն է խաղաղ երկրի մը մէջ բնա-
կիւր՝ ինչպէս է ձեր աշխարհը : . . . Ա-
պահով եմ որ դու դեռ չէիր ճանչ-
նար եղբայրս : . . . Բայց ես ըսեր էի . Բա-
ղէն թւերը պիտի տարածէ : . . . Դու ի-
րեն անուշ կերպէն խաբուած էիր : . . .
Խեղճ Օրսոյ :

Լիւդիա լուռ կեցեր էր . իսկ հայրը
կը հարցընէր թէ ինչո՞ւ համար դատա-
ւորաց բողոք չէր ըլլուէր . և կ'ուզէր ի-
մանալ թէ Պրանտոլաչչիոյի տունը շատ
հեռո՞ւ էր Բիէդրանէրայէ , որպէս զի եր-
թայ տեանէ իր բարեկամը : Աղաւնի իր
սովորական հանդարտ կերպովը պա-
տասխան տուաւ թէ Օրսոյ անտառն էր ,
աւաղակներուն մէկը զինքը կը հոգար ,
և թէ շատ վտանգաւոր էր իր մարդու
երևնալը՝ քանի որ դաւառապետին ու
դատաւորաց միտքն իմացուած չէր . և
ապահովցուց որ ծածուկ՝ ճարտար վի-
րաբոյժ մը կը դրկէ հիւանդին քովը :
Միայն միտքդ պահէ , պարոն հաղարա-
պետ , ըսաւ , որ հրացանի չորս հարուած-
ները լսեր էիր , և ինձի ըսիր ալ որ վեր-

Ղին պարպուր Օրայ էր : Հազարապե-
տը հասկըցաւ այս խօսքին վարպետու-
թիւնը :

Իրիկուն ըլլալու վրայ էր երբոր տը-
խուր թափօր մը մտաւ դեղին մէջ : Պար-
բիչինի վաստաբանին երկու աղոց դիակ-
ները կը բերէին , իւրաքանչիւրը ջորայ
մը վրայ խաչածն ձգուած : Յուզարկաւո-
րութեան ետեւէն կու գային բաղմու-
թիւն կողմնակցաց և պարապօրդներու .
անոնց հետ էին գիւղական պահպա-
նութեան գինուորները՝ որ միշտ ուշ կը
հասնին , և գեղապետի օղնականն որ
ձեռքերն երկինք կը վերցընէր՝ միակերպ
ըսելով . Ի՞նչ պիտի ըսէ գաւառապետը :
Քանի մը կանայք , որոնց մէջ էր Օռ-
լանտուչիոյի գայեակը , մազերնին կը
փետտէին և ունալու ձայներով կու լայ-
ին կ'ողբային : Բայց իրենց աղաղակա-
ւոր հեծութիւնքն այնչափ տալաւորու-
թիւն չէին ընէր՝ որչափ ուրիշ անձի մը
լուռ յուսահատութիւնը , որուն վրայ
ուղղուած էին ամենուն աչքը : Երկու
երիտասարդաց դժբաղդ հայրն էր , որ
մէյ մը մէկ դիակին՝ մէյ մը մէկալին
քով երթալով , հողով աղտեղած դլուխ

նին վեր կը վերցընէր, կապտացած շըր-
թունքներուն համբոյր կու տար, պըն-
դացած մարմինները կը բռնէր՝ իբրև թէ
երերալու ըլլան նէ՝ չմտասուին: Երբեմն
բերանը կը բացուէր խօսք մը ըսելու,
բայց ձայն մը՝ խօսք մը դուրս չէր ել-
լէր: Աչքերը միշտ դիակներուն վրայ
սևեռած, գլուխը քարի փայտի և ո՛ր և ի-
ցէ դիմացն ելած բաներուն կը զարնէր:

Կանանց ողբերն ու արանց անէծքնե-
րը սաստկացան՝ երբոր Յրսոյի տան դի-
մացն հասան: Մանաւանդ տէլլա Ռէպ-
պիաներուն կողմնակից հովիւներուն
բերնէն յաղթանակի ձայն մը լսուա-
ծին պէս, թշնամիք չկրցան բարկու-
թիւննին զսպել, և ոմանք վրէժխնդրու-
թիւն, վրէժխնդրութիւն պոռացին:
Քարեր նետեցին, և երկու հրացան ալ
պարպուեցաւ ան սրահին վրայ՝ ուր էին
Աղաւնի և իր հիւրերը. գնտակները փեղ-
կերուն մէջէն անցնելով՝ փայտի կտոր-
ներ զատքեցուցին ստոյլի մը վրայ՝ որուն
քով նստեր էին երկու օրիորդները:
Լիւղիս սաստիկ պոռաց վախէն, հա-
զարապետը մէկէն հրացան մը ձեռք ա-
ռաւ, իսկ Աղաւնի դուռը վազեց թա-

փով ու բացաւ զայն . և հոն կեցած՝
ձեռքերը տարածելով թշնամիքն անի-
ծելու համար , աղաղակեց .

— Վատ մարդիկ , կանանց՝ օտարա-
կանաց վրայ զէնք կը պարպէք . Գորսի-
գացիք էք դուք , մարդիկ էք . ցած մար-
դիկ որ ետևէն միայն սպաննել զիտէք :
Սուաջ եկէք տեսնամ . ես մինակ եմ .
եղբայրս հեռուն է . սպաննեցէք զիս ,
սպաննեցէք հիւրերս . ձեզի արժանի
դործ է ատիկայ : . . . , Ձէք համարձա-
կիր , որովհետև վատ էք , որովհետև
զիտէք որ վրէժնիս առինք : Գացէք ,
գացէք կանանց պէս լացէք , և շնորհա-
կալ եղիք մեզի որ ձեզմէ ալ ուրիշ ա-
րիւն չենք պահանջեր :

Սղաւնիի ձայնն ու շարժումաձրն ա-
հաւոր ու աղղող էր . բաղմութիւնը
զինքը տեսածին պէս՝ սարսափած ետ
քաշուեցաւ . ինչպէս թէ ան շարագործ
կախարդներէն մէկն ըլլար , որոնց վը-
րայօք ահարկու պատմութիւններ կը
պատմուին Գորսիգայի մէջ ձմեռուան
իրիկունները : Ս,յս միջոցն յարմար ա-
ռիթ սեպեցին գեղապետի փոխանոր-
դը , գիւղական պահպանութեան զի-

նուորքն ու քանի մը կանայք՝ երկու
կողմին մէջ նետուելու. որովհետեւ տել-
լա Ռէպպլիաներուն հովիւները զէնքեր-
նին կը պատրաստէին և կը վախցուէր
որ ընդհանուր կռիւ մը կը բացուի հրա-
պարակին մէջ : Բայց երկու կողմի մե-
ծերն ալ մէջտեղ չէին, և Գորախոպցիք
շատ քիչ անգամ ձեռք ձեռքի կու դան
իրենց քաղաքական պատերազմներուն
դիտաւորաց հոն չեղած միջոցը : Թող
որ Աղաւնի ալ տեսներով որ խօսքով
յաղթեց, չափու մէջ բռնեց իր մարդի-
կը . — Թողուցէք որ լան խեղճ մարդիկ-
ները, զուրցեց . Թողուցէք որ ծերն իր
միտը առնէ տանի : Ի՞նչ բանի կու դայ
այդ ծեր աղուէնս սպաննելը, որ ալ
ակռայ չունի խածնելու : — Ճիւղախիչ
Պարրիչինի, յիշէ օգոստոսի 2ը . յիշէ
արիւնտա դրապանակն որուն մէջ սաս-
տաց ձեռքդ դրեց : Հայրս անոր մէջ քու
մեզի տալու պարտքդ նշանակեր էր .
որդիքդ վճարեցին դան : Ա՛լ հատուց-
մանդ մուրհակը կու տամ քեզի, ծեր
Պարրիչինի :

Աղաւնի թե թեի անցուցած և ար-
համարհատ ժպխտով մը տեսաւ դիակ-

ներուն թշնամեաց սուներ մտնալը . և
երբ բազմութիւնը կամաց կամաց ցրուե-
ցաւ, դուռը գոցեց, և սեղանատունը
մտնալով՝ ըսաւ հազարապետին .

— Հայրենակցացս համար թողու-
թիւն կը խնդրեմ քեզմէ . ոչ երբէք
կրնայի կարծել որ Գորսիգացիք հրա-
ցան պարսկէն տան մը վրայ՝ ուր օտա-
րականք կան . իրենց տեղը ես ամօթով
մնացի :

Իրիկունը երբոր Նէվիլ օրիորդն իր
սենեակը քաշուեցաւ, հազարապետը
հերս մտաւ ու հարցուց թէ աղէկ չէ՞ր
ըլլար որ վաղուրնէ ելլան երթան այդ
դեղէն, ուր ամեն վայրկեան կրնար
զնտակ մը մարդու գլուխն իջնալ, և որ-
չափ կարելի է շուտով հեռանան այդ
երկրէն՝ ուր մարդասպանութիւն և մատ-
նութիւն միայն կը տեսնուէր :

Լիւզիա քիչ մը ատեն պատասխան
չտուաւ . ետքը,

— Ի՞նչպէս կրնանք ձգել այս աղ-
ջիկն, ըսաւ, այն միջոցին որ մխիթարու-
թեան կարօտ է : Մեր կողմէն անգթու-
թիւն չէ այս բանս, հայր իմ :

— Ես քեզի համար կը մտածեմ, զա-

ւակս , պատասխանեց հաղարապետը .
Թէ որ հիմա Ս. յաշչիոյի պանդոկն ըլ-
լայիր , ապահով կ'ըլլայի ու չէի ուզեր
այս անիծեալ կղզիէն ելլելու առանց
կտրիճ տէլլա Ռէպպիւային ձեռքը սըխ-
մելու :

— Ուրեմն դեռ սպասենք , հայր իմ ,
և ան ատեն երթանք՝ երբոր ապահով
ըլլանք որ չենք կրնար ծառայութիւն
մը ընել իրենց :

— Աղնիւ սիրտ , դուրցեց հաղարա-
պետն՝ աղջրկան ճակատը պաղնելով .
կ'ախորժիմ որ ասանկ ինքզինքդ կը դս-
հես ուրիշներուն թշուառութիւնը դիւ-
րացընելու համար : Կենանք ուրեմն .
մարդս աղէկ գործադութեան մը վրայ
ոչ երբէք կը դըլայ :

Լիւզիա շկրցաւ քուն ըլլալ . երբեմն
ականջն եկած ձայները՝ տան վրայ յար-
ձակման ձայներ կը կարծէր . երբեմն
ալ վիրաւորելոյն վրայ կը մտածէր , որ
հաւանականապէս դեռնին վրայ պատ-
կած էր այն վայրկենին . և կը զարմա-
նար միանգամայն անոր կարրճութեանը
վրայ : Ասանկ մտածմունքներով դրա-
ղած՝ առաւօտեան դէմ սկսաւ քուն ըլ-

լալ, և արևը շատ բարձրացած էր՝ երբոր աչքը բացաւ: Գիմացը տեսաւ Աղաւնին, որ իր արթննալուն կը սպասէր:

— Շատ անհանգիստ եղած պիտի ըլլաս մեր տունը, զուրցեց Աղաւնի. վախեմ որ բնաւ քուն եղած չես:

— Լուր մը առիւր իրմէ, ազնիւ բարեկամուհիս, հարցուց Լիւզիս:

— Այո, առիւ. բաւական աղէկ է: Ճիօզանդոյ այս առաւօտ ժամը չորսէն առաջ հոս եկաւ, և քեզի նամակ մը բերաւ. իսկ ինծի չէ գրած Օրսոյ: Կ'ըսէ թէ շատ նեղութիւն քաշեր է Օրսոյ գրելու. և թէպէտ ճիօզանդոյ յանձն առեր է գրելու իրեն թելադրածը, բայց Օրսոյ չէ ուղած. կանրկի վրայ պատկած գրեր է կապարէ գրչով. Պրանտուաչչիոյ ալ թուղթը բռներ է: Եղբայրս միակերպ կ'ուզէ եղեր ելլել, և ու կ'իցէ պզտիկ շարժմունքէն՝ անանկ դժնդակ ցաւեր կը զգայ եղեր թեր, որ սիրտ շարժելու բան էր կ'ըսէ ճիօզանդոյ: Ահաւասիկ իր նամակը:

Նէվիլ օրիորդը կարդաց նամակն, որ անդդիարէն գրուած էր, և էր հետեւեալը:

« Օրիորդդ ,

Չախտդ պատահարի մը մէջ ինկայ . ո՞ գիտէ
 ինչ պիտի ըսեն թշնամիքս , ինչ զրպարտութիւն
 ներ պիտի բարդեն վրաս . բայց անոնք հոգս չեն :
 Չքեզ տեսնելէս վերջը սնտաի ակնկալութիւն մը
 ծներ էր սրտիս մէջ . բայց ներկայ դէպքս անե-
 ընութացուց այն երազը . կը տեսնեմ աչքիս առ-
 ջլեն իմ ապագաս , և աչքս առած եմ : Ա՛լ չեմ
 համարձակիր քովս պահելու ինձի տուած մատ-
 նիդ . Աղաւնի կը դարձնէ քեզի զանիկայ : Ող-
 ջանք մնա . դու կ'երթաս Գորսիգայէն , և ա՛լ չենք
 տեսնուիր իրարու հետ . բայց ըսէ քրոջս որ ես
 քու համարմանդ արժանի եմ :

Օ . Տ . Ռ . »

Աղաւնի դարձուց մաանին Լիւզիոյ ,
 և անոր անկողնին վրայ նստելով , — Ան-
 տարակոյս եղբօրս կը պատասխանես ,
 ըսաւ : Կամակն երբոր հասաւ՝ մտածե-
 ցի որ արթնցընեմ դքեզ , բայց չհա-
 մարձակեցայ :

— Գէշ ըրիր որ չարթնցուցիր :

— Բայց հիմա ա՛լ չեմ կրնար նամակ
 խրկել . դաւառապետը հասաւ հոս , և
 իրեն շժառաները բռներ են Բիէդրանէ-
 րան . տեսնենք վերջը կրնա՞նք յաջող
 ցընել : Ո՛հ , թէ որ ճանչնայիր եղբայրս . . .

աղնիւ ու կտրիճ . նայէ ըրածը , մէկ հո-
գի երկու հոգւոյ գէմ' և վիրաւորուած :

Գաւառապետն իրօք գեղապետի փո-
խանորդին խրկած մարդէն լսելով եղա-
ծը , եկեր էր Բիէզրանէրա զինուորնե-
րու հետ , և թագաւորական գործակա-
տարն , անոր ատենադպիրն և այլն' մէկ-
տեղ առած , որպէս զի քննութիւն ը-
նեն այս արիւնահեղութեան վրայ ,
որ Բիէզրանէրայի հակառակորդ ազ-
գաստհմից թշնամութեանը վախճան
տուեր էր : Գաւառապետը մէկէն տես-
նուեցաւ Նէվիլ հազարապետին և ա-
նոր աղջրկանն հետ , և վախ ցուցուց ա-
նոնց որ բանին ծայրը գէշի պիտի եր-
թար : — Գիտէք , զուրցեց , որ կռուին
վկայ չկայ , և երկու մեռեալ երիտա-
սարդայ ճարտարութեանն ու կտրը-
ճութեանը վրայ անանկ համոզուած են
ամենքը , որ ոչ ոք կը հաւտայ որ Պ .
տէլլա Ռէպպիա կրցած ըլլայ սպաննել
զանոնք առանց աւազակներուն օգնա-
կանութեանը , որոնց քովը կ'ըսուի թէ
ապաւինած է :

— Անկարելի է , աղաղակեց հազա-
րապետը . Օրսոյ տէլլա Ռէպպիա պա-

տուաւոր երիտասարդ մըն է, ես երաշխաւոր կ'ըլլամ:

— Ես ալ կը հաւտամ որ անանկ է, պատասխանեց դաւառապետը. սակայն թագաւորական գործակատարը (այս տեսակ անձինք միշտ կասկածոտ են) շատ համոզուած չէ: Իրեն ձեռքը նամակ մը կայ, որ ձեր բարեկամին մասակար է. այդ սպառնալից նամակը Օրսոյ Օռլանտուչչիոյի գրած է, որուն մէջ տեղ մը կ'որոշէ անոր . . . այս տեղւոյ որոշմունքը՝ որոգայթ մըն է կ'ըսէ արքունի գործակատարը:

— Մանաւանդ թէ Օռլանտուչչիոյ յանձն չէ առած հետը մենամարտելու, ըսաւ հազարապետը:

— Հոս անանկ սովորութիւն չկայ. դարանի կը մանեն, և ետեւէն կը սպաննեն զիրար. այս է հոս տեղի սովորութիւնը: Կայ Պ. տէլլա Ռէպպիայի կողմնալ վկայութիւն մը. աղջիկ մը որ կը հաստատէ թէ չորս հրացանի հարուած լսեր է, որոնց վերջի երկուքն առջիններէն աւելի սաստկաձայն և Պ. Օրսոյի հրացանին հարուածներն էին: Դժբաղդաբար այս աղջիկն այն աւազակներուն

մէկուն ազգականն է, սրունք դաւակնից
սեպուած են. որով անանցմէ ատն աւ
ուած կը սեպուի:

— Պարոն, զուրցեց Լիւդիա, մենք
ճամբան էինք երբ հրացանի հարուած
ները պարպուեցան, և մենք ալ նայն
պէս լսեցինք:

— Իրան կ'ըսէք. այս աղէկ բան է:
Դու ալ, Պ. հազարապետ, նայն բանը
դիտեցիր արդեօք:

— Այո, պատասխանեց Նէվիլ օւ
րիորդը. հայրս, որ աղէկ վարժութիւն
ունի դէնքի, ըսաւ ինձի. Սհաւասիկ
Պ. տէլլա Ռէպպիան իմ հրացանս կը
պարպէ:

— Եւ այդ ձեր ըսած հարուածները
ետքիներն էին:

— Այո, ետքիները՝ անանկ չէ, հայր
իմ:

Հայրը շատ յիշողութիւն չունէր. բայց
ո և իցէ առժի մէջ աղջրկանը խօսքը
սուտ չէր հանէր:

— Մէկէն այս բանս պատմելու է ար
քունի դորժակատարին, Պ. հազարա
պետ: Սըղէն այս իրիկուն վիրաբոյժ մը
պիտի գայ որ դիակները զննելով ստու

դէ թէ վերջերն յիշեալ զէնքննն եղած
են :

— Ես առի զանիկայ Օրսոյի, ըսաւ
հազարապետը, երանի թէ ծովուն տա-
կը դացած ըլլար . . . Բայց չէ, չէ. շատ
զոհ եմ որ խեղճ աղուն ձեռքն է եղեր
անիկայ. ապա թէ ոչ, առանց իմ հրա-
ցանիս չեմ գիտեր ինչպէս կ'աղատէր
փորձանքէն :

ԺԹ

Վիրաբոյժը քիչ մը ուշ հասաւ. ու
բովհետեւ ճամբան զխալուած մը անցեր
էր գլխէն : Ճիօգանդոյ Գասդրիգոնի
հանդիպելով իրեն, բռնադատեր էր եր-
թալու հողալու վիրաւորեալ մը. ուս-
տի տարեր էր Օրսոյի քով և վերջը պա-
տել տուեր. ետքը շատ մը հեռացընե-
լով հոնկից ճամբայ դրեր էր զինքը, ը-
սելով .

— Պ. վիրաբոյժ, կարծեմ աւելորդ
է յիշեցընելը քեզի որ բժիշկ մը խոս-
տովանահօր պէս պէտք է լուռ ըլլայ .
արդէն մտցած ես դացած տեղդ : Եր-
թան բարով : Ըսաւ ու հրացանը ցըցուց :

Աղաւնի աղաչեց հաղարապետին որ դիակներուն անդամահատութեանը ներկայ ըլլայ .

— Դու ամենէն աղէկ կը ճանչնաս եղբօրս հրացանը , ըսաւ , անոր համար ներկայութիւնդ շատ հարկաւոր է : Թող որ այնչափ չար մարդիկ կան հոս , որ մեծ վտանգի մէջ կ'ըլլանք մենք՝ թէ որ զմեզ պաշտպանող մը չըլլայ :

Երբոր մինակ մնաց Աղաւնի Լիւդիոյ հետ , առաջարկեց որ գեղէն դուրս ելլեն քիչ մը քաղեն , գլխու ցաւն անցընելու համար . « Բաց օդն անտարակոյս աղէկ պիտի ընէ ինձի . շատ ատեն է որ չեմ ծծած » ? Քաղելու ատեննինն եղբօրը վրայ կը խօսէր Նէվիլ օրիորդին հետ . անով Լիւդիա չէր իմանար որ շատ կը հեռանային Բիէդրանէրայէ : Արևը մտնալու վրայ էր՝ երբոր Լիւդիա անդրադարձաւ , և յորդորեց զԱղաւնի որ ետ դառնան : Աղաւնի պատասխանեց որ ինքը կարճ ճամբայ մը դիտէր՝ որով դարձերնին շատ կը դիւրանար , և քարած ճամբէն ելլելով՝ հոն մտաւ : Քիչ ատենէն սկսաւ անանկ զատ 'ի վեր բլրոյ մը վրայ ելլել , որ բռնադատուեցաւ մէկ

ձեռքովը ծառի ճիւղեր բռնել և մէկալ
ձեռքովն ընկերը մէկտեղ տանիլ: Քա-
ռորդ մը ասանկ դժուարութեամբ վեր
ելլելէն ետքը, հասան սարահարթին
վրայ, որ մտենեօք և մաթուղենեօք
(ձօձա եւեմիշի) և կրանիտեայ ժայռե-
քով շրջապատած էր: Լիւղիա սաստիկ
յոգներ էր, գեղը չէր երևնար, և գրե-
թէ գիշեր էր:

— Գիտես, աղնիւ Աղաւնիս, որ մու-
լորած պիտի ըլլանք, զուրցեց Լիւղիա:

— Մի վախեր, պատասխանեց Ա-
ղաւնի. ետեէս եկուր:

— Բայց ապահով դիտնաս որ կը
սխալիս. գեղը այս կողմը չկրնար ըլլալ:
Ես կ'ըսեմ որ մենք կռնակնիս տուեր
ենք անոր. նայէ, սա լոյսերն որ հեռուն
կը տեսնենք, առանց տարակուսի հոն
է Բիէգրանէրա:

— Աղնիւ բարեկամուհիս, իրաւունք
ունիս. բայց ասկից հարիւր քայլ հե-
ռու, մաքիին մէջ...

— Ի՞նչ կայ:

— Եղբայրս հոն է. կը փափաքիմ
տեսնել և համբուրել զինքը, թէ որ հա-
ւանիս: Կամաւ քեզի հետ ելայ Բիէ-

դրանէրայէ, որովհետեւ մինակ ըլլայի
նէ՛ գեղացիք կ'անդրադառնային և ե-
տեէս մարդ կու դար: Կարելի բան է որ
այսչափ մօտ ըլլամ եղբօրս ու չտեսնեմ
զինքը:

Լիւղիս բռնադատուեցաւ ընկերե-
լու Աղաւնի: Գեռ քիչ մը ատեն քա-
լելնէն ետքը՝ կանկ առաւ Աղաւնի ու
բաւ ընկերաջը. «Ա՛լ առաջ չերթանք.
առաջուց աւազակներուն խմաց տանք,
ապա թէ ոչ՝ կրնայ յանկարծ հրացա-
նի դնտակ մը իջնալ գլուխնիս»: Այս
բաւ ու սկաւ սուրբ մատուրներովը.
մէկէն շան մը հաջելու ձայնը լսուեցաւ,
և անմիջապէս վերջը աւազակաց պա-
հապանն երեցաւ. Պրուսոյ շունն էր,
որ ճանցաւ զԱղաւնի, և ուղեց առաջ-
նորդութիւն ընել իրեն: Ետտ մը շրջան-
ներ ընելէ ետքը անտառին նեղ ճամ-
բաներուն մէջ, երկու վերէն վար զի-
նուորեալ անձինք զէմերնին ելան:

— Գնա ես, Պրանատլացիոյ, հարցուց
Աղաւնի: Ո՛ւր է եղբայրս:

— Հոն վարը, պատասխանեց աւա-
զակը. բայց կամայ քալեցէք. վիրաւո-
րուելէն վերջը առաջին անդամն է որ

կը քնանայ : Այս ինչ կտրըճութիւն է
ձեր ըրածը :

Երկու օրիորդները զգուշութեամբ
մտնեցան , և տեսան Օրսոյ տերեւներու
վրայ սլառկած և ծածկոյթ մը վրան ա-
ռած . քոյն ալ կրակ վառած էր , որուն
լուսաւորութիւնը քարէ պղտի պատով
մը ծածկած էր . շատ տոգոյն էր Օր-
սոյ , և նեղութեամբ շունչ կ'առնէր : Ա-
ղաւնի քովը նստեցաւ , և ձեռք ձեռքի
միացուցած՝ լուսութեամբ կը նայէր վը-
րան . Լիւդիա ալ Աղաւնիի ետեր կե-
ցաւ : Քառորդէ մը ետքը Օրսոյ շարժ-
մունք մը ըրաւ . ան ատեն մէկէն Աղաւ-
նի ծռեցաւ սիրալիլ համբոյրը տուաւ ,
և հարցմունք հարցմունքի վրայ ըրաւ
վէրքին՝ քաշած ցաւին և ունեցած պի-
տոյիցը վրայ : Օրսոյ պատասխանեց որ
վիճակին համեմատ աղէկ էր . ետքը
հարցուց որ Նէվիլ օրիորդը Բիէդրանէ-
րա՞ն էր դեռ , և թէ նամակ գրեր էր ար-
դեօք : Աղաւնի՞ մէկդի քաշուեցաւ ու
լեցուն բերնով ծիծաղելով՝ զուրցեց .
— Օրսոյ , Նէվիլ օրիորդին վրայ գէշ մի
խօսիր , որովհետեւ աղէկ կը հասկընայ
տեղւոյս լեզուն :

— Գո՛ւ հոս եկեր ես, աղաղակեց Օրսայ . ի՛նչ երջանկութիւն :

— Հարկ եղաւ ընկերեմ՝ քրոջդ, պատասխանեց Վիւդիա, որպէս զի կասկածի չերթան անէն դուրս ելլելուն վրայ : Ի՛նչպէս անհանգիստ ես հոս, բայց օդի մէջ պառկած . բայց յուսամ որ ճամբայ ելլելնէս առաջ բանին ստուգութիւնը դուրս կ'ելլէ և կ'արդարացնեն զքեզ :

— Ի՛նչ . պիտի երթաք :

— Ի՛նչ ընենք հոս . հայրս չկրնար միշտ որսալ :

— Հը՛հը, ըսաւ Աղաւնի, մենք թող չենք տար որ երթաք : Գու խօսք չտուիր ինձի որ դէմքս շինես . դեռ և ոչ սկսար . . . Ես ալ քեզի սերեւսդս պիտի արտասանեմ եօթանասունըհինգ տունով . անկից դատ . . . : Բայց ինչո՞ւ համար Պրուսգոյ կը հաջէ . Պրանտոլաչչիոյ ալ ետևէն կը վազէ . տեսնենք ի՛նչ կայ :

Ըսաւ ու վազեց անոնց ետևէն . ետքը աճապարանօք դառնալով,

— Չինուորներ հասեր են՝ աղաղակեց : Օրսոյ, ուժ տուր քեզի որ ելլես քալես, ես ձեռք կու տամ :

— Թող սուէք զիս հոս, պատաս-
խանեց Օրսոյ: Ըսէ աւազակներուն որ
իրենք զիրենք ու զձեզ ազատեն. իմ
հոգս չէ որ բռնուիմ:

— Ես չեմ թողուր զքեզ, ըսաւ Պրան-
տուլաչչիոյ՝ որ Աղաւնիի ետեէն եկեր
էր: Չինուորներուն տանապետը փաս-
տաբանին սանն է, փոխանակ բռնելու
զքեզ՝ կը սպաննէ, և ետքը կ'ըսէ թէ
կամաւ չէ ըրած:

Օրսոյ փորձեց որ սարի վրայ ելլէ.
քանի մը քայլ ալ ըրաւ. ետքը կանկ
առաւ ու Չեմ կրնար քալել, ըսաւ.
դուք փախէք:

— Չես կրնար քալել նէ, կ'ուզես որ
ես կռնակս առնեմ տանիմ զքեզ, զուր-
ցեց Պրանտուլաչչիոյ: Կարիճ եղիր. ետեի
կողմէն կրնանք փախչիլ. ժողովրդա-
պետն անոնց հետ ժամանակ կ'անցընէ:

— Չէ, չեմ երթար, ըսաւ Օրսոյ, ու
զետին փռուեցաւ:

— Դու ուժով ես, զուրցեց Պրանտու-
լաչչիոյ Աղաւնիի: Օրսոյի ուսերէն բռնէ,
ես ալ սարէն. սանկ. քալէ նայիմ ա-
ռաջ:

Սկսան տանիլ զՕրսոյ արագաբար.

Լիւղիա ալ ետևէն կ'երթար : Քիչ ատե-
նէն հրացանի ձայն մը լսուեցաւ . ան-
միջապէս ետքը հինգ վեց հարուած ալ :
Լիւղիա աղաղակեց . Պրանատլաչչիոյ
հայհոյեց և քայլերը երազեց . Սղաւնի
ալ նոյնպէս կը վազէր , առանց ուշա-
դրութիւն ընելու ճիւղերուն որ երեսին
կը զարնուէին և երբեմն զգեստը կը
պատուէին . — Գլուխդ վար ա՛ռ , սիրե-
լիս , կ'ըսէր Լիւղիոյ , չըլլայ որ գնտակ
մը դայ գլուխդ : Այս կերպով հինգ հա-
րիւր քայլ տեղ վազեցին . վերջապէս
Պրանատլաչչիոյ խնայուց որ յագներ էր
ու ինկաւ գետինը փռուեցաւ . թէպէտ
Սղաւնի կը յորդորէր ու կը յանդիմա-
նէր զինքը :

— Ո՛ւր է Նէվիլ օրիորդը , հարցուց
Օրսոյ :

Լիւղիա հրացանի հարուածներէն
սարսափած , և միակերպ կանկ առնե-
լով անտառին թանձրութենէն , ետև
մնացեր ու մոլորեր էր , և սաստիկ խռո-
վեալ կը ծփէր :

— Ետև մնացեր է , ըսաւ Պրանատ-
լաչչիոյ . բայց կորսուած չէ . կնիկները
միշտ զիրար կը գտնան : Մտիկ ըրէ ,

Օրս' Անտան, սրչափ շշնկոց կը հանէ ժողովրդապետը քու հրացանովդ : Գլխադդարար զիրար չեն տեսներ ու իրարու մնաս չեն կրնար ընել զիշերանց :

— Նայէ, ըսաւ Աղաւնի. ձիու ձայն մը կը լսեմ, ազատեցանք :

Իրօք դէպ 'ի իրենց կը մօտենար ձի մը, որ անտառին մէջ քաշելու ատենը վախցեր էր հրացանի ձայներէն :

— Ազատեցանք, կրկնեց Պրանտուլաչչիոյ, և Աղաւնիի հետ դէպ 'ի ձին վազելը, բաշէն բռնելն և բերանը չուանէ հանկուրց մը անցընելը սանձի պէս, մէկ ըրաւ : — Հիմա իմաց տանք ժողովրդապետին, ըսաւ : Երկու անգամ սուլեց, հեռուէն պատասխանն առաւ, և անկէ ետքը Օրսոյի հրացանը լռեց : Ան ատեն Պրանտուլաչչիոյ ձիուն վրայ ցատքեց, Աղաւնի եղբայրն առաւ աւազակին առջև նստեցուց. Պրանտուլաչչիոյ մէկ ձեռքովը ուժով սխմեց զՕրսոյ, մէկալովը ձին քշեց, որ աւազակին ստքին հարուածները կերածին պէս՝ սկսաւ կրակի երագութեամբ անանկ զառիւթայր բլրէ մը վար իջնալ, որ ուրիշ որ և իցէ երկրի ձի հարիւր անգամ կտոր կտոր կ'ըլլար հոն :

Մն ատեն Աղաւնի նորէն ետ դարձաւ և որչափ ձայն ունէր՝ կանչեց Նէվիլ օրիորդը . բայց պատասխան չառաւ : . . . Քիչ մը ատեն ապիս անդին քալելէն ետքը , երկու զինուորի հանդիպեցաւ , որ պոռացին՝ Ռ՛ւր կ'երթաս :

— Հա՛ հա՛ , ըսաւ Աղաւնի ծիծաղելով , այսչափ շնկոց հանեցիք . քանի մեռեալ ունեցար :

— Դու աւազակաց հետ էիր , զուրցեց զինուորներուն մէկը . պէտք է որ հետերնիս դաս :

— Շատ սիրով , պատասխանեց Աղաւնի . բայց ես բարեկամուհի մը ունիմ հոս , պէտք է որ առաջ զանիկայ գանանք :

— Բարեկամուհիդ արդէն բռնուած է . մէկտեղ կու գար բանտին մէջ քուն ըլլալու :

— Բանտին մէջ . տեսնանք . հիմկու հիմա զիս իրեն քովը տարէք :

Չինուորները տարին զինքը աւազակաց բնակութեան տեղը , ուր իրենց նոյն օրուան ստացած յաղթանակները ժողոված էին , այսինքն Օրսոյի ծածկոյթը , հին սան (թէնձէրէ) մը , և ջրի կուժ

մը : Հոն էր Նէվիլ օրիորդը , որ զինուո-
րաց՝ աւազակներուն թուին և բռնած
ճամբանուն վրայ ըրած հարցմանցը՝ ար-
ցունքով միայն պատասխան կու տար :

Աղաւնի գրկախառնեցաւ հետն ու
ականջէն զուրցեց . Աղատեցան : Ետքը
տասնապետին դառնալով , Պարոն ը-
սաւ՝ կը տեսնես որ այս օրիորդը հար-
ցուցած բաներնուդ վրայ բնաւ տեղե-
կութիւն չունի : Ուստի թողէք որ զեղն
երթանք , ուր անհամբերութեամբ կը
սպասեն մեզի :

— Կը տանինք զձեզ հոն , մի վախեր ,
պատասխանեց տասնապետը . հոն հա-
մար կու տար թէ ինչ ունէիք անտառին
մէջ աս ատեն վախշող աւազակներուն
հետ : Երթանք :

— Եօթը հոգի էք , հարցուց Աղաւ-
նի : Գիտէք , պարոններ , որ եթէ պա-
տահամբ կամպինի , Սարօքքի և Բօլի
եղբարք Ս . Քրիստինեայ խաչին քովը
դանուին Պրանտոլաչչիոյի և Ժողովըր-
դապետին հետ , կրնան բաւական բան
բանալ զլուխնիդ : Թէ որ պատերազ-
միւն հրամանատարիւն¹ հետ խօսա-

¹ Այսպէս կը կոչուէր Թէոդորոս Բօլի :

կցութիւն պիտի ընէք , ես չեմ ուզեր
մէջը գանուիլ . գնատակները գիշեր ատեն
ծանօթի չեն նայիր :

Այդ աւագակներուն անունները տը-
պաւորութիւն ըրին զինուորաց վրայ :
Տասնապետը նահանջի հրաման տուաւ ,
և իր փոքրիկ գունդը գէպ 'ի Բիէզրա-
նէրա ճամբաց ելաւ , ծածկոյթն ու սա-
նը մէկտեղ տանելով . իսկ կուժէն ոտ-
քի հարուածով մը վրէժնին առին :
Լիւզիա տխրութեամբ հետերնին գնաց ,
մտմտալով թէ հայրը ի՞նչ պիտի զուր-
ցեր իր հեռավորութեանը վրայ :

Գաւառապետն ու արքունի գործա-
կատարը Բիէզրանէրայի գեղապետի
փոխանորդին տունը կը բնակէին . հա-
զարապետը իր աղջրկան վրայ այլայ-
լած՝ կ'երթար կու գար միակերպ ա-
նոնց քովը՝ լուր ուզելու համար : Վեր-
ջապէս զինուոր մը հասաւ , զոր տաս-
նապետը սուրհանդակ զրկեր էր , և ա-
ւագակներուն գէմ ըրած մեծ կռիւնին
պատմեց . իրաւ այս կռուին մէջ ոչ մե-
ռեալ և ոչ իսկ վիրաւոր մը եղեր էր՝
կ'ըսէր , բայց սան մը , ծածկոյթ մը և
երկու օրիորդ աւար սուեր էին : Քիչ

ատենէն զինուորներէն պաշարուած և
կան ներկայացան երկու օրիորդները :
կրնայ գուշակուիլ Աղաւնիի զուարթ
կերպը , Լիւդիոյ խպնիլը , գաւառապե-
տին յանկարծակիի գալը , և հազարա-
պետին ուրախութիւնն ու զարմանքը :

— Ինձի կ'երևայ , ըսաւ գաւառապե-
տը , որ կրնանք զասոնք ազատ թողուլ .
իրենք քալելու ելեր են և մնացածը դի-
պուածով եղած է : Ետքը մէկդի տա-
նելով զԱղաւնի , ըսաւ . — Օրիորդ , կըր-
նաս եղբօրդ խնայրնել որ իր բանը ա-
ղէկ վիճակի մէջ է : Գիականերուն քրն-
նութիւնը և հազարապետին վկայու-
թիւնը կը ցուցնեն որ ինքը պատաս-
խան տուեր է առած հարուածներուն ,
և թէ կռուին ատենը մինակ է եղեր :
Ամեն բան դիւրաւ կը յարմարցընենք .
բայց պէտք է որ ժամ մը առաջ մնա-
քիէն ելլէ և բանտ մտնէ :

Գրեթէ զիշերուան ժամը տասնըմէկն
էր երբ հազարապետը , աղջիկն ու Ա-
ղաւնի ընթրիքի նստան , որ պաղեր էր :
Աղաւնի ախարժակով կ'ուտէր , ծաղը-
րնելով գաւառապետը , արքունի գոր-
ծակատարն ու զինուորքը : Հազարա-

պետը կ'ուտէր առանց բերան բանա-
լու, և միակերպ աղջիկանը վրայ կը
նայէր, որ իր պնակին վրայէն չէր վեր-
ցըներ աչքերը: Հուսկ յետոյ անոյ՛ջ բայց
ծանր ձայնիւ ըսաւ Ախղիոյ անզղիա-
րէն.

— Ախղիա՛, տէլլա Ռեպպիայի հետ
կապ մը ունեցա՛ր:

— Այո՛, հայր իմ, այսօր ունեցայ,
պատասխանեց աղջիկը կարմրելով. ետ-
քը աչքերը վեր առաւ, և հօրը դէմքին
վրայ բարկութեան նշան մը չտեսնելով,
գիւրկը վազեց և համբուրեց զհայրը:

— Փոյ՛թ չէ, պատասխանեց հազա-
րապետը. կտրի՛ճ երիտասարդ է. բայց
իրենց անզղամ երկրին մէջ չենք բնա-
կիր, գիտնաս. ապա թէ ոչ հաւանու-
թիւնս չեմ տար. խօսքս խօսք է:

— Անզղիարէն չեմ գիտեր, զուրցեց
Աղաւնի՛ որ սաստիկ հետաքրքրութեամբ
կը նայէր իրենց. բայց ապահով եմ որ
ըսածնիդ իմացայ:

— Ըսածնիս այս է, պատասխանեց
հազարապետը, որ զձեզ իռլանտա պի-
տի տանինք ճամբորդութիւն ընելու:

— Շատ սիրով, և ես քու բերնին

կ'ըլլամ: Այի ասիի զարնե՞նք, պարուն
հազարապետ:

— Այս դիպուածին մէջ կը պագ-
տուին իրարու հետ, պատասխանեց հա-
զարապետը:

Ի

Բիէդրանէրայի ճախող դիպուածէն
քանի մը ամիս վերջը, երիտասարդ մը՝
ճախ ձեռքը վիզէն կախուած լաթի մը
մէջ անցուցած, ցորեկուրնէ վերջը ձիով
Պասդիայէն դուրս ելաւ և դէպ 'ի Գար-
տոյ գեղը կ'երթար, որուն անոյշ ջրով
աղբիւրն հռչակաւոր է: Գեռահասակ
օրիորդ մը կ'ընկերէր անոր՝ պղտի սև
ձիու մը վրայ հեծած, որուն մէկ ական-
ջը ճգրած էր: Երբոր գեղն հասան, օ-
րիորդը վար իջաւ ձիէն, և յետ ձեռք
տալու ընկերին որ ձիէն վար իջնայ,
ձիուն թամբէն կախուած տուրակնե-
րը վար առաւ: Չիերը գեղացւոյ մը յանձ-
նուեցան, օրիորդը տուրակները սեճ-
ճարոյին տակն առաւ, երիտասարդն
ալ կրկին հարուածով հրացան մը ա-
ռած՝ սկսան դէպ 'ի լեռն երթալ ու

զառիվեր ճամբէ մը վեր կ'ելլէին : Երբոր ֆուէրչիոյ լերան վրայ չափաւոր բարձրացան , կանկ առին ու խոտին վրայ նստեցան : Կարծես թէ մարդու կը ապաստէին , որովհետև միակերպ աչքերնին դէպ 'ի լեռը կը դարձընէին , և օրիորդը ստէպ կը նայէր ոսկիէ ազուոր ժամացոյց մը՝ տեսնելու համար թէ խօսակցութեան ժամը հասեր էր արդեօք : Շատ ատեն չապաստեցին , շուն մը ելաւ անտառէն , և օրիորդը՝ Պրուսգոյ կոչածին պէս՝ վաղեց եկաւ դանոնք փայփայելու : Քիչ ատենէն երկու մօրուաւոր մարդիկ երևցան , հրացաննին թևերնուն տակ առած և ատրճանակնին մէջքերնին անցուցած . զգեստնին զէնքերնուն փայլունութիւնը շունէր , պատրուած և կարկատուն էր : Այս չորս անձիւքը սկսան մտերմաբար խօսակցել :

— վերջապէս ուրեմն , Օրս' Անտոն , զուրցեց հասակաւոր աւազակը , ազատեցար դատաստանէն , ուրախ եմ : Կը ցաւիմ որ փաստարանը կղզիս չէ , որ բարկութիւնը տեսնէինք . թեղ ինչպէս է :

— Յոյս տուին ինձի, պատասխանեց
երիտասարդը, որ տասներհինգ օրէն կը ը-
նամ ձեռքիս լաթը հանել: Կարիճ Պրան-
տոն, ես վաղը դէպ 'ի խապիս ճամ-
բայ պիտի ելլեմ. անոր համար ուզեցի
որ քեզի և ժողովրդապետին մնայ բա-
րով ըսեմ, և այս պատճառաւ աղաչե-
ցի որ հոս դանուիք:

— Շատ կ'աճապարես, զուրցեց
Պրանտոլաչչիոյ. դեռ երէկ խալըսեցար
և վաղը ճամբայ պիտի ելլես:

— Գործեր ունինք, ըսաւ զուարթու-
թեամբ օրիորդը: Պարոններ, ձեզի ընթ-
րիք բերի. կերէք, բայց իմ Պրուսզոյ
բարեկամս ալ մի մտնար:

— Դու կ'աւրես զՊրուսզոն, զուրցեց
Պրանտոլաչչիոյ Աղաւնիի. բայց երախ-
տագէտ է քեզի, հիմա տեսնես: Եւ հրա-
ցանը հորիզոնաբար տարածելով, ֆեղ
տեսնեմ, Պրուսզոյ, ըսաւ. Պարրիչինի-
ներուն համար ցատքէ: Շունը տեղէն
չշարժեցաւ, լեզուովը ցռուկը կը լզէր
ու ախրոջն երեսը կը նայէր: — Տէլա
Ռէպպիաներուն համար ցատքէ. — հար-
կաւորէն երկու ոտք աւելի ցատքեց
շունը:

— Մտիկ ըրէք ինձի, բարեկամներս,
լսաւ Օրսոյ, ձեր արուեստը գէշ ա-
րուեստ մըն է. թէ որ կեանքերնիդ սա-
վարը տեսնուած հրապարակին¹ վրայ
չլմընցընէք ալ նէ, շատ շատ զինուորի
մը հրացանի գնտակէն պիտի իյնաք ան-
տառի մը մէջ:

— Ի՞նչ կ'ըլլայ, պատասխանեց Գաս-
գրիգորնի, ան ալ ուրիշ մահերուն պէս
մահ է. աւելի լաւ է քան զջերմն որ ան-
կողնի մէջ կը մեռցընէ զմարդ, և ժա-
ռանդներուն ձեացեալ արցունքները
բռնի լսել կուտայ: Երբոր մէկը մեզի
պէս բաց օդուն վարժած է, ամենէն ա-
ղէկը կօշիկներուլը մեռնիլն է, ինչպէս
մեր գեղացիները կ'ըսեն:

— Ես կ'ուզէի, շարունակեց Օրսոյ,
որ այս երկրէն ելլէք, . . . և աւելի խա-
ղաղ կեանք մը անցընէք: Զոր օրինակ,
չէք կրնար երթալ Սարտենիա կղզին
բնակիլ, ինչպէս որ ձեր ընկերներէն շա-
տերն ըրին: Ես այդ ճամբորդութեան
միջոցները կը գտնամ ձեզի:

— Սարտենիա, աղաղակեց Պրան-

¹ Պատգիոյ քաղքին այն հրապարակն ուր գրէ-
խապարտները կը սպաննուին:

տողաչիոյ . սաստանան անոնց երեսը
տեսնէ . մեզի համար , շատ գէշ ընկե-
րութիւն է Սարտենիացւոց ընկերու-
թիւնը :

— Ապրուստ չկայ Սարտենիայի մէջ ,
վրայ բերաւ ժողովրդապետը : Ես , շի-
տակն ըսելով , կ'արհամարհեմ զՍար-
տենիացիս : Շատ կը զարմանամ , Պ .
տէլլա Ռէպպիա , թէ ինչպէս քեզի պէս
բան ճանչցող ու գիտցող մարդ՝ մեր
անտառարնակ կենացը չես հետևիր ,
մանաւանդ որ համն ալ առիր :

— Բայց երբոր ես ձեր սեղանակիցն
ըլլալու բարեբաղդութիւնն ունեցայ ,
ըսաւ Օրսոյ ժպտելով , ձեր վիճակին
աղէկութիւնն զգալու կարողութիւնը
չունէի . և դեռ կողերս կը ցաւին ան
գիշերութիւնն որ ծրարի մը պէս անթամբ
ձիւն վրայ դրուեցայ :

— Հապա հալածողաց ձեռքէն փախ-
չիլդ բանի տեղ չես դներ , կրկնեց Գաս-
դրիգոնի . ինչպէս կրնաս անտարբեր
ըլլալ բացարձակ աղատութեան վայել-
քին՝ ասանկ աղուոր կլիմայի տակ : Սա
ձեռքինս ունենալէն վերջը (հրացանը
ցըցուց) , մարդ ամեն տեղ թագաւոր

է՛ մինչև ուր որ գնտակը կրնայ հասցը-
նել : Հրաման կու տաս . ուրիշի եղած
նախատինքներու վրէժը կ'առնես . . .
ասիկայ բարոյական և միանգամայն ա-
խորժելի զուարճութիւն մըն է , զոր ոչ
ումեք կը ժխտենք մենք : Թափառական
ասպետի մը կեանքէն աւելի ի՞նչ ա-
ղուոր կեանք կայ , երբոր մէկը տօն ֆի-
շողէն աղէկ դիմեալ և աւելի խելացի
ըլլայ : Հաւտա ինձի , Պ . Օրսոյ , աւա-
զակի կեանքը աննման է թերևս
դու ալ մեզի հետ կը միանայիր , թէ որ
ամուսնանալու միտք չունենայիր :

— Իմ նուա անտառ շտիրեր , ըսաւ
Աղաւնի ծիծաղելով . որ մը շատ վախ-
ցաւ անոր մէջ :

— Վերջապէս , դուրցեց Օրսոյ , հոն
մնալ կ'ուզէք . հաճոյքնիդ ըրէք , միայն
ըսէք ինձի ի՞նչ կրնամ ընել ձեզի :

— Ոչ այլ ինչ , պատասխանեց Պրան-
տուլաչչիոյ , բայց եթէ մտքիդ մէջ յիշա-
տակնիս պահես : Արդէն բարերարու-
թիւններով մեզի առատաձեռնեցիք .
Քիլինա օժիտ ունեցաւ . դիտենք ալ որ
ձեր վարձուորը մեզի հաց և վառօդ կու
տայ՝ երբ պէտք ունենանք . ուստի եր-

Թայք բարով : Յուսամ որ օր մը նորէն
հոս Գորսիգայի մէջ կը տեսնուինք ի-
րարու հետ :

— Երբեմն առիթներ կ'ըլլայ որ մարդ
ուկուոյ պէտք կ'ունենայ , կրկնեց Օրսոյ :
Հիմա որ հին բարեկամներ ենք , յու-
սամ որ կ'ընդունիք . . .

— Մտըկի խօսք մի ըներ , պատաս-
խանեց Պրանտոլաչչիոյ կարուկ կերպով
մը :

— Աշխարհքիս մէջ ոսկին ամեն բան
կ'ընէ , վրայ բերաւ Գասդրիգոնի . բայց
մաքիին մէջ կարիճ սիրտ միայն պէտք
է և հրացան մը որ ուղած ատենդ կրակ
առնէ :

— Չեմ ուզեր ձեզմէ բաժնուիլ , դար-
ձեալ կրկնեց Օրսոյ , առանց յիշատակ
մը թողու : Տեսնենք , Պրանտոյ , ի՞նչ
կրնամ ձեզ քեզի :

Աւազակը դուրսը քերեց , խոտորնակ
աչք մը ձգելով Օրսոյի հրացանին վրայ .

— Թէ որ համարձակէի , ըսաւ . . .
բայց չէ , չէ . քեզի ալ շատ կարևոր է :

— Ի՞նչ է ուղածդ :

— Իբր բան չէ . . . բայց զանիկայ գոր-
ծածելու կերպն ալ դիտնալու է : Դեռ

միշտ կը յիշեմ այն անզգամ կրկին
հարուածը՝ մէկ ձեռքով . . . երկու ան-
գամ չըլլուիր անանկ բան :

— Ուզածդ աս հրացանն է . ես ալ
քեզի բերեր էի . բայց կրցածիդ չափ
քիչ դործած է :

— Չէ , չէ , քեզի պէս աղէկ չեմ կըր-
նար դործածել , բայց ապահով եղիր որ
ան ատեն ուրիշ մը ձեռք կը ձգէ ինձ .
մէն այդ զէնքը , երբոր Պրանտոյ Սավէլ-
լի գետինն փռուած ըլլայ :

— Իսկ քեզի , Գասդրիզոնի , ի՞նչ տամ :

— Որովհետեւ բռնի կ'ուզես յիշա-
տակ մը ձգել , Որատիոսի քերթուծիւն
քը կ'ուզեմ՝ ամենափոքր դիրքով . ա-
նիկայ ինձի փոփանք մը կ'ըլլայ և լա-
տին լեզուն ալ մոռցընել չտար ինձի :
Պասդիոյ նաւահանգիստը պզտի աղջիկ
մը կայ որ սիկար կը ծախէ . իրեն տուր ,
անիկայ ինձի կու տայ :

— Շատ աղէկ , ես քեզի էլզէվերի
տպագրութիւն մը դրկեմ . տանելու
դրքերուս մէջ կայ մէկ հատ մը : — Ու-
րեմն , բարեկամք իմ , հարկ է որ բաժ-
նուինք իրարմէ . բարեկամութեան ձեռք
տանք : Թէ որ օր մը ուզենաք Սարտե-

նիա երթալ, գրեցէք խմացուցէք ինծի.
Ն. . . փաստարանը ձեզի հասցէս կու
տայ :

— Պ. տէլլա Ռէպպիա, ըսաւ Պրան-
տոյ, վաղը երբոր նաւահանդատէն կ'ել-
լէք, ճիշդ այս տեղոյն վրայ նայեցէք.
մենք հոս կը դանուինք, և թաշկինակ-
ներով կը բարևենք զձեզ :

Այսպէս ըսելով բաժնուեցան. Օր-
տոյ և իր քոյրը Գարտոյ դարձան, և ա-
ւազակները լեռն ելան :

ԻԱ.

Ապրիլ ամսու աղուոր առաւօտ մը՝
Սըր թովմաս Նէվիլ հաղարապետը, իր
աղջիկն որ քանի մը օրէ 'ի վեր կար-
գուեր էր, և Օրտոյ ու Աղաւնի՝ կառքով
Բիզայէն դուրս ելան ետրուրական գետ-
նափոր գերեզման մը տեսնելու, որ նոր
դանուեր էր և որուն ամեն օտարականք
կ'երթային այցելութեան : Օրտոյ և իր ա-
մուսինը մէջը մտան և սկսան կապարա-
գրչով մէջի նկարքը ուրուագրել. բայց
հաղարապետն ու Աղաւնի հնազիտա-
կան բաներու անտարբեր ըլլալով, զա-

նոնք ներսը ձգեցին ու իրենք դուրսը
կը պտրտէին :

— Ազնիւ Աղաւնի, դուրցեց հազա-
րապետը, շատ ուշ պիտի դառնանք Բի-
զա . անօթի չե՞ս . Օրսոյ և աղջիկս ո՞ դի-
տէ երբ կը լմընցընեն ուրուադրութիւն
նին : Իմ կարծիքս այն է՝ որ սա դիմաց-
նիս տեսած փոքրիկ գիւղական տունն
երթանք . յուսամ որ հաց և ըմպելիք,
թերևս սեր և ելակ ալ կը գտնանք հոն,
և անանկ կը սպասենք մեր ուրուադրող
ներուն :

— Իրաւունք ունիս . պարտաւորեալ
չենք մենք իրենց զոհ ըլլալու : Երթանք
ուրեմն . — է շիտակը դուրցէ, շատ չեմ
փոխուած . նայէ հիմա դիտարկ կը դնեմ,
նորեւուկ զգեստներ կը հագնիմ, զոհա-
րեղէններ ունիմ, ամեն օր նոր նոր բա-
ներ կը սորվիմ . վերջապէս, ալ վայրե-
նի չեմ :

— Անտարակոյս քիչ ատենէն ուրիշ
հարսնիք մ'ալ պիտի ունենանք :

— Ե՞ս կարգուիմ . հապա եղբօրոր-
դիս ո՞վ պիտի դաստիարակէ, երբոր
Օրսոյ զաւակ մը ունենալու ըլլայ . ո՞վ
իրեն գորսիգացիերէն խօսիլ պիտի սոր-

վեցրնէ : . . Այս , գորսիգացիերէն պի-
տի խօսի , և ես սրածայր գլխարկ մը
պիտի շինեմ իրեն , որ բարկացրնեմ
գրեզ :

— Նախ սպասէ որ եղբօրորդի մը ու-
նենաս , անկէ ետքը թէ որ ուզես նէ
թուր գործածել կը սորվեցրնես իրեն :

— Ա՛լ թուրերը տեղերնին կենան ,
պատասխանեց Աղաւնի ժպտելով . հի-
մա իմ ձեռքս հովահար կայ , որպէս զի
մատուրներուդ զարնեմ՝ երբոր երկրիս
վրայ գէշ խօսիս :

Ասանկ խօսակցելով մտան տունը ,
ուր դասն գինի , ելակ և սեր : Աղաւնի
օգնեց վարձուոր կնոջն ելակ ժողվելու ,
ան միջոցին որ հազարապետն աշխա-
դիգոյ կը խմէր : Ծառազարդ ճամբու
մը անկիւնը դարձած միջոցը , Աղաւնի
ծերունի մը տեսաւ աթուի մը վրայ
նստած արևուն առջև . կ'երևար թէ հի-
ւանդ էր , որովհետև թուշերը ներս դա-
ցած էին և աչքերը խորցած . արտա-
քոյ կարգի նիհար էր , և անանկ ան-
շարժ , դունաստ ու սևեռեալ աչքով տես-
նելով զինքը մէկը աւելի դիակ կրնար
կարծել քան թէ կենդանի էակ մը : Ա-

դաւնի անանկ հետաքրքրութեամբ քա-
նի մը վայրկեան վրան նայեցաւ, որ
վարձուոր կիներ դարձաւ ըսաւ իրեն .
— Այս խեղճ ծերը քեզի հայրենակից
է, որովհետև խօսակցութեանդ կեր-
պէն կ'իմանամ որ դորսիդացի ես : Թը-
շուառութիւններ ունեցեր է իր երկրին
մէջ . տղաքը ահաւոր մահ մը ունեցեր
են . կ'ըսեն թէ հայրենակիցներդ անտ-
ղութ են իրենց թշնամեաց դէմ : Այն դի-
պուածէն ետքը մինակ մնալով՝ հոս Բի-
զա եկեր է իր մէկ հեռու ազգական
խաթունի քով, որ այս տան բուն տէրն
է : Ողորմելին քիչ մը խեղքը վախու-
ցած է . դժբաղդութիւնն ու մաղձոտու-
թիւնը . . . : Խաթունը չկարենալով քո-
վը պահել, որովհետև շատ մարդ կ'ըն-
դունի իր տունը, հոս դրկեց զինքը :
Բնաւորութիւնը անոյշ է, և բնաւ նե-
ղութիւն չտար . հազիւ թէ իրեք բառ
կը զուրցէ օրուան մէջ : Ամեն շաբաթ
բժիշկ կու գայ տեսնելու զինքը, և խել-
քին տղայանալը տեսնելով՝ ըսաւ որ եր-
կայն ատեն չտուեր :

— Ուրեմն բանը բուսեր է, զուրցեց
Աղաւնի : Իր վիճակին նայելով՝ մեռնիլն
իրեն համար երջանկութիւն է :

— Թէ որ հետը գորտիգացիներէն խօսիս, ազնիւ օրիորդ, թերևս ակտիւ քիչ մը՝ հայրենեաց լեզուն լսելով:

— Նայինք, ըսաւ Աղաւնի ժպտելով. և մօտեցաւ ծերունւոյն, մինչև որ իր շուքը անոր վրայ ինկաւ: Ան ատեն խեղճ ապուշը աչքերը վեր վերցուց և ուշադրութեամբ մը նայեցաւ Աղաւնիի վրայ. անիկայ ալ իրեն կը նայէր, միշտ ժպտելով: Ծերունին ձեռքը ճակատին շփեց և աչքերը գոցեց. կարծես թէ Աղաւնիի նայուածքէն կը խորշէր: Ետքը արտաքոյ կարգի բացաւ զանոնք. շքր-թունքը կը դողային, ձեռքերը կ'ուզէր տարածել. բայց կարծես թէ Աղաւնիէն դիւթած՝ անշարժ մնաց ակտիւն վրայ, և կարողութիւն չունէր խօսելու կամ շարժելու: Վերջապէս խոշոր արցունքի հատիկներ աչքէն կաթեցին, և հառաչանքներ ելան սրտէն:

— Առաջին անգամ ասանկ կը տեսնեմ զինքը, ըսաւ պարտիզպան կինը: Ետքը ծերուն դառնալով՝ ըսաւ. — Այս օրիորդը քու երկրէդ է. եկեր է զքեզ տեսնելու:

— Գթա՛մ վրաս, աղաղակեց ծերու-

նին խղղուկ ձայնիւ, ողորմէ ինծի. դեռ
դո՛հ չեա: Այն թերթ թուղթն . . . որ
ես այրեր էի . . . ինչպէս կրցար կար-
դալ դու զայն . . .: Բայց ինչո՞ւ համար
երկուքն ալ . . . Օւլանտուչիոյի դէմ
բան չես կրնար կարդացած ըլլալ ան
թղթին մէջ: . . . Պէտք էր մէկը թու-
ղուլ ինծի . . . մէկ հատը միայն . . . դու
Օւլանտուչիոյի անունը կարդացած
չես . . .

— Երկուքն ալ պէտք էր ինծի, ը-
սաւ Աղաւնի ցած ձայնով գորսիգա-
ցիերէն: Ոստերը կտրուեցան, և թէ որ
բունը փտտած չըլլար, զանիկայ ալ քա-
շած հանած էի: Մի գանգատիր վիճա-
կիդ վրայ. ալ երկայն ատեն չես քա-
շեր. ես երկու տարի քաշեցի:

Ծերունւոյն բերնէն աղաղակ մը ե-
լաւ, և գլուխը կուրծքին վրայ ինկաւ:
Աղաւնի դարձաւ և ծանր ծանր քալե-
լով դէպ 'ի տունը դնաց, պաշխադայի
մը այս ծանօթ խօսքերն երգելով. «Մն
ձեռքը պէտք է ինծի՝ որ հարուածը
պարպեց, այն աչքն որ նշան առաւ,
այն սիրտն որ մտածեց » . . .:

Այն միջոցին որ պարտիզական կիներ

ծերունւոյն քով վազեր էր օգնելու, Աղաւնի կենդանի դէմքով և հրացայտ աչքով սեղան նստաւ հազարասպետին դիմացը :

— Ի՞նչ ունիս, հարցուց անգղիացին. ճիշդ անանկ կը տեսնամ զքեզ ինչպէս Բիէդրանէրայի մէջ այն օրն որ կերակրոյ ատենը դատակներ նետեցին նստած սենեակնիս :

— Գորտիդայի յիշատակներ ծնան մտքիս մէջ. բայց անցան դացին : Ես պիտի ըլլամ եղբորորդւոյս կնքամայրն, անանկ չէ : Ո՛հ ինչ աղուոր անուէններ պիտի դնեմ. Կիլիֆուչչիոյ—Թովմաս—Օրտոյ—Լէրն :

Այն վայրկենին պարտիզպան կիներ ներս մտաւ : — Ի՞նչպէս, հարցուց Աղաւնի բոլորովին պաղ արեամբ. մեռա՛ն չէ՞ նէ պարզ մարեցաւ :

— Բան չկայ. բայց ինչպէս զքեզ տեսնելը վրան անանկ տպաւորութիւն ըրաւ :

— Բժիշկը կ'ըսէ թէ երկայն չդիմաւնար :

— Թերեւս և ոչ իսկ երկու ամիս :

— Մեծ կորուստ մը չըլլար, վրայ բերաւ Աղաւնի :

— Որո՞ւն վրայ է խօսքերնիդ, հարցուց հաղարապետը :

— Ինձի հայրենակից ապուշ մարդու մը վրայ, որ հոս թոշակով կ'ապրի, պատասխանեց Սղաւնի անտարբերութեամբ : Երբեմն երբեմն մարդ կը դըրկեմ որ լուր առնեմ վրան : Բայց կ'ազնեմ, պարոն հաղարապետ, քիչ մը ելակ ձգէ եղբօրս և Վիւղիոյ :

Երբոր Սղաւնի ելաւ տնէն ու կառքը մտաւ, վարձուոր կլինը կտոր մը ատեն վրան նայելէն ետքը՝ դարձաւ ըսաւ իր աղջրկանը. — կը տեսնե՞ս սա վայելուշ օրիորդը, ես ապահով եմ որ աչքիլող է :

2256.

2013

